

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԵՐԻ ԷՇՆԵՐԻ

ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՀՈՒՄՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ «ԼՈՌԻ» ՊԱՆՐԻ
ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԿԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՈՐԱԿԻ ՎՐԱ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ե.18.02 –«Կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար

Գիտական ղեկավար՝ տեխ.գիտ.թեկն.

ղոցենտ՝ Լ.Ա.Այդինյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	5
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ	10
1.1 Հասկացություն պանիրների մասին	10
1.2 Բակտերիալ մակարդները և նրանց ընտրման մեթոդները	15
1.2.1 Մակարդների ռերը պանրի արտադրության և հասունացման ժամանակ	15
1.3 Աղաջրային պանիրների արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները	21
1.3.1 Կաթի բաղադրությանը և հատկություններին ներկայացվող պահանջները	21
1.4 Աղաջրային պանիրների հասունացման արագացումը և նրանց արտադրության արդյունավետության բարձրացումը	24
1.5 Պանրազանգվածի չեղդերիզացիան	27
1.6 Պանրազանգվածի կենսաքիմիական փոփոխությունները պանիրների արտադրության և հասունացման ընթացքում	28
1.7 Պանրի աղման և հասունացման ժամանակ ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսները	32
1.8 Հիմնական տեխնոլոգիական պարամետրերի ազդեցությունը պանիրների հասունացման գործնթացի և որակի վրա	34
1.9 Գրականության ակնարկի ամփոփումը	35
ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱԿԱՆ ՄԱՍ	40
2.1 Փորձերի կազմակերպում	40
2.1.1 Աշխատանքի կատարման սխեման	40
2.2 Հետազոտությունների մեթոդները	47

2.2.1	Կաթնաթթվային մանրէների շտամների հատկությունների ուսումնասիրումը	48
2.2.2	«Լոռի» պանրի պատրաստման օպտիմալ պարամետրերի մշակում	49
	ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	50
3.1	Շիճկասերի կազմի և հատկությունների ուսումնասիրումը պանիրների արտադրությանում օգտագործման հետ կապված	50
3.2	Շիճկասերի օգտագործմամբ պանրի յուղային ֆազի կարգավորման հնարավորության ուսումնասիրությունը	60
3.2.1	Տարբեր քանակությամբ շիճկասերի ազդեցությունը պանրի կազմության, որակի և արտադրության տեխնոլոգիական գործընթացների վրա	61
3.2.2	Շիճկասերի համասեռացման ազդեցությունը «Լոռի» պանրի պատրաստման կենսատեխնոլոգիական գործընթացների և որակի վրա	69
3.3	Բակտերիալ մակարդների ազդեցությունը Լոռի պանրի հասունացման գործընթացի ինտենսիվության վրա	74
3.3.1	Կաթնաթթվային մանրէների ֆիզիոլոգ-կենսաբանական հատկությունների ուսումնասիրումը՝ կապված պանիրների համար նախատեսված մակարդներում նրանց օգտագործման հետ	75
3.3.2	Համասեռացված շիճկասերով և հատուկ ընտրված բակտերիալ մակարդով արտադրված «Լոռի» պանրի հասունացման ուսումնասիրումը	84
3.4	Նոր տեխնոլոգիայով «Լոռի» պանրի պատրաստումը արտադրական պայմաններում	99
	ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՐԱՍԻ ՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄԸ	102
	ԳԼՈՒԽ 5. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ	108
5.1	«Լոռի» պանրի արտադրության համար մշակված նոր տեխնոլոգիայի ներդրումից ստացված տնտեսական արդյունավետությունը	108
	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	111

ԱՊԱԶԱՐԿՈՒԹՅՈՒՆ

113

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

114

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ВНИИМС - Всероссийский научно-исследовательский институт метрологической службы

ՀԱԱՀ - Հայաստանի գգային ազրարային համալսարան

ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ

ՍՊԸ- Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ԳՕՍՏ- Պետական ստանդարտ

ՀՀ ՀԱՏ- Հայաստանի հանրապետության ստանդարտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Պանիրը բարձր կենսաբանական և սննդային արժեք ունեցող կաթնամթերք է: Այն հարուստ է օրգանիզմի համար անհրաժեշտ ամինաթթուներով, ճարպաթթուներով, հանքային նյութերով, մեծքանակությանբ դյուրամարս սպիտակուցներով, կաթնայուղով, վիտամիններով:

Պանրագործությունը Հայաստանի տնտեսության ավանդական ճյուղերից է: Հայերը պատմականորեն նախապատվությունը տալիս են աղաջրային պանիրների արտադրությանը, թեև պանրի այլ տեսակները նույնպես լայն տարածում ունեն:

Աղաջրային պանիրների համը սուր աղի է, կազմությունը՝ խիտ, կոտրվող, բայց ոչ փշրվող: Աղաջրային պանիրները հիմնականում յուղալի են, այսինքն՝ յուղի զանգվածային պարունակությունը չոր նյութերում կազմում է 40-50 %:

Տարիների ընթացքում բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարվել աղաջրային պանիրների արտադրության կատարելագործման ուղղությամբ, որոնց արդյունքում մշակվել են նոր տեսակի պանիրների տեխնոլոգիաներ («Լոռի», «Հայկական» և այլն):

Անցյալ դարի 60-ական թվականներից «Լոռի» պանիրը մեծ պահանջարկ ունի Հայաստանում, իսկ վերջին տարիներին այն առավել ևս աճել է:

Ի տարբերություն մյուս աղաջրային պանիրների՝ «Լոռի» պանրի հատիկը չոր է, պարունակում է քիչ քանակությամբ աղ, չափն ավելի փոքր է, իսկ երկրորդ տաքացումը կատարվում է $37-38^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային պայմաններում: «Լոռի» պանրի չոր նյութերում յուղի պարունակությունը 45-50 % է, խոնավությունը՝ աղադրումից հետո՝ 43-45 %: Բացի այդ, «Լոռի» պանիրն ունի առանձնահատկություն. հասունացումը տեղի է ունենում նաև պոլիէթիլենային թաղանթներում, կայուն ջերմաստիճանում, դարակաշարերի վրա, ինչի շնորհիվ հասունացման ժամանակ խոնավությունը գրեթե չի փոխվում:

«Լոռի» պանրի արտադրության ժամանակ կարի չոր նյութերի 48-52%-ն անցնում է շիճուկի մեջ:

Արտադրության արդյունավետության բարձրացման ուղիներից է հումքային պաշարների ավելացումը և ռացիոնալ օգտագործումը: Անթափոն արտադրության կազմակերպումը, որը հիմնված է հումքի ամբողջական վերամշակման վրա, էապես նպաստում է միավոր հումքից ստացվող արտադրանքի քանակի ավելացմանը:

Ներկայումս խիստ արդիական է երկրորդային հումքի՝ շիճուկի, յուղագործական կաթի և թանի մեջ անցած կաթի արժեքավոր բաղադրիչների ամբողջական օգտագործման խնդիրը:

Կաթնայուղի անթափոն օգտագործման համար մեր կողմից առաջարկվում է «Լոռի» պանրի պատրաստման ժամանակ օգտագործել շիճկասեր:

Աշխատանքի հիպոթեզը: Մասնագիտական գրականության վերլուծությունը, ինչպես նաև նախնական հետազոտությունները թույլ տվեցին մշակել «Լոռի» պանրի արտադրության փորձնական տեխնոլոգիա, որը հիմնված է շիճկասերի օգտագործման վրա: Դրա շնորհիվ ազատվում է կաթնայուղի որոշ մասը, բարելավվում է պանիրների որակը, հատկապես կազմությունը՝ ի հաշիվ շիճկասերի հետ ներմուծվող շիճուկային սպիտակուցների, ինչը նույնպես դրական է ազդում պանրի հասունացման ժամկետի վրա: Շիճկասերի լրացուցիչ համասեռացումը թույլ է տալիս ստանալ ավելի մեծ քանակությամբ պանիր: Վերջինիս որակը բարելավելու, ինչպես նաև հասունացումն արագացնելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ ընտրված բակտերիալ մակարդներ:

Աշխատանքի նպատակը և ուսումնասիրության խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը «Լոռի» պանրի տեխնոլոգիայի կատարելագործումն է և որակի բարելավումը ի հաշիվ համասեռացված շիճկասերի և հատուկ ընտրված բակտերիալ մակարդների:

Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է՝

- ուսումնասիրել շիճկասերի քիմիական կազմը և հատկությունները՝ կապված աղաջրային պանիրների արտադրությունում դրա օգտագործման հետ,
- հետազոտել շիճկասերի տարրեր չափաբաժնների ազդեցությունը պանրի հասունացման և որակի վրա,
- սահմանել շիճկասերի համասեռացման օպտիմալ ռեժիմը,

- մշակել համասեռացված շիճկասերի օգտագործմամբ աղաջրային պանիրների տեխնոլոգիական պրոցեսների օպտիմալ ցուցանիշները,
- պանիրների հասունացման ընթացքում ուսումնասիրել հիմնական մանրէաբանական և կենսաքիմիական պրոցեսները,
- հետազոտության արդյունքները ներդնել արտադրությունում,
- որոշել տնտեսական արդյունավետություն:

Գիտական նորույթը: Աշխատանքում ապացուցված է «Լոռի» պանրի արտադրությունում շիճկասերի օգտագործման հնարավորությունը: Սահմանված են շիճկասերի օգտագործմամբ արագ հասունացող «Լոռի» պանրի արտադրության տեխնոլոգիական պարամետրերը: Ապացուցված է շիճուկային սպիտակուցմերի դրական ազդեցությունը պանրի կազմության բարելավման և հասունացման ժամկետի կրճատման վրա: Հետազոտված են կաթնաթթվային մանրէների շտամների հատկությունները՝ կախված աղաջրային պանիրների արտադրությունում դրանց օգտագործումից, ինչպես նաև ընտրված է հատուկ բակտերիալ մակարդ: Ուսումնասիրված են ինչպես շիճկասերի, այնպես էլ հատուկ ընտրված բակտերիալ մակարդի օգտագործմամբ «Լոռի» պանրում ընթացող հիմնական մանրէաբանական և կենսաքիմիական պրոցեսները: Հիմնավորված է պանրի հասունացման արագացումը:

Աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը: Համասեռացված շիճկասերի օգտագործմամբ «Լոռի» պանրի պատրաստման տեխնոլոգիայի ներդրումը արտադրական պայմաններում հաստատում է կատարված աշխատանքների արդյունավետությունը:

Նոր տեխնոլոգիան հնարավորություն է տալիս խնայել կաթնայուղի որոշ մասը, նվազեցնել շիճուկի մեջ յուղի անցման աստիճանը, որը թույլ է տալիս արդյունավետ օգտագործել երկրորդային հումքը, արագացնել հասունացումը, բարձրացնել որակը, իջեցնել պանրի ինքնարժեքը, այսինքն՝ արտադրությունը դարձնել ավելի արդյունավետ:

Նոր տեխնոլոգիայով 1 տ պանրի արտադրության տնտեսական արդյունավետությունը կազմում է 94,25 հազ. դրամ:

Ուսումնասիրության օբյեկտը:Հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել են կաթը, կաթնասերը, «Լոռի» և «Չանախ» պանիրների արտադրությունից ստացված շիճուկը, շիճկասերը, ընդունված տեխնոլոգիայուվ պատրաստված «Լոռի» պանիրը, շիճկասերի կիրառությամբ ստացված «Լոռի» պանիրը, կաթնաթթվային մանրէների շտամները և բակտերիալ մակարդը:

Աշխատանքի փորձագնահատումը: Ատենախոսության արդյունքները ներկայացվել, քննարկվել են անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի, բուսաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի, սննդի արդյունաբերության սարքավորումների, փաթեթավորման, կաշվի ու մորթու տեխնոլոգիայի ամբիոնների համատեղ նիստում, պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի գիտական խորհրդում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կազմակերպված միջազգային գիտաժողովում (2013 թ.):

Հրապարակումներ: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հրատարակված 3 գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, գրականության ակնարկից, հետազոտությունների արդյունքներից, գրականության ցանկից (135 անվանում), հավելվածներից:

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքի 125 էջում, ներառում է 34 այլուսակ, 9 գծապատկեր:

Հետազոտությունների նյութը և մեթոդ: Լաբորատոր հետազոտությունները կատարել ենք ՀԱԱՀ անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնում և կենդանական ծագման հումքի և մթերքների արոբլեմային լաբորատորիայում: Կիսաարտադրական փորձերը կատարել ենք ՀԱԱՀ Բալահովիտի ուսամնափորձնական տնտեսության կաթի գործարանում, իսկ արտադրական փորձարկումները՝ «Էլոլա» ՓԲԸ-ում և «Մարիլա» ՍՊԸ-ում / հավելված 1, 2 / :

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Հասկացություն պանիրների մասին

Կաթը կենսաքիմիական բարդ համակցություն է, որը առաջանում է կաթնագեղձի կենսագործունեության շնորհիվ՝ կենդանիների և մարդկանց օրգանիզմում։ Կաթը պարունակում է այն բոլոր նյութերը, որոնք անհրաժեշտ են մարդկանց կենսագործունեության համար [2, 42, 65, 66, 67]:

Կաթը և կաթնամթերքները կարևոր տեղ են գրավում մարդու սննդակարգում, ունեն բարձր կալորիականություն և մեծ սննդ արժեք։ Կաթի հիմնական առանձնահատկություններից են ոյուրամարսելիությունը, բարձր սննդարար և էներգետիկ արժեքները։ Բացի այդ, այն լավ է յուրացվում մարդկանց կողմից, օժտված է մանրէասպան, բուժիչ և դիետիկ հատկություններով [2, 42]:

Կախված լակտացիայի սեզոնայնությունից, կաթի հսկայական կուտակումները խթան հանդիսացան կաթից մթերքների պատրաստմանը, որոնք հնարավոր կլիներ օգտագործել տարվա բոլոր եղանակներին։

Կաթի պահածոյացման հին եղանակներից են կազեինային և յուղային ֆազայի նստեցումը, որն իրականացվում էր որոշ բույսերի և կալիումական, կալցիումական աղերի միջոցով։ Կաթի մակարդումը շրդանաֆերմենտով, պեպսինով պահպանվել է մինչև մեր օրեր։

Լեռնային Հայաստանում աղի հանքերի առկայությունը հնարավորություն տվեցին կաթի սպիտակուցը և յուղը պահածոյացնել չոր աղի կամ աղաջրի միջոցով։

Աղի միջոցով՝ կաթի խտանյութի պահպանումը մարդկանց հնարավորություն տվեց զբաղվել մի նոր ձյուղով՝ պանրագործությամբ։

Կաթնամթերքների մեջ պանիրը յուրահատուկ տեղ է գրավում և հանդիսանում է մարդու սննդաբաժնի հիմնական բաղադրամասերից մեկը։ Պանիրը պարունակում է օրգանիզմի համար անհրաժեշտ բոլոր սննդարար նյութերը՝ սպիտակուցներ, ձարպեր, անփոխարինելի ամինաթթուներ, վիտամիններ, ֆերմենտներ, կալցիումական և ֆոսֆորական աղեր։ Այս նյութերը անհրաժեշտ են մարդու օրգանիզմի նորմալ գարգացման համար, ինչպես նաև ոյուրամարս են և օժտված են զգայորոշման

հատկություններով: Պանրի պատրաստման միջոցով հնարավոր է դաշնում կուտակել կաթի ամենակարևոր բաղադրամասերը՝ յուղային և սպիտակուցային զանգվածը և այս ձևով վերջիններս պահպանել ամիսներ և նույնիսկ տարիներ: Պանիրը համարվում է պահածոյացված առաջին մթերքներից մեկը, որը պահպանվել է ոչ միայն տնային պայմաններում, այլ նաև ճանապարհորդությունների ժամանակ [42,43,44,45,46]:

Անասնաբուծության զարգացման հետ մեկտեղ ստեղծվեցին նաև նորանոր տեսակի պանիրներ: Հայաստանում առավել լայն տարածում գտան մոթալ և չեչիլ տիպի պանիրները [47, 48, 49]:

Բնությունը ստեղծել է կաթի այնպիսի բաղադրություն, որն ապահովում է սերունդի կյանքը, անկախ կենդանու տեսակից, կիմայական պայմաններից, բազմացման արագությունից և այլն:

Կաթի բաղադրության մեջ մտնում են հանքային աղեր (K-ի, Ca-ի, Mg-ի, P-ի, Fe-ի), վիտամիններ (A, B, B₁, PP, C և այլն): Կաթում կան նաև ֆերմենտներ և իմունային մարմիններ, որոնք պահպանում են սերունդը վարակներից [2,42,65,65,67]:

Հայաստանում պանիրների արտադրությունը սկսվել է 19-րդ դարի 2-րդ կեսից, ուր հիմնականում արտադրվում են աղաջրային, շվեյցարական և փափուկ տեսակի պանիրներ, որոնք մեծ պահանջարկ ունեն բնակչության կողմից:

Կաթից պանրի պատրաստումը ընթանում է չորս փուլով:

- Կաթի մակարդում - պրոտեոլիտիկ ֆերմենտների կամ կաթնաթթվի ազդեցության տակ կազեինի միցելան ենթարկվում է ֆիզիկական և քիմիական փոփոխության, որի հետևանքով առաջանում է ցանցանման սպիտակուցային զանգված, որը և կոչվում է մակարդվածք կամ խտանյութ;
- Մակարդվածքից շիճուկի անջատում - մակարդվածքի կտրատումից հետո ձևավորման կամ մամլման միջոցով շիճուկը հեռացվում է, որի արդյունքում առաջանում է պանրազանգվածը;
- Աղում - պանիրները աղվում են չոր աղով կամ աղաջրով;

- Հասունացում - բակտերիալ ծագում ունեցող ֆերմենտների ազդեցության տակ պանրազանգվածում տեղի են ունենում կենսաքիմիական փոփոխություններ [2, 10, 69, 70, 71]:

Վերը նշված չորս փոփերից յուրաքանչյուրի տեխնոլոգիական պարամետրերի փոփոխության շնորհիվ կարելի է ստանալ մեծ քանակությամբ տարրեր տեսակի պանիրներ:

Պանրի կոնսիստենցիան, համը և հոտը խիստ կախված են պանրազանգվածի ակտիվ թթվությունից (pH), մակարդվածքի մեխանիկական մշակումից, մակարդման և հասունացման պայմաններից [5]:

Մինչ այժմ ակնհայտորեն ընդլայնվել է պանրի արտադրությունը, ավելացել է պանիրների տեսականին և բարձրացվել նրանց որակը:

Ամբողջ աշխարհում պանրի շուկայում նկատվում է լուրջ աճ: Պանրի հիմնական արտադրությունը իրականացվում է Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, իենց այդ տարածաշրջաններում էլ նկատվում է տվյալ մթերքի ամենաշատ օգտագործումը: ԱՄՆ-ն և Եվրոպան համարվում են պանրի առաջատար արտադրողները: Պանրի արտահանումը Եվրամիության երկրներից կազմում է համաշխարհային առևտրաշրջանառության մոտ 40 %-ը [56]:

Պանիրների մեջ հատուկ տեղ են գրավում պանրազանգվածի չեղդերիզացումը և ջերմամեխանիկական մշակումը: Դրանց համար բնորոշ է յուրահատուկ շերտավոր կառուցվածքը, որը թույլ է տալիս դրանք չշփոթել մյուս խմբերի պանիրների հետ: Այս խմբի պանիրներից <<-ում առավել տարածված է «Սուլուգունի» պանիրը:

Վերջին տարիներին պանրազանգվածի չեղդերիզացիայով և ջերմամեխանիկական մշակմամբ պանիրները մեծ մասսայականություն են վայելում՝ ընդլայնվում է տեսականին, մեծանում են արտադրության ծավալները: Դա բացատրվում է նրանց մի շարք առավելություններով, որոնցից են հասունացման կարձ ժամկետները, արտադրական պրոցեսների մեջենայացման բարձր մակարդակի ապահովման հնարավորությունը և այլն: Պանրի արտադրության բոլոր փոփերում օգտագործում են ընդհանուր-ձյուղային սարքավորումներ, բացառությամբ

պանրազանգվածի մանրացման, ջերմային մշակման և պատրաստի մթերքի ձևավորման:

Այս խմբի պանիրների առանձնահատկություններն են՝ պանրազանգվածի չեղդերիզացիան, ջերմամեխանիկական մշակումը, ձևավորման ընթացքում մթերքին ցանկացած ձև տալու հնարավորությունը [102]:

Արդեն մի քանի դար շարունակ «Չեղդեր» խմբի պանիրները առաջատար տեղ են զբաղեցնում իրենց կայունությամբ և որակով: Այսօր պանիրների արտադրության համաշխարհային ծավալի 65 %-ը կազմում են այս տեխնոլոգիայով արտադրված պանիրները: Այս պանիրները հիմնականում արտադրվում են ԱՄՆ-ում, Անգլիայում, Ավստրալիայում, Կանադայում, Նոր Զելանդիայում, որտեղ նրանց տեսակարար կշիռը կազմում է արտադրվող պանիրների ողջ ծավալի 80—85 %-ը [56,102]:

Այն դեպքում, երբ կաթը գործարան է հասնում ֆերմաներում նրա ստացումից անմիջապես հետո, այն անհրաժեշտ է հասունացնել: Թարմ կթած կաթն ունի մանրէասպան հատկություններ և պիտանի չէ պանրագործության համար, քանի որ անբարենպաստ միջավայր է համարվում միկրոօրգանիզմների զարգացման համար, վատ է մակարդվում շրդանաֆերմենտով, առաջացնում է թույլ, շիճուկը վատ անջատող մակարդվածք:

Կաթի հասունացման նպատակն է նրա բարելավումը որպես միջավայր մակարդների միկրոֆլորայի և կաթ մակարդող ֆերմենտների զարգացման համար: Հասունացման ընթացքում անհրաժեշտ է՝ ինակտիվացնել կաթի բնական հակաբակտերիալ համակարգերը, միկրոօրգանիզմների մատչելի ազոտային միացությունների առաջացման համար հիդրոլիզացնել սպիտակուցների մի մասը, նվազեցնել օքսիդա-վերականգնման պոտենցիալը, լուծելի վիճակի փոխանցել կալցիումի աղերի մի մասը, մասնակիորեն վերականգնել կազեինի միցելների կառուցվածքը և կազմը, որոնք խախտվել են սառնարանային պահպանման ժամանակ, կալցիումի հաշվին ավելացնել կազեինային միցելների չափսերը [33,38,105]:

Կաթի հասունացման ժամանակ առաջատար դեր է խաղում միկրոֆլորան: Միկրոֆլորայի զարգացման արդյունքում կաթի թթվությունը աճում է 1-2 °Ծ-ով: Ժամանակի և էներգետիկ ռեսուրսների խնայողության նպատակով՝ գործնականում

ավելի հաճախ հասունացման են ենթարկում կաթի միայն մի մասը: Կաթի հասունացումը դրական է ազդում նրա պանրապիտանի հատկությունների վրա, այսինք կաթի մակարդելիությունը՝ շրդանաֆերմենտով, զգալիորեն բարելավվում է, ինչն էլ թույլ է տալիս է ստանալ անհրաժեշտ ամրության մակարդվածք, որն էլ պարզեցնում է նրա մշակումը [2, 43]:

Պանրագործությունում մեծ կիրառություն ստացած կաթի հասունացման պրոցեսը բարելավում է նրա կոլոիդ և քիմիական հատկությունները և կաթը հարստանում է կաթնաթթվային միկրոֆլորայով:

Կաթի հասունացումը կատարվում է երկու եղանակով՝

Հում կաթը պաղեցնում են մինչև $8-10^{\circ}\text{C}$ և պահպանում են այդ ջերմաստիճանում 16-18 ժամ:

Հում կաթը պաստերիզացնում են, պաղեցնում մինչև $20-22^{\circ}\text{C}$, ավելացնում են 1-2% կաթնաթթվային մանրէներից կազմված մակարդ, 1-2 ժամ թողնելուց հետո պաղեցնում են մինչև 10°C և պահպանում են այդ ջերմաստիճանում 8-12 ժամ [19,20,21,22]:

Ս.Ա.Կորոյովը համարում է, որ կաթի հասունացման հիմնական նպատակը կաթնաթթվային բակտերիաների քանակի ավելացումն է: Այդ պատճառով էլ կաթի հասունացման աստիճանը կարգավորելու համար պետք է որոշել միկրոօրգանիզմների ընդհանուր քանակը: $7-12^{\circ}\text{C}$ -ում կաթը 12 ժամ պահելիս միկրոօրգանիզմների ընդհանուր քանակը 70000-ից հասել է մինչև 1մլն [72,73,74]:

Լ.Ա.Այդինյանի կատարած աշխատանքներից երևում է, որ օգտագործելով լիպոլիտիկ ակտիվ բակտերիալ շտամներից պատրաստված մակարդ, կարելի է չեղդերացման պրոցեսը մասնակիորեն տեղափոխել կաթի մեջ, վերջինիս թթվությունը «Չեղդեր» պանրի խմբի համար հասցնելով $23-25^{\circ}\text{C}$, որը մակարդման համար օպտիմալ է և հնարավորություն է տալիս ստանալ բարձրորակ պանրազանգված [8]:

Իսկ Դ.Ս.Գրաննիկովը [36] ապացուցում է, որ կաթի հասունացումը դրական է անդրադարձնում պանրի որակի վրա:

Կաթնաթթվային բակտերիաների աճի և զարգացման շնորհիվ կաթի տիտրվող թթվությունը բարձրանում է $2-3^{\circ}\text{C}$ -ով: Կաթնաթթվային պրոցեսի կարգավորման

համար անհրաժեշտ է կաթին ավելացնել ֆերմենտներ, որոնք սինթեզում են միկրոկոկեր: Կաթի հասունացման ժամանակ կազեինի մասնիկների միջին տրամագծերը մեծանում են, որի վրա մեծ ազդեցություն են թողնում լուծվող կալցիումական աղերը [65, 66, 67]: Կաթի մեջ կալցիումի իոնների ավելացումը բերում է կազեինի միցելի ամրացմանը:

Ա.Ֆ.Վայտկովիչը նշում է, որ օքսիդավերականգնման պոտենցիալի նվազումը պայմանավորված է կաթնաթթվային ստրեպտոկոկերի զարգացումով [30]:

Որոշ հետազոտությունների համաձայն, աշնան և ձմռան կաթը $8-10^{\circ}\text{C}$ -ում պահպանելիս, իջնում է ազատ ամինաթթուների պարունակությունը: Կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ կաթի հասունացման ժամանակ ազատ ամինաթթուները օգտագործվում են կաթի մնայուն միկրոֆլորայի կողմից: Կաթի հասունացման ժամանակ տեղի ունեցող փոփոխությունները կարող են բացասաբար անդրադարձնալ կաթի՝ շրդանաֆերմենտով մակարդման վրա [69]:

Ըստ Ն.Ի.Դունչենկոյի և Պ.Ֆ. Շյաչենկոյի [57,58,59,60,61], կալցիումը առաջնային դեր է խաղում կաթի կազեինի մակարդման գործում: Իր տեսության համաձայն, շրդանաֆերմենտը օգնում է կազեինի մոլեկուլում ֆուֆուամիդային կապի քայլայմանը, որի ընթացքում անջատվում են ֆուֆորական թթվի հիդրօքսիլ խմբերը, որոնք ել օգնում են կազեինի և Ca-ի միացմանը: Կազեինը կալցիումի ազդեցության տակ վերափոխվում է պարակազեինի և առաջանում է մակարդվածք: Ցածր ջերմաստիճանում կաթի մակարդելիությունը իջնում է:

1.2 Բակտերիալ մակարդները և նրանց ընտրման մեթոդները

1.2.1 Մակարդների դերը պանրի արտադրության և հասունացման ժամանակ

Շրդանային պանիրների արտադրության ժամանակ կաթնային մակարդվածքը առաջանում է կաթ մակարդող էնզիմների ազդեցությամբ, սակայն կաթի մակարդման ժամանակ ոչ պակաս կարևոր նշանակություն ունի մակարդների միկրոֆլորայի օգտագործումը: Մակարդների միկրոֆլորան բաղկացած է կաթնաթթվային մանրէների հատուկ ընտրված տեսակներից, որոնք կաթին ավելացվում են պաստերիզացիայից հետո, որը ոչնչացնում է կաթի բնական և ախտածին միկրոֆլորայի մեջ մասը:

Մակարդների միկրոֆլորան պանրի արտադրությունում կատարում է հետևյալ ֆունկցիաները՝ կաթ մակարդող էնզիմների հետ միասին տրանսֆորմացնում է կաթի հիմնական բաղադրիչ մասերը այնպիսի միացությունների, որոնք պայմանավորում են պանրի զգայորոշման ցուցանիշները; սահմանափակում կամ ճնշում են այնպիսի միկրոֆլորայի զարգացումը, որոնք ունակ են վատացնել պանրի որակը և անվտանգության ցուցանիշները; պանրի մեջ ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք ապահովում են կաթի հիմնական բաղադրիչների տրանսֆորմացիան անհրաժեշտ ուղղությամբ; արագացնում են շրդանային մակարդվածքի սիներեզիսը, բարձրացնելով նրա թթվությունը [38,41]:

Մակարդների միկրոֆլորան պետք է օժտված լինի հետևյալ հատկություններով՝ խմորել կաթի ածխաջրատները և ցիտրատները օպտիմալ արագությամբ և խմորման անհրաժեշտ արգասիքների առաջացմամբ; օժտված լինեն որոշակի պրոտեոլիտիկ և լիպոլիտիկ ակտիվությամբ, քանի որ պանիրների համային և բուրմունքային միացությունները հիմնականում առաջանում են կաթի սպիտակուցների և լիպիդների էնզիմատիկ ձեղքման արդյունքում; չառաջացնեն պանրի արատներ; պահպանի իր հատկությունները պահպանման հաստատված ժամկետների ընթացքում; չպարունակի կորլմնակի մանրէներ և բակտերիոֆագեր, որոնք կարող են լիգիրացնել նրանց կազմի մեջ մտնող միկրոօրգանիզմները: Լակտոզայի խմորման արագությունը բնութագրող թթվագոյացնող ակտիվությունը մակարդների կարևորագույն ցուցանիշն է, քանի որ պանրի արտադրության ժամանակ օպտիմալ մակարդակից ցանկացած ուղղությամբ թթվագոյացման արագության շեղումը մեծ վնաս է հասցնում մթերքի որակին [38,39,40,41]:

Պանիրների մշակման ժամանակ տեղի է ունենում ֆերմենտային պրոցեսների կարգավորում ի հաշիվ կաթի մշակման համար տեխնոլոգիական ռեժիմների կիրառման և հատուկ ընտրված բակտերիալ մակարդի ավելացման [96]:

Կաթնամթերքների մեծ մասը պատրաստում են պաստերիզացված կաթից: Պաստերիզացիան ոչնչացնում է բակտերիաների վեգետատիվ ձևերը, այդ պատճառով էլ պաստերիզացված խառնուրդ են ներմուծում բակտերիալ մակարդներ:

Կաթոնամթերքների որակը և սննդարար արժեքը հիմնականում կախված են մթերվող կաթի որակից և օգտագործվող մակարդներից, որոնց մեջ զարգացող միկրոֆլորայով է պայմանավորված պատրաստի մթերքի համը, հոտը և կոնսիստենցիան [30]:

Պանրի արտադրության ժամանակ ավելացված մակարդի ազդեցության ներք պատրաստի մթերքի մեջ ձևավորվում է համը, հոտը, մինչև անգամ պահանջվող կոնսիստենցիան:

Կաթոնարդյունաբերության մեջ մեծ կիրառություն են գտել կաթնաթթվային բակտերիաները, որոնք շատ արագ բազմանում են կաթում և կաթնամթերքներում: Վերջիններս ճեղքում են կաթնաշաքարը մինչև կաթնաթթու, ցնդող թթուներ և արոմատիկ նյութեր՝ դիացետիլ, ացետոին եթեր և այլն, իսկ առաջացած կաթնաթթուն խոչնդուտում է կողմնակի միկրոֆլորայի զարգացմանը: Բացի դրանից, կաթնաթթվային բակտերիաները սպիտակուցները ենթարկում են պրոտեոլիզի, առաջացնելով ազոտ պարունակող միացություններ՝ պեպտոններ, պեպտիդներ, ամինաթթուներ և այլ նյութեր: Կաթնաթթվային բակտերիաների այս հատկությունը շատ կարևոր դեր է խաղում պանիրների արտադրության և հասունացման համար: Պանիրների արտադրության համար անհրաժեշտ կաթնաթթվային բակտերիաների կուլտուրաների ընտրման գործում մեծ աշխատանք են կատարել Զ.Ք.Ղիլանյանը և գործընկերները [45,51]:

Բակտերիալ մակարդ պատրաստելու ժամանակ մեծ ուշադրություն պետք է դարձնել մակարդի թթվության և բակտերիաների պրոտեոլիտիկ հատկությունների վրա [47,48]:

Այս հանգամանքից ելնելով, պատրաստում են հիմնականում երեք տիպի մակարդներ՝

1. Երկրորդ տաքացման բարձր ջերմաստիճանով պանիրների արտադրության համար (թերմոֆիլ);
2. Երկրորդ տաքացման ցածր ջերմաստիճանով պանիրների արտադրության համար (մեզոֆիլ);
3. Աղաջրային և փափուկ պանիրների արտադրության համար:

Բակտերիալ մակարդների շտամների ոչ ճիշտ ընտրությունը կարող է պանիրներում առաջացնել համի և կոնսիստենցիայի արատներ:

Աղաջրային պանիրների պատրաստման համար օգտագործում են այնպիսի մակարդներ, որոնք պարունակում են մեզոֆիլ կաթնաթթվային ստրեպտոկոկներ, որոնց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ էներգետիկ թթվագոյացնողներ (Str. lactis, Str. cremoris) և արոմատագոյացնողներ (Str. diacetillactis, Str.acetoinicus, Str. paracitrovorus, Str. cremoris): Բակտերիալ մակարդների օգտագործումը առանց արոմատագոյացնող ստրեպտոկոկների կարող է բերել բարձր թթվությամբ և ծակոտկեն կոնսիստենցիայով պանրի առաջացմանը: Իսկ թթվագոյացնող միկրոֆլորայի բացակայության դեպքում իջնում է մակարդի ակտիվությունը, որը կարող է բերել վնասակար միկրոֆլորայի զարգացման ինտենսիվացմանը [14]:

Մ.Ս.Կարագույանը նոր տեսակի պանրի՝ «Հայկական» պանրի մշակման ժամանակ մակարդի մեջ օգտագործել է հետևյալ շտամները՝ Str. diacetillactis, Str.bovis, Str. lactis և Lbm.helveticum: Կաթնաթթվային ստրեպտոկոկները և ցուպիկները կուլտիվացվում են միասին: Օպտիմալ չափաքանակ հանդիսացավ 0,7-1%-ը: Մակարդի այդպիսի քանակության դեպքում, հեղինակին հնարավոր եղավ ստանալ ինտենսիվ ընթացող կաթնաթթվային պրոցես, որը բնորոշ է տիպիկ աղաջրային պանիրներին [68]:

Հ.Ս.Աղաբաբյանը «Հայկական» պանրի համար առաջարկել է դրոժներով մակարդ, որը կազմված է կաթնաթթվային բակտերիաների հետևյալ շտամներից՝ Str. thermophilus, Str. bovis, Lbm. plantarum, Lbm. bulgaricus [5]: Դրոժների ավելացումը մակարդին ակտիվացնում է կաթնաթթվային բակտերիաների կենսագործունեությունը, պահպանում է նրանց կենդանի ավելի երկար ժամանակ: Կաթնաթթվային բակտերիաների տեղական շտամների վրա պատրաստված հեղուկ կոմբինացված մակարդները Ա.Ս.Վոլկովան և Կ.Վ.Շահբազյանը օգտագործում էին պաստերիզացված կաթից «Զանախ» պանրի ստացման ժամանակ [42]:

Ի.Վ.Կուրաշվիլին կաթնաթթվային ստրեպտոկոկներից և ցուպիկներից կազմված մակարդները օգտագործել է «Վրացական» պանրի արտադրության տեխնոլոգիայի կատարելագործման ժամանակ [75]:

Մակարդի որակը կախված է ոչ միայն նրա տեսական բաղադրությունից, այլև նրա բաղադրության մեջ մտնող շտամների կենսաքիմիական հատկություններից:

Զ.Թ.Մաղաքյանը պաստերացված կաթից պատրաստված «Չանախ» պանրի որակը բարելավեց այնպիսի մակարդների օգնությամբ, որոնք կազմված են պրոտեոլիտիկ ակտիվ, աղակայուն կաթնաթթվային բակտերիաների տեղական շտամներից [44, 45, 46]:

Ո.Ն. Լոմսաղձեն և Ի.Վ.Կուրաշվիլին մակարդների պատրաստման համար ուսումնասիրել են կաթնաթթվային բակտերիաների շտամների հատկությունները՝ աղակայունությունը, կուլտիվացման ժամանակ կաթի մեջ ամինաթթուներ կուտակելու և թթվագոյացման ունակությունները և այլն [79]:

Պանրի մեջ աղի մեծ տոկոսը թուլացնում է մանրէաբանական պրոցեսները: Կան տվյալներ, որ ի տարբերություն այլ պանիրների, որոնց մոտ կաթնաշաքարի քայքայումը տևում է 7-10 օր, 7-8 % աղ պարունակող «Օսեթական» պանրի մեջ այն ավարտվում է մեկ ամսից հետո [43]:

Ուստի աղաջրային պանիրներում կաթնաթթվային պրոցեսների նորմալ ընթացքի համար ցանկալի է օգտագործել այնպիսի մակարդներ, որոնք պարունակում են աղակայուն բակտերիաներ [7,38,44,92]:

Պանրի՝ աղաջրում երկար հասունացման դեպքում, որը կախված է պանրագանգվածի մեջ աղի ինտենսիվ ներթափանցումից և կաթնաթթվային միկրոֆլորայի թուլացումից, առաջանում են անբարենպաստ պայմաններ մանրէների աճի և զարգացման, ինչպես նաև կենսաքիմիական պրոցեսների համար, որի արդյունքում միկրոֆլորայի ծավալը և արոմատագոյացնող բակտերիաների քանակը նվազում է, դանդաղում է կաթնաշաքարի և կիտրոնաթթվի քայքայումը, ինչպես նաև իջնում է աղաջրային պանիրներում պրոտեոլիզի աստիճանը [69]: Այս ամենը բացասաբար են ազդում պատրաստի մթերքի զգայորոշման հատկությունների վրա: Երկար հասունացման դեպքում, աղաջրի մեջ պանիրը ձեռք է բերում ուժեղ աղի համ և կոպիտ կոնսիստենցիա:

Աղաջրային պանիրների որակը, ինչպես նաև մանրէների ֆերմենտատիվ ակտիվությունը բարելավելու համար առաջարկվել է օգտագործել աղակայուն էնտերոկոների շտամներ:

Կաթնարդյունաբերության մեջ կաթնամթերքների պատրաստման համար օգտագործում են ինչպես միաշտամ, այնպես էլ բազմաշտամ մակարդներ: Հաստատված է, որ բազմաշտամ մակարդները արտադրում են ավելի շատ դիացետիլ, քան միաշտամ մակարդները: «Չեղդեր» պանրի արտադրության ժամանակ օգտագործել են միաշտամ և բազմաշտամ մակարդներ և եկել այն եզրակացության, որ բարձրորակ են ստացվել այն պանիրները, որոնք պատրաստվել են միաշտամ մակարդից: Հայտնի է, որ կաթնաթթվային ցուախիկների պրոտեոլիտիկ հատկությունները ավելի ուժեղ են, քան կաթնաթթվային ստրեպտոկոկերինը [8]:

Պանրագործության մեջ նորամուծություն կարելի է համարել Զ.Ք.Ղիլանյանի և Ե.Վ.Գրուշինայի [45] աշխատանքը, նրանք փորձեցին մաքուր կուլտուրաներ մտցնել ոչ միայն կաթի մեջ, այլ պանրի հատիկի մեջ, որն էլ նպաստեց պանրի արտադրության տեխնոլոգիայի պարզեցմանը և արտադրական պրոցեսների մեջենայացմանը: Պանրի հատիկի մեջ մաքուր կուլտուրայի ավելացումով կարելի է հետևողականորեն կարգավորել պանիրներում ընթացող կենսաքիմիական պրոցեսները:

Պանրի պատրաստման ժամանակ պանրազանգվածի մեջ անցնում են երկու տիպի մանրէներ: Մանրէների գերակշռող մասը պանրի մեջ է ներմուծվում մակարդի ծևով, որոնք անհրաժեշտ են համային հատկությունների առաջացման համար, բացի վերը նշվածից պանրազանգվածի մեջ են ընկնում մնացորդային և արտաքին միջավայրի միկրոֆլորան: Վերջինիս պատճառով էլ պանիրները ծեռք են բերում այս կամ այն տիպի արատներ:

Այսպիսով, հենվելով տարբեր հետազոտությունների վրա, մի շարք գիտնականներ եկան այն եզրակացության, որ բակտերիալ մակարդների ընտրության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ գործոններին՝ ցնդող թթուների, կաթնաթթվի, ածխաթթու գազի և ազատ ամինաթթուների առաջացմանը, մանրէների պրոտեոլիտիկ ակտիվությանը, մթերվող կաթի որակին, համի առաջացմանը և կոնսիստենցիային [44,45,47,48]:

1.3 Աղաջրային պանիրների արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները

1.3.1 Կաթի բաղադրությանը և հատկություններին ներկայացվող պահանջները

Պանիրների արտադրությունում որոշիչ գործոն են համարվում վերամշակվող կաթի քիմիական կազմը, ֆիզիկական հատկությունները և մանրէաբանական ցուցանիշները: Այդ գործոնները որոշում են կաթի պանրապիտանիությունը, այսինքն նրա ունակությունը մակարդվելու, առաջացնելու անհրաժեշտ ամրության մակարդվածք:

Պանրապիտանիությունը կախված է ոչ միայն կաթի կազմից և հատկություններից, այլև պանիրների կենսատեխնոլոգիայի առանձնահատկություններից, որոնց արտադրության համար այն օգտագործվում է: Այսպես՝ պինդ պանիրների արտադրությունում, յուղաթթվային մանրէների սպորներով ախտոտվածությունը և շրդանային մակարդելիությունը, համարվում են կաթի պանրապիտանիության կարևորագույն ցուցանիշները, իսկ կաթնաթթվային պանիրների արտադրությունում դրանք որոշակի դեր չեն խաղում: Այդ պատճառով, խոսելով կաթի պանրապիտանիության մասին, նկատի են ունենում այն կաթը, որը նախատեսված է պինդ պանիրների արտադրության համար: Հարկ է նշել, որ արտադրության զարգացման մակարդակը, ժամանակակից տեխնոլոգիաները, արդի սարքավորումները թույլ են տալիս պինդ՝ շրդանային պանիրներ ստանալ գործնականում ցանկացած որակի կաթից: Սակայն էլիտային պանիրների, վառ արտահայտված տեսակային առանձնահատկություններով պանիրների ստացման ժամանակ անհրաժեշտ է որպես հումք օգտագործել բարձրորակ կաթ:

Յուղի և սպիտակուցի (հիմնականում կազեինի) որոշակի պարունակությունը մեծ նշանակություն ունի պանրի ելքի ստացման համար, քանի որ պանիրների արտադրությունում օգտագործվում է հենց այդ սպիտակուցը, որը պանրի մեջ է անցնում պարակագեինկալցիումֆոսֆատային կոմպլեքսի տեսքով: Շիճուկային սպիտակուցները աննշան քանակով են կլանվում շրդանային մակարդվածքի կողմից: Կաթի մեջ կազեինի պարունակությունը ազդում է շրդանային մակարդվածքի

կառուցվածքա-մեխանիկական հատկությունների վրա: Պանրագործության համար կարևոր նշանակություն ունի կաթի մեջ կազեխի պարունակության հարաբերությունը յուղին, քանի որ այդ ցուցանիշից է կախված պանրի յուղայնությունը:

Որակյալ մակարդվածքի ստացման համար կաթը պետք է պարունակի բավարար քանակությամբ մակրո և միկրոէլեմենտներ: Կաթի մեջ պարունակվում են կալիումի, կալցիումի, նատրիումի, մագնեզիումի, ցինկի, երկաթի, ֆոսֆորի անօրգանական և օրգանական թթուների աղեր և այլն: Գերակշռում են ֆոսֆորաթթվային (ֆոսֆատներ), կիտրոնաթթվային (ցիտրատներ) և քլորային (քլորիդներ) աղերը, որոնք կաթի մեջ գտնվում են իոնո-մոլեկուլային և կոլոիդային լուծույթների տեսքով:

Պանրագործության համար հատուկ նշանակություն ունի կաթի մեջ կալցիումի և ֆոսֆորի պարունակությունը, որոնք անհրաժեշտ են նորմալ ամրության մակարդվածքի ստացման համար:

Որպես ամփոփում պետք է նշել, որ պանրապիտանիությունը լայն համալիր է հասկացություն է և բնութագրվում է առողջ կենդանիներից ստացված թարմ կաթի նորմալ մանրէաբանական ու ֆիզիկաքիմիական վիճակով [43,95,101]:

Աղաջրային խնճի պանիրները հատուկ պանիրներ են, որոնց հասունացումը և պահպանումը կատարվում է աղաջրի մեջ:

Զ.Ք.Դիլանյանը առաջարկել է նրանց անվանել աղաջրի միջավայրում հասունացող պանիրներ [43]: Աղաջրային պանիրներից են՝ «Չանախ», «Բրինզա», «Լոռի», «Թուշինյան», «Օսեթական», «Երևանյան», «Վրացական», «Իմերեթական» և «Տեղական Կովկասյան» պանիրների մեծամասնությունը:

Միջավայրը, որտեղ ընթանում է պանիրների հասունացումը և հետագա պահպանումը, ապահովում է նրանց յուրահատուկ հատկությունները, ինչպիսիք են՝ համը, կոնսիստենցիան:

Աղաջրային պանիրները պատրաստում են կովի, ոչխարի և այծի կաթից, ինչպես նաև նրանց խառնուրդից:

Պանրապիտանի կաթի օգտագործումը աղաջրային պանիրների արտադրութան մեջ հիմնական պայմաններից մեկն է համարվում [43]: Պանրապիտանի է այն կաթը,

որը հեշտությամբ մակարդվում է շրդանաֆերմենտի կամ պեպսինի ազդեցությամբ: Կաթի պանրապիտանելիությունը կախված է սպիտակուցի և կաթնայուղի հարաբերակցությունից, որը պետք լինի 1:1.2:

Պանրապիտանելիությունը կաթի ֆիզիկաքիմիական, կենսաքիմիական, մանրէաբանական և զգայորոշման հատկությունների ամբողջությունն է: Այդ հատկությունները կախված են կենդանու տեսակից, ցեղից, առողջական վիճակից, կերակրման և խնամքի պայմաններից, տեխնոլոգիական և սանհտարահիգիենիկ պայմաններից, կաթի տեղափոխումից, պահպանումից և այլն [4, 13, 52, 104, 105]:

ВНИИМС-ի վերջին հետազոտությունները ապացուցում են, որ պանրապիտանիությունը կախված է ջերմաստիճանից, տիտրվող թթվությունից, սոմատիկ բջիջների քանակից, ինհիբիրացված նյութերի նշանակությունից, ռեդուկտազայի և շրդանային փորձերից, սպորների քանակից, մեզոֆիլ անաերոր բակտերիաներից [107]:

Պանրագործության համար շատ կարևոր է կաթի մակարդվող հատկությունը: Կաթի թույլ շրդանային մակարդելիությունը կարելի է ուղղել՝ ավելացնելով CaCl_2 կամ մեկտեղակալված ֆոսֆորային $\text{Ca}(\text{H}_2\text{PO}_4)_2$ [43]:

Ըստ Գ.Դ.Մյունիսի և համահեղինակների, կաթի պանրապիտանիությունը դա կաթի մակարդվելն է շրդանաֆերմենտի ազդեցության տակ, պանրի մշակման ժամանակ, որտեղ կարևոր է պանրի արտադրության և հասունացման համար միկրոօրգանիզմների կենսագործունեության պահպանումը [88]:

Բոլոր միկրոօրգանիզմները, որոնք մասնակցում են պանրի արտադրության և հասունացման պրոցեսին, կաթի մեջ՝ պանրի արտադրության համար, պետք է գտնեն բարենպաստ պայմաններ բազմացման համար:

Կաթի նախապատրաստումը նորմալ շրդանային մակարդման ապահովման և կենսաքիմիական պրոցեսների զարգացման համար, անվանում են հասունացում: Կաթի հասունացումը ավարտվում է, եթե այն 10-14 ժամ պահում են $8-12^{\circ}\text{C}$ -ի պայմաններում: Հասունացման ժամանակ միկրոֆլորայի զարգացման հետևանքով փոփոխվում են կաթի ֆիզիկաքիմիական հատկությունները և քիմիական բաղադրությունը, որը արագացնում է նրա մակարդումը շրդանաֆերմենտի

ազդեցության տակ, ստեղծում է բարենպաստ պայմաններ միկրոֆլորայի զարգացման համար և բարձրացնում է պանրի որակը: Հասունացման ժամանակ ավելանում է պոլիազտիդների պարունակությունը, մեծանում է կազեինային կոմպլեքսի չափերը, նվազում է օքսիդավերականգնան պոտենցիալը, կալցիումական աղերի մի մասը անցնում է լուծված վիճակի, կաթի թթվությունը բարձրանում է 1-2 °թ-ով [108]:

Վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում կաթի ֆերմենտների ուսումնասիրնան վրա [50,55]: Կաթի ֆերմենտները, հանդիսանալով ակտիվ կենսաբանական կատալիզատորներ, մեծ նշանակություն ունեն նրա որակական ցուցանիշների և պանրապիտանիության համար

1.4 Աղաջրային պանիրների հասունացման արագացումը և նրանց արտադրության արդյունավետության բարձրացումը

Պանիրների հասունացումը իրենից ներկայացնում է երկարատև գործընթաց, և հասունացման տևողությունը կարելի է կրճատել տարբեր մեթոդներով՝ մակարդի քանակի ավելացմամբ; բակտերիալ մակարդի ակտիվացմամբ; կաթնաթթվային մանրէների առավել ակտիվ շտամների ընտրությամբ; ֆերմենտային պրեպարատների կիրառմամբ; միրկոէլեմենտների օգտագործմամբ, որոնք արագացնում են պանիրների հասունացումը [5,38,50,55,70]:

Կաթի մեջ ավելացվող մակարդի քանակի ավելացումը կարող է արագացնել պանիրների հասունացումը: Սակայն մակարդների մեջ քանակների օգտագործումը կարող է բերել կաթի թթվության կտրուկ բարձրացմանը և պանրի արատների առաջացմանը: [35,71,81]:

Բակտերիալ մակարդի ակտիվացումը կայանում է նրանում, որ պանրի արտադրության համար նախատեսված կաթի մեջ ավելացնելուց առաջ բակտերիալ մակարդը խաչնում են կրկնակի քանակի կաթի հետ և թողնում մեկ ժամ 24-26 °C ջերմաստիճանի պայմաններում: Դրա հետ կապված, կաթով մակարդի նոսրացման ժամանակ նրա թթվությունը նվազում է և մանրէները նորից սկսում են ինտենսիվորեն բազմանալ: Առավել ակտիվ կաթնաթթվային մանրէների ընտրությունը կայանում է

նրանում, որ մակարդի կազմի մեջ ընտրում են պրոտեոլիտիկ ակտիվությամբ օժտված շտամներ: Նրանք առավել ինտենսիվորեն են հիդրոլիզում պանրի սպիտակուցները, ինչը դրական է ազդում այլ մակարդային միկրոօրգանիզմների զարգացման, բիոզանգվածի և բակտերիալ ֆերմենտների առավել արագ կուտակման վրա [38, 43, 44, 70]:

Ֆերմենտային պրեպարատների օգտագործումը խթանում է մակարդի կաթնաթթվային մանրէների, հատկապես բուրմունք առաջացնող ստրեպտակուլերի կենսաքիմիական ակտիվությանը [38, 43]:

Մանրէ-սիմբիոնտների օգտագործումը համարվում է պանրի հասունացման արագացման և նրա որակի բարձրացման հնարավոր եղանակներից մեկը: Այդ նպատակով կարելի է օգտագործել դրոժների որոշ տեսակներ, որոնք սպիրտային խմորում չեն առաջացնում: Կաթնաթթվային մանրէների հետ համատեղ զարգացման ժամանակ դրոժները դրանց մատակարարում են ազոտային սննդով և վիտամիններով: Նրանք օգտագործում են կաթնաթթուն, դրանով իսկ նվազեցնելով վերջինիս ճնշող դերը կաթնաթթվային մանրէների վրա [5]:

Միկրոէլեմենտների օգտագործումը զգալիորեն արագացնում է ֆերմենտների ազդեցությամբ ընթացող պանրի հասունացման գործընթացը: Հիմնական կատոլիտիկ էլեմենտներ են համարվում պղինձը, կոբալտը, մագնեզիումը, նիկելը, յոդը, մոլիբդենը [50,55]:

Միկրոօրգանիզմների զարգացման և նրանց գործողության խթանման համար օգտագործում են ոչ թե առանձին միկրոէլեմենտները, այլ նրանց խառնուրդները [50]:

Զ.Ք.Դիլանյանը համահեղինակների հետ հաստատեց կովի կաթից բրինզա պանրի ստացման տեխնոլոգիան, ուշադրություն դարձնելով բրինզայի որակի համար կաթի հասունացման դերին, ինչպես նաև այն օպտիմալ թթվությանը, որն անհրաժեշտ է զանգվածը հասցնել չեղդերացման աստիճանի [49]:

Հաստատված է, որ կովի կաթից ստացված Բրինզան օժտված է լավագույն բաղադրությամբ և յուրահատուկ համային հատկություններով, երբ նրա թթվությունը նախքան չեղդերիզացիան հասցվում է մինչև $140-180^{\circ}\text{Թ}$: Ոչխարի կաթից ստացված

Բրինզայի համար օպտիմալ տիտրվող թթվությունը այլ է, որովհետև պանիրը օժտված է առավել բարձր բուֆերային տարրությամբ [49]:

Դ.Ս.Ախունդովը և Ա.Ի.Մեխտիկը առաջարկում են գոմեշի յուղազուրկ կաթի և կովի անարատ կաթի խառնուրդից «Բրինզա» պանրի արտադրության տեխնոլոգիան: Ստանալով չոր նյութերում մոտ 40 % յուղի պարունակությամբ բրինզա, հեղինակները ցույց են տվել, որ այն ունի բարձր ելք և լավ որակ: Նրա մեջ պարունակվում են ավելի շատ ազատ ամինաթթուներ, քան կովի կաթից պատրաստված բրինզայի մեջ: Ստեղծված է լրացուցիչ հնարավորություն ստանալ բրինզա պանիր գոմեշի կաթից, որը հարուստ է լիարժեք սպիտակուցներով [11]:

Արտադրության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև պատրաստի մթերքի ելքի և որակի բարելավման համար Երևանի Անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում առաջարկեցին աղաջրային պանիրների մասնակի հասունացումը պոլիմերային թաղանթների մեջ [43]: Այս մեթոդի հիման վրա մշակել են «Հայկական» պանրի տեխնոլոգիան, որը 20-25 օր աղաջրի մեջ գտնվելուց հետո փաթեթավորում են պոլիմերային թաղանթների մեջ: Պանիրը պարունակում է 4-5% աղ: Ըստ հասունացման ժամանակ ընթացող կենսաքիմիական փոփոխությունների, ինչպես նաև տեխնաքիմիական ցուցանիշների, «Հայկական» պանիրը հանդիսանում է աղաջրային պանիրների նոր տեսակ: «Հայկական» պանիրը կեղևազուրկ պանիր է: ՈՒնի կովկասյան պանիրների («Չանախ», «Թուշինյան») զգայորոշման հատկությունները [43]:

Աղաջրային պանիրներից է նաև «Լոռի» պանիրը: Նրա տեխնոլոգիական առանձնահատկությունը երկրորդ տաքացման ժամանակ և շիճուկի անջատումից հետո մասնակի աղումն՝ 600 գ աղ 100 կգ կաթի հաշվով, աղումը աղաջրում՝ 6-8 օրվա ընթացքում և նրա հասունացումը պոլիէթիլենային թաղանթում [44]: Հասուն պանիրը պարունակում է 3,5-4,5 % աղ և մոտ 45 % խոնավություն:

Ա.Ա.Մարտիրոսյանը համարում է, որ «Լոռի» պանիրը՝ տեխնոլոգիական, կենսաքիմիական, ռեոլոգիական և զգայորոշման առանձնահատկություններով, հանդիսանում է բնական պանիրների յուրահատուկ տեսակ և միջանկյալ տեղ է

գրավում աղաջրի միջավայրում հասունացող և հոլանդական պանիրների խմբին պատկանող պանիրների միջև [85,86]:

Նկարագրված է պոլիմերային թաղանթների մեջ հասունացող «Մոլտովական» աղաջրային պանրի մշակման արդյունավետությունը [84]:

Թարմ պանիրները պահում են 4 օր 15%-ոց սպիտակուցներից զուրկ շիճուկային աղաջրում, որի ջերմաստիճանը 12°C է: Պոլիմերային թաղանթներից ազատ խոնավության անջատումից խուսափելու համար անհրաժեշտ է, որ նրանում սկզբնական խոնավությունը չգերազանցի 46-48%: Թաղանթում փաթեթավորված պանիրը հասունանում է $8-10^{\circ}\text{C}$ -ի պայմաններում մինչև 2 ամիս [84]:

1.5 Պանրազանգվածի չեղդերիզացիան

Չեղդերիզացիայի էությունը կայանում է պանրազանգվածում կաթնաթթվային խմորման ակտիվացման մեջ, որի ժամանակ կաթնաշաքարից առաջանում է մեծ քանակությամբ կաթնաթթու: Կաթնաշաքարի խմորման արդյունքում առաջացած կաթնաթթուն փոփոխություններ է կատարում մոնոկալցիումպարակագեինատում և աղաջրային միացություններում, որի արդյունքում էլ պանրազանգվածը դառնում է ավելի փափուկ, ձգվող և շերտավորվող [72,73,74]:

Պանրազանգվածի թթվության արագ բարձրացման դեպքում չեղդերիզացիայի երևույթը կարող է լիովին չափարտվել, և այս դեպքում պանիրը կունենա կծու համ, ինչպես նաև փշրվող կոնսիստենցիա [102]:

Չեղդերիզացիայի ընթացքում տեղի ունեցող կենսաքիմիական փոփոխությունները առաջ են բերում մի շարք ֆիզիկական փոփոխություններ, որի հետևանքով էլ փոփոխվում է պանրազանգվածի կոնսիստենցիան:

Գոյություն ունի չեղդերիզացիայի երկու եղանակ՝

- պանրազանգվածը չեղդերիզացիայի է ենթարկվում շիճուկի հեռացումից հետո տաք ջրի մեջ;
- պանրազանգվածը չեղդերիզացիայի է ենթարկվում տաք շիճուկի մեջ:

Ակտիվ թթվությունը /թհ/ մեծ ազդեցություն է թողնում միկրոօրգանիզմների աճի և զարգացման, ինչպես նաև նրանց արտադրած ֆերմենտների որակական և քանակական կազմի վրա [42]:

Չեղդերիզացիայի ժամանակ կաթնաթթվային պրոցեսների զարգացման արագությունը և մակարդակը կախված են պանրազանգվածի ջերմաստիճանից: Բարձր ջերմաստիճանում՝ $85-90^{\circ}\text{C}$, չեղդերիզացիայի պրոցեսը կանգ է առնում:

Եվ այսպես, որոշ պանիրների արտադրության ժամանակ չեղդարիզացիան համարվում է ամենակարևոր պրոցեսներից մեկը:

Գոյություն ունի չեղդերիզացիայի երեք ջերմաստիճանային ռեժիմ՝ ցածր, միջին և բարձր: Չեղդերիզացվող և հալվող պանրազանգվածով պանիրների արտադրության ժամանակ հիմնականում օգտագործում են չեղդերիզացիայի միջին ջերմաստիճանային ռեժիմը՝ $30-40^{\circ}\text{C}$: Չեղդերիզացիայի բարձր ջերմաստիճանային ռեժիմը՝ $41-49^{\circ}\text{C}$, օգտագործում են «Չեղդեր» պանրի մեքենայացված եղանակով արտադրության ժամանակ [2, 102]:

1.6 Պանրազանգվածի կենսաքիմիական փոփոխությունները պանիրների արտադրության և հասունացման ընթացքում

Պանրազանգվածի նյութերի կենսաքիմիական վերափոխումները տեղի են ունենում մանրէների տարբեր խմբերի էկզո- և էնդոֆերմենտների և ավելի քիչ շրդանային ֆերմենտի, պեպսինի ու վերամշակվող կաթի ֆերմենտների ազդեցությամբ: Հասունացման ընթացքում առավել խորը փոփոխությունների են ենթարկվում կաթնաշաքարը, սպիտակուցները և ձարպերը, ավելի քիչ՝ հանքային նյութերը և վիտամինները [2, 35, 43, 70]:

Պանիրների բոլոր խմբերում կաթնաշաքարը ամբողջությամբ խնորվում է առաջին երկու շաբաթների ընթացքում: Կաթնաշաքարը խնորման է ենթարկվում կաթնաթթվային մանրէների ֆերմենտների ազդեցությամբ, որի արդյունքում առաջանում է կաթնաթթու: Վերջինս պահպանում է միջավայրի ռեակցիան որոշակի

մակարդակի վրա, ինչը խոչընդոտում է նեխող և այլ ոչ ցանկալի մանրէների զարգացմանը [38,39,40,41,64]:

Բուրմունք առաջացնող կաթնաթթվային ստրեպտակոկերով կաթնաշաքարի խմորման ժամանակ ստացվում են քացախաթթու, էթիլ սպիրտ, դիացետիլ, որոնցով պայմանավորված է պանրի համը, և ածխաթթու գազ, որով էլ պայմանավորվում է պինդ պանիրների նկարի առաջացումը:

Կաթնաթթվի առաջացման արագությունը և քանակը կախված են բակտերիալ մակարդի քանակից, կազմից և ակտիվությունից, երկրորդ տաքացման շերմաստիճանից, խոնավության և աղի պարունակությունից: Կաթնաթթվի ելքը պինդ պանիրների արտադրության ժամանակ կազմում է խմորված լակտոզայի ընդհանուր քանակի մոտ 65-70 %-ը: Այսպիսի նվազումը վկայում է այն մասին, որ պանրի հասունացման ընթացքում կաթնաթթուն ենթարկվում է հետագա քիմիական վերափոխումների, որոնց արդյունքում առաջանում են այլ նյութեր:

Կաթնաթթվի կուտակման ինտենսիվությունը ազդում է պանրի pH-ի վրա, որից էլ, իր հերթին, կախված են հասունացման արագությունը, համը, կառուցվածքը, կոնսիստենցիան, այսինքն, պատրաստի պանրի որակը: Բացի կաթնաթթվից, պանրի մեջ փոփոխվում է նաև կիտրոնաթթուն, որը պանրի մեջ է անցնում կաթից: Կիտրոնաթթվի խմորման ժամանակ հիմնականում առաջանում են արոմատիկ նյութեր՝ դիացետիլ, ացետոխին և այլն [101]:

Ինչպես արդեն ասվել է, պանրի որակը հիմնականում կախված է նրա հասունացման ձիշտ ընթացքից: Սպիտակուցը պանրի հիմնական բաղադրիչն է, որն էլ հասունացման ընթացքում ամենաշատն է ենթարկվում փոփոխությունների: Պանրի հասունացման ընթացքում սպիտակուցները ձեղքվում են ինչպես շրդանաֆերմենտի, այնպես էլ կաթնաթթվային միկրոֆլորայի առաջացրած ֆերմենտների ազդեցության տակ [32]:

Ենթադրվում է, որ շրդանաֆերմենտը սպիտակուցները ձեղքում է մինչև պեպտոններ, այսինքն պայմաններ է ստեղծում պրոտեոլիտիկ ֆերմենտների ազդեցության համար, որոնք էլ ձեղքում են պեպտոնները մինչև ամինաթթուներ և ամոնիակ [35,38]:

Մի շարք գիտնականների տվյալների համաձայն Str.lactis-ը և L.casei-ն արագացնում են պանրի սպիտակուցների քայքայումը: Սպիտակուցների քայքայման հետևանքով փոփոխվում են պանրագանգվածի բաղադրիչ մասերը [63,80]:

Կաթնաշաքարը պանրի պատրաստումից հետո խմորվում է՝ առաջացնելով կաթնաթթու, պրոպիոնաթթու, քացախաթթու և այլն: Կախված պանրի տեսակից՝ կաթնայուղը ենթարկվում է օճառացման:

Այս բոլոր պրոցեսների արդյունքում պանրում գտնվող միկրոօրգանիզմների մասնակցությամբ առաջանում են նյութեր, որոնք միմյանց հետ փոխազդեցության մեջ են մտնում և որի արդյունքում պանրում ավելանում են համ առաջացնող բաղադրիչները:

Ազատ ամինաթթուները պանրում առաջանում են հասունացման առաջին փուլում: Պանրի մեջ ազատ ամինաթթուների պարունակությունը կախված է մթերվող կաթի բաղադրությունից և հատկությունից, բակտերիալ մակարդի բաղադրությունից, ինչպես նաև պանրի արտադրության և հասունացման տեխնոլոգիական ռեժիմներից:

Շատ հեղինակների կարծիքով պանիրների միջև համային տարբերությունը պայմանավորված է ազատ ամինաթթուների քանակով, ցածրամոլեկուլյար պեպտիդներով և պոլիազտիդներով [11,14, 24, 39]:

Ի.Ի.Կլիմովսկին [70,71] գտնում է, որ ազատ ամինաթթուները պանրին տալիս են որոշակի համ, բայց նրանք որոշիչ դեր չեն կարող խաղալ համի առաջացման գործում, որովհետև դրանք օժտված չեն այդ հատկություններով: Պանրի համի և հոտի առաջացման համար բացի ազատ ամինաթթուներից կարևոր նշանակություն ունեն նաև ամինաթթուների հետագա քայքայումից առաջացած նյութերը:

Ըստ Գ.Ս.Ինիխովի [65,66,67] և Վ.Ն.Ալեքսեևի [10], պանիրներում ամինաթթուների ճեղքումը կարող է տեղի ունենալ դեգամինացման, դեկարբօքսիլացման, ամիդացման եղանակներով, որոնց արդյունքում առաջանում են

ամոնիակ, ամիններ, ծծմբաջրածին, օրգանական թթուներ և այլ նյութեր, որոնք մասնակցում են պանրի համի առաջացմանը:

Ա.Ի.Չերտարյովը և գործընկերները կարևորել են ծծմբաջրածնի և ամոնիակի դրական ազդեցությունը պանիրների համային հատկությունների առաջացման գործում: Պանիրների համի և հոտի առաջացման գործընթացում, բացի ազատ ամինաթթուներից, նշանակալից դեր են խաղում նաև ազատ ձարպաթթուները [113]:

Շատ հեղինակներ, ուսումնասիրելով պանրում առկա ազատ ձարպաթթուները և կարբոնիլ միացությունները, եկան այն եզրակացության, որ այդ միացությունները մասնակցում են պանրում համային հատկությունների առաջացմանը, սակայն չեն հանդիսանում համի առաջացման հիմնական աղբյուր [7,38,46]:

Վերջին տարիներին շատ հեղինակներ ապացուցել են, որ պանրի համի առաջացման գործընթացում ցնդող ձարպաթթուները հանդիսանում են գլխավոր բաղադրիչներից մեկը [70,71]:

Ֆ.Ենսենը նշում է, որ ազատ ձարպաթթուները համի առաջացման գործոն են հանդիսանում, բայց նույն տիպի պանիրներում, որոնք պահպանված են միևնույն պայմաններում, դրանց քանակը տարբեր է, սակայն պանիրներն իրենց համերով չեն տարբերվում իրարից: Սա նշանակում է, որ ազատ ձարպաթթուները մասամբ են ազդում պանրի համի առաջացման վրա: Որոշ ձարպաթթուներ /օրինակ՝ օլեինաթթուն/ նպաստավոր պայմաններ են ստեղծում որոշ բակտերիաների զարգացման համար /կաթնաթթվային ցուպիկներ և ստրեպտոկոկեր/: Սակայն ցածրամոլեկուլյար ձարպաթթուները /կաթնաթթու, քացախաթթու/ խոչընդոտում են որոշ բակտերիաների աճը: Որոշ միկրոօրգանիզմներ /penic, roqueforti, oidum, lactis/ օգտագործում են ազատ ձարպաթթուներ նյութափոխանակության գործընթացում [62]:

Ազատ ամինաթթուները հանդիսանում են այնպիսի ցուցանիշներ, ըստ որոնց հնարավորին չափով կարելի է որոշել կաթնաթթվային բակտերիաների պրոտեոլիտիկ հատկությունները:

Զ.Բ.Դիլանյանը [51] առաջարկում է շտամների ընտրության ժամանակ անպայման հաշվի առնել դրանց ազատ ամինաթթու արտադրելու կարողությունը:

1.7 Պանրի աղման և հասունացման ժամանակ ընթացող

Ֆիզիկաքիմիական պրոցեսները

Պանիրներն աղում են նրան համապատասխան համ հաղորդելու նպատակով: Աղումը ազդում է նաև մթերքի կառուցվածքի, կոնսիստենցիայի և որակի վրա: Դրա հետ մեկտեղ աղը կարգավորում է պանրում ընթացող մանրէաբանական և կենսաքիմիական գործընթացները, ազդելով նրա զգայորոշման բնութագրերի ձևավորման վրա: Ավելորդ աղումը կտրուկ դանդաղեցնում է պանրի հասունացման գործընթացը, պանրազանգվածը սկզբում խոնավանում է մակերևույթից, այնուհետև դառնում է չոր և փխրուն: Անբավարար աղման դեպքում ստացվում է գերխմորված պանիր:

Պանրի աղադրման ժամանակ հիմնական ֆիզիկաքիմիական գործընթացներն են համարվում աղի դիֆուզիան պանրի մեջ, խոնավության օսմոտիկ տեղափոխումը պանրից աղաջրի մեջ, պանրազանգվածի ջրազրկումը և ուռչեցումը, աղի փոխազդեցությունը սպիտակուցային նյութերի հետ: Այս գործընթացները փոխսկապակցված են և ընթանում են միաժամանակ:

Աղաջրային պանիրների յուրահատկությունը կայանում է նրանում, որ դրանց աղումը, հասունացումը և պահպանումը ընթանում է աղաջրում: Աղը հանդիսանում է ոչ միայն պանրի համային ավելացուցիչ, այլև ազդում է պանրի մեջ ընթացող մանրէաբանական և կենսաքիմիական պրոցեսների վրա:

Պանրի և աղաջրի փոխհարաբերությունը ուսումնասիրել է Վ.Ն.Քյուրքչյանը: Նա հաշվի է առնում, որ պանրի ջրային մասերը և աղաջուրը իրենցից ներկայացնում են անբաժան ֆազեր: Երկար շիման հետևանքով աղի տոկոսային պարունակությունը՝

պանրի և աղաջրի մեջ, գործնական հավասարվում են: Երեք ամիս հասունացած «Զանախ» և «Թուշինյան» պանիրների մոտ տարբերությունը 2% է, իսկ 2 ամսեկան «Բրինզայի» մոտ՝ հավասարվում է [76,77]:

Ըստ Վ.Ն.Քյուրքչյանի, պանրի և աղաջրի փոխհարաբերության ավելացման մակարդակը կախված է փոխհարաբերության ընթացքից, պանրի և աղաջրի քանակական փոխհարաբերությունից, ակտիվ թթվությունից, ջերմաստիճանից, խտությունից և աղաջրի բուֆերայնությունից [76,77]:

Զ.Ք.Ղիլանյանը առաջարկում է «Զանախ», «Թուշինյան», «Կորինյան» և «Օսեթական» պանիրները ինքնամամլումից հետո տեղափոխել 17-18%-ոց աղաջրի մեջ: Այդպիսի պանիրները արագ իջեցնում են աղաջրի կոնցենտրացիան, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է 5-7 օրը մեկ ավելացնել աղի քանակը [43]: Բացի դրանից, աղաջուրը շատ արագ հարստանում է այն նյութերով, որոնք նրա մեջ են անցնում շիճուկից, որի հետևանքով բարձրանում է նրա թթվությունը: Ուստի թարմ պանիրների աղման ժամանակ աղաջուրը պետք է չեղոքացնել կամ էլ փոխել: Առաջին 12-15 օրը աղաջրի ջերմաստիճանը չպետք է գերազանցի 10-12 °C:

Հետազայում աղված պանիրները տեղափոխում են 15-16%-ոց կոնցենտրացիայի աղաջրի մեջ և պահում են արդեն 12-15 °C-ից բարձր ջերմաստիճանում: Եթե պանիրները պատրաստում են պաստերացված կաթից, ապա աղաջրի ջերմաստիճանը կարելի է բարձրացնել մինչև 14-16 °C: Աղաջրի մեջ տեղի է ունենում պանիրների ինքնուրույն հասունացում, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է խիստ հսկել նրա ջերմաստիճանը և կոնցենտրացիան [43]

Պանրի՝ աղաջրում աղման և պահպանման պրոցեսը, ֆիզիկայի որոշ ոլորտներում ուսումնասիրվել է Զ.Թ.Մաղաքյանի կողմից: Աշխատանքի մեջ կատարվել են պանրի խոնավության կորստի տեսական հաշվարկ՝ օսմոսի և դիֆուզիայի օրենքների համաձայն: Տեսական հաշվարկները ապացուցվել են պրակտիկ արդյունքներով [83]:

Այսպիսով, երբ պանիրը գտնվում է աղաջրի մեջ, կատարվում են երկու հակառակ պրոցեսներ՝ աղի դիֆուզիա աղաջրի մեջ և մթերքից շիճուկի անցում աղաջրի մեջ [8, 38]:

Զ.թ.Ղիլանյանը ապացուցել է, որ պանրի աղման ժամանակը կախված է պանրի չափերից, նրա արտաքին մակերեսից, պանրի խոնավությունից, ջերմաստիճանից, աղաջրի կոնցենտրացիայից և աղի քանակից, որը նախատեսված է ստանդարտով այս կամ այն տեսակի պանիրներ համար [43]:

1.8 Հիմնական տեխնոլոգիական պարամետրերի ազդեցությունը պանիրների հասունացման գործնթացի և որակի վրա

Հայտնի է, որ պատրաստի պանրի հասունացման և որակի վրա առաջին հերթին ազդում են կաթի որակը, ինչպես նաև բակտերիալ մակարդը: Կաթնաթթվային մանրէների օպտիմալ զարգացման համար կարևոր նշանակություն ունեն տեխնոլոգիական գործոնները՝ երկրորդ տաքացման ջերմաստիճանը, հասունացման տևողությունը և այլն: Այս պայմանները խիստ կապված են իրար հետ և մեկի խախտումից փոփոխվում են նաև մյուսները [2, 38, 43] :

Երկրորդ տաքացման ջերմաստիճանից է կախված պանրազանգվածի մշակման ժամանակ նրա ջրազրկումը: Հաստատված է, որ 45°C -ում պանրահատիկի մշակման ժամանակ ջրի պարունակությունը իջնում է $2,46\%$ -ով, մինչև 55°C ՝ $6,62\%$ -ով, իսկ մինչև 75°C ՝ $10,14\%$ -ով [38,43] :

Երկրորդ տաքացման ջերմաստիճանը բարձրացնելիս պանիրներում լուծվող միացությունների և ոչ սպիտակուցային ազոտային միացությունների քանակը պակասում է, որը մանրէների տեսակի և որակի փոփոխման արդյունք է:

Երկրորդ տաքացման բարձր ջերմաստիճանի դեպքում պանրում առաջանում է հաճելի համ, ստացվում է ավելի խիտ կոնսիստենցիա:

Երկրորդ տաքացման ցածր ջերմաստիճանի դեպքում պանրազանգվածի թթվությունը բարձրանում է, ստացվում է կարագանման կամ շոռանման կոնսիստենցիա [127] :

Աղաջրային պանրի որակի վրա ազդող գործոններից ամենակարևորը հասունացման ջերմաստիճանն է և հիմանականում այն տատանվում է $10-16^{\circ}\text{C}$ սահմաններում:

Պանիրներում ջուրը գտնվում է երկու ձևով՝ ազատ և կապված: Կապված ջուրը մեծ նշանակություն ունի պանրի կոնսիստենցիայի ձևավորման համար, իսկ ազատ ջուրը կարևոր գործոն է հանդիսանում պանրում միկրոֆլորայի զարգացման համար:

Յուրաքանչյուր պանրի համար գոյություն ունի օպտիմալ խոնավապարունակություն՝ մամլումից հետո և պատրաստի մթերքում: Օպտիմալ խոնավություն ունեցող պանիրների մոտ լավ է արտահայտված համը, հոտը և ունեն լավ կոնսիստենցիա: Պանրի կոնսիստենցիան կախված է ոչ միայն հասուն պանրի խոնավությունից, այլ նաև սպիտակուցային նյութերի խորը ճեղքման արգասիքների տեսակից և քանակից [33, 38 ,43, 86] :

ԵՎ այսպես, պանիրների հասունացման ջերմաստիճանի մասին հետազոտողների միակարծիք որոշում չկա, մի քանիսի կարծիքով պանիրները պետք է հասունացնել 3-4 ամիս՝ $10-12^{\circ}\text{C}$ -ում, իսկ մյուսների կարծիքով՝ $6-8^{\circ}\text{C}$ -ում 4-ից ավել ամիս [127]:

1.9 Գրականության ակնարկի ամփոփումը

Բերված գրականության ակնարկի մեջ ցույց է տրված, որ աղաջրային պանիրները իրենցից ներկայացնում են օպտիմալ համային և տեխնոլոգիական առանձնահատկություններով բնական պանիրների տարածված խումբ:

Վերջին տարիներին մեր երկրում և արտասահմանում կատարվել են շատ հետազոտություններ պանիրների տեխնոլոգիան բարելավելու, ինչպես նաև պանիրների որակը և արտադրության արդյունավետությունը բարձրացնելու համար:

Կան շատ աշխատանքներ, որոնք նվիրված են որակի բարձրացման համար տարբեր առաջադեմ տեխնոլոգիական ռեժիմների կիրառմանը, հասունացման արագացմանը, ինչպես նաև աղաջրային պանիրների արտադրության արդյունավետության բարձրացմանը [7, 8, 14, 45, 75, 78, 88] :

Կարելի է հաշվել, որ յուղը և նրա հիդրոլիզի արդյունքում ստացված նյութերը աղաջրային պանիրներում կազմում են ըստ զանգվածի 20-25 %: Այդ պատճառով էլ

արտադրության ակտուալ պրոբլեմ է հանդիսանում յուղի ռացիոնալ օգտագործումը ինչպես աղաջրային, այնպես էլ բնական պանիրների արտադրության ժամանակ:

Ընդհանրապես, կաթի արդյունաբերությունում կաթնայուղի ռացիոնալ օգտագործումը ցանկացած նթերքի պատրաստման ժամանակ ունի առաջնակարգ նշանակություն: Կաթնայուղի առկայության կարևորությունը կաթի և կաթնամթերքների մեջ սահմանվում են հետևյալ 4 գործոններով՝ տնտեսական նշանակությամբ, սնուցող հատկությամբ, համով և յուղի պայմանական առկայությամբ [106]: Պանրի պատրաստման ժամանակ կաթնայուղը ամբողջովին չի անցնում մթերքի մեջ:

Կաթնայուղի մի մասը մնում է շիճուկի մեջ, որի հետևանքով էլ իջնում է նրա օգտագործումը պանրագործության մեջ:

Շիճուկի մեջ յուղի անցման աստիճանը որոշվում է հիմնականում յուղագնդիկների դիսպերսայնությամբ և պանրի պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկություններով, որոնցից հիմնականը պետք է համարել շրդանային զանգվածի որակը, նրա պատրաստվածության աստիճանը հատիկադրման և ինտենսիվ մշակման ժամանակ:

Զգտելով պահպանել յուղը, շիճուկը սերզատում են, որն օգտագործում են տարբեր կաթնամթերքների արտադրության համար: Շիճուկից ստացված սերը ունի քաղցրավուն համ՝ շիճուկի յուրահատուկ համով: Թարմ սերի թթվությունը տատանվում է 15 °թ-ից մինչև 17 °թ և կախված է յուղայնությունից:

Շիճուկի սերզատումից ստացված սերը իր բաղադրությամբ և հատկություններով տարբերվում է սովորական սերից: Նրա մեջ պարունակվում են 3-4%-ից քիչ չոր յուղագուրկ նյութեր: Շիճուկում կազեինը գործնականում բացակայում է: Շիճկասերը ունի ցածր ջերմակայունություն, քանի որ նրա սպիտակուցային ֆրակցիան ներկայացված է հիմնականում ջերմակայուն շիճուկային սպիտակուցներով: Շիճկասերը օգտագործում են շիճկակարագի, հալած պանիրների և պաղպաղակի արտադրության մեջ:

Ավելի առաջադեմ է համարվում ալազմայի փոխարինմամբ շիճկասերի վերամշակման տեխնոլոգիան [15,16,17]: Դրա համար մինչև շիճկասերի մշակումը, նրանց որակի բարելավման և սպիտակուցային ֆազի ջերմակայունության

բարձրացման համար կատարվում է պլազմայի մեկ կամ երկփոխարինում: Այդ փոխարինումը կատարում են յուղագուրկ կաթով կամ ջրով խառնման ձանապարհով, ինչպես նաև խառնուրդի հետագա սերզատումով: Պլազմայի միավոխարինման ժամանակ շիճկասերին խառնում են չպաստերացված մինչև 10°C պաղեցված յուղագուրկ կաթ, որպեսզի խառնուրդի յուղայնությունը չբարձրանա 3,5 %-ից:

Ստացված խառնուրդը տաքացնում են մինչև $35\text{-}40^{\circ}\text{C}$ և սերզատում: Պլազմայի թթվության բարձրացման դեպքում / $25\text{-}30^{\circ}\text{C}$ / կատարում են շիճկասերի կրկնակի լվացում: Դրա համար շիճկասերը խառնում են 10°C -ի ջրի հետ, մինչև խառնուրդի յուղայնությունը հասնի 3,5%-ի, որից հետո $35\text{-}40^{\circ}\text{C}$ -ում սերզատում են: Խառնուրդի սերզատումից ստացված սերի պլազման կրկնակի փոխարինում են յուղագուրկ կաթով՝ վերը նշված մեթոդով [98]:

Փորձեր են կատարվել ցածր երկրորդ տաքացման ջերմաստիճանով պանիրների պատրաստման ժամանակ օգտագործել շիճկասեր: Շիճկասերը օգտագործել են Կոստրոմյան պանրի պատրաստման ժամանակ՝ մինչև 15 % յուղի փոխարինմամբ: Հետազոտել են շիճկասերի ազդեցությունը շրդանային զանգվածի ռեոլոգիական և սիներետիկ հատկությունների, ինչպես նաև յուղի ֆազի կայունության վրա: Շիճկասերի քանակի ավելացման հետ մեկտեղ իջնում է կայունության հատկությունը և շիճուկի անջատումը դանդաղում է: Կաթի շիճկասերով մինչև 35% նորմալացման դեպքում դեստաբիլացված յուղի քանակը նորմալացված կաթում չէր գերազանցում նրա ելքի քանակից [23] :

Շիճկասերի օգտագործումով մշակված Կոստրոմյան պանրի տարբերիչ առանձնահատկությունը հանդիսանում է նրա մեջ խոնավության աճ՝ $1,5\text{-}2$ %-ով մեջ:

Ա.Կ.Բոնդարենկոյի փորձերում այսպիսի պանիրների առանձին տեսակներ ունեցել են քսվող կոնսիստենցիա, թթու և սուր համ: Այդպիսի հատկությունների առաջացումը հեղինակը բացատրում է պանրում խոնավության բարձրացմամբ: Դրա վերացման համար առաջարկվում է ցածր երկրորդ տաքացման ջերմաստիճանով պանիրների մշակման ժամանակ, երբ օգտագործում են շիճկասեր, այդ երկրորդ տաքացման ջերմաստիճանը $1\text{-}2^{\circ}\text{C}$ -ով բարձրացնել [23] :

Աղաջրային պանիրներում՝ հասունացման ժամանակ, խոնավության պահպանումը պետք է հանդիսանա դրական գործոն: Ինչպես նշված է գրականության ակնարկում, աղաջրում երկարատև հասունացման ժամանակ պանիրները կորցնում են մեծ քանակությամբ խոնավություն: Նրա մասնակի պահպանման օգտագործման մեթոդները այդպիսի պանիրներում պետք է ազդեն մթերքի կոնսիստենցիայի բարելավման և որակի լավացման վրա:

Ավանդական աղաջրային պանիրների մեծամասնությունը տարբերվում են ամուր և էլաստիկ կոնսիստենցիայով: Մեր կարծիքով յուղի մասնակի փոխարինումը, կբարձրացնի սպիտակուցների ջուր կլանելու հատկությունը և այդ ամենով կնպաստի պանրի մեջ խոնավության պահպանմանը: Դա բացատրվում է նրանով, որ շիճկասերը պարունակում է 0,7-0,8 % շիճուկային սպիտակուցներ: Շիճկասերի նախնական պաստերացման բարձր ջերմաստիճանը /85-90°C/, որն անհրաժեշտ է բակտերիոֆագերի, կաթնաթթվային միկրոֆլորայի զարգացման հնարավորությունները կանխելու համար, բերում է շիճուկային սպիտակուցների մասնակի դենատուրացման և կաթի շրդանային մակարդման ժամանակ նրանց հետագա կոագույացիային: Անցնելով այս ճանապարհով, սկզբում շրդանային մակարդվածքի, որից հետո պանրի մեջ, սպիտակուցները՝ օժտված լինելով խոնավության պահպանման բարձր ունակությամբ, ուժեղացնում են պանրազանգվածի խոնավության պահպանման ունակությունը:

Այսպիսով, շիճկասերի օգտագործումը աղաջրային պանիրների արտադրությունում նպաստում է ոչ միայն բարձրարժեք կաթնայուղի հեռացմանը, որն օգտագործվում է բարձր յուղայնությամբ սերակարագի, թթվասերի և այլ կաթնամթերքների ստացման համար, այլև լավացնում է պանիրների որակը:

Հարկ է նշել, որ գործնական հետաքրքրություն է ներկայացնում շիճկասերի նախնական համասեռացումը՝ մինչև նրա օգտագործումը պանիրների արտադրությունում: Յուղի դիսպերսայնությունը բարձրացնելու ժամանակ այդպիսի վերամշակումը պետք է նշանակալից բարձրացնի նրա՝ պանրազանգվածի մեջ անցման աստիճանը: Շիճկասերի դիսպերսացված յուղը պետք է ավելի ակտիվ ադսորբացվի ազրեգատային կազեինի միցելների վրա, իշեցնելով յուղի անցումը շիճուկի մեջ՝ պանրազանգվածի հետագա վերամշակման դեպքում:

Վերը նշված առաջարկները թույլ տվեցին առաջ քաշել գիտական մի հիպոթեզ, որի էությունը կայանում է հետևյալում. կաթի յուղային ֆազի մասնակի կամ լրիվ փոխարինումը շիճկասերով, որը առավել արդյունավետ է և նպատակահարմար ավանդական աղաջրային պանիրների արտադրության համար: Այդպիսի փոխարինումը պետք է ուժեղացնի պանրագանգվածի հիդրօֆիլ հատկությունները, բարձրացնի մթերքի որակը, բարելավի նրա կոնսիստենցիան, ինչպես նաև պակասեցնի միավոր արտադրանքի համար ծախսը:

Ելնելով վերը նշվածից՝ մեր աշխատանքի նպատակը կայանում է՝ շիճկասերի օգտագործմամբ, ավանդական Լոռի պանրի տեխնոլոգիայի մշակման և հետազոտման մեջ:


- Տրված գիտական խնդրի լուծման հիմնական փուլերը հետևյալն են՝
- ուսումնասիրել շիճկասերի բաղադրությունը՝ կախված աղաջրային պանիրների արտադրության ժամանակ նրա օգտագործումից;
 - ուսումնասիրել շիճկասերի տարբեր քանակների ազդեցությունը պանրի պատրաստման գործընթացի, բաղադրության և հատկությունների վրա;
 - մշակել շիճկասերի օգտագործմամբ Լոռի պանրի ստացման առավել արդյունավետ տեխնոլոգիա;
 - ստուգել հետազոտությունների արդյունքները արտադրական պայմաններում;
 - կատարել տնտեսական արդյունավետության հաշվարկ:

ԳԼՈՒԽ 2 .ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ


2.1 Փորձերի կազմակերպումը

2.1.1 Աշխատանքի կատարման սխեման

Ինչպես նշել ենք լաբորատոր հետազոտությունները կատարել ենք ՀԱԱՀ Անասնաբուժական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնում և Կենդանական ծագման հումքի և մթերքների պրոբլեմային լաբորատորիայում: Կիսաարտադրական փորձարկումները կատարել ենք ՀԱԱՀ Բալահովիտի ուսումնա-փորձնական կաթի գործարանում, իսկ արտադրական փորձարկումները և «Էլոլա» ՓԲԸ-ում և «Մարիլա» ՍՊԸ-ում: Հետազոտությունների անցկացման ընդհանուր սխեման բերված է գծ. 1-ում: «Լոռի» պանրի պատրաստման տեխնոլոգիական գործընթացների սխեման բերված է գծ. 2-ում:



ԳՃ. 1. Հետազոտությունների անցկացման ընդհանուր սխեմա



Գձ. 2 «Լորի» պանրի պատրաստման տեխնոլոգիական գործընթացների սխեման

Աշխատանքի սկզբում ուսումնասիրել ենք շիճկասերի կազմը և հատկությունները՝ կապված Լոռի պանրի արտադրությունում դրա օգտագործման հետ։ Շիճկասերը ստացվել է «Լոռի» և «Չանախ» պանիրների արտադրությունից ստացված թարմ շիճուկի սերզատումից ($35-40^{\circ}\text{C}$ -ում): Պանրի արտադրությունից ստացված շիճուկում որոշվել է յուղի, սպիտակուցի, կաթնաշաքարի և այլ չոր նյութերի զանգվածային բաժինը։ Այդ շիճուկից ստացվել է սեր, որի մեջ որոշվել է յուղի զանգվածային բաժինը, թթվությունը, չոր յուղագործ կաթնային մնացորդը, խտությունը և մածուցիկությունը։

Ֆիզիկա-քիմիական հատկությունների բնութագրման համար որոշվել են շիճկասերից և կաթնասերից անջատված յուղի հիմնական հաստատունները։ Յուղի մեջ որոշվել են օճառացման թիվը, յոդային թիվը, Ույխերտ-Մելսի թիվը, Պոլենսկու թիվը, հալման ջերմաստիճանը, պնդացման ջերմաստիճանը, ռեֆրակցիայի թիվը, ինչպես նաև ձարպաթթունների պարունակությունը։

Ուսումնասիրվել է շիճկասերի որակը պահպանման ժամանակ, որի համար ստացումից $24, 48, 72, 96$ և 120 ժամ հետո որոշվել է կաթնասերի և շիճկասերի տիտրվող և ակտիվ թթվությունը (pH): Սերը պահել ենք $8, 12$ և 18°C ջերմաստիճանի պայմաններում։ Պահպանման համար օգտագործվել է հում և պաստերացված շիճկասեր։

Մանրէների ընդհանուր քանակի որոշման համար շիճկասերը և կաթնասերը պահպանվել են $0, 48$ և 96 ժամ՝ $8, 12$ և 18°C պայմաններում։

Սերի կազմի և հատկությունների հետազոտությունների ստացված արդյունքները օգտագործվել են «Լոռի» պանրի տեխնոլոգիայի մշակման ժամանակ յուղային ֆազի փոխարինմամբ։

Յուղային ֆազի շիճկասերով փոխարինման հնարավորության հետազոտման համար արվող փորձերը իրականացվել են «Լոռի» պանրի արտադրության ժամանակ ըստ հետևյալ սխեմայի՝

- ուսումնասիրվել է շիճկասերի քիմիական կազմը, ֆիզիկաքիմիական հատկությունները;
- ուսումնասիրվել են շիճկասերի տարբեր քանակների ազդեցությունը «Լոռի» պանրի արտադրության և հասունացման գործընթացի վրա;
- ճշտվել են շիճկասերի համասեռացման ռեժիմները աղաջրային պանիրների արտադրությունում;
- պանրի արտադրության ժամանակ օգտագործվող բակտերիալ մակարդների ընտրություն, կազմում և ֆիզիկա-քիմիական, կենսատեխնոլոգիական հատկությունների ուսումնասիրություն;
- հետազոտվել են համասեռացված շիճկասերի և հատուկ ընտրված կաթնաթթվային մանրէներից կազմված բակտերիալ մակարդների ազդեցությունը «Լոռի» պանրի հասունացման գործընթացի և որակի վրա:

Յուղայի ֆազի շիճկասերով փոխարինման հնարավորության ազդեցության ուսումնասիրման համար կատարվել են միշարք տեխնոլոգիական փորձեր երեք տարբերակներով՝

առաջին տարբերակ - յուղի 10 %-ի փոխարինում շիճկասերով;

երկրորդ տարբերակ - յուղի 20 %-ի փոխարինում շիճկասերով;

երրորդ տարբերակ - յուղի 30 %-ի փոխարինում շիճկասերով:

Ստուգիչ պանիրներն արտադրվել են ավանդական տեխնոլոգիայով՝ առանց շիճկասերի օգտագործման:

Պանիրների պատրաստումն իրականացվել է «Լոռի» պանրի արտադրության համար գործող տեխնոլոգիական պայմանների և հրահանգների համաձայն:

Բոլոր տարբերակների պանիրները արտադրվել են միևնույն կաթից:

Խառնուրդի նորմալացումն ըստ յուղի իրականացվել է ստանդարտ պանրի ստացման համար գործող նորմերի համաձայն:

Պանիրներն արտադրվել են $71-72^{\circ}\text{C}$ -ում պաստերացված կաթից: Մերը պաստերացվել է $85-90^{\circ}\text{C}$ -ում: Խառնուրդին ավելացվել է բակտերիալ մակարդ, կալցիումի քլորիդ և շրդանաֆերմենտ:

Շրդանային մակարդումն իրականացվել է $34\text{-}35^{\circ}\text{C}$ -ում $30\text{-}35$ րոպե տևողությամբ: Հատիկադնումից և հատիկի մշակումից հետո ձևավորել են պանիրը, որը ինքնամամլվել է 6 ժամ: Այնուհետև պանիրը աղվել է $15\text{-}20$ օր և հասունացել է պոլիէթիլենային քաղանթների մեջ / $40\text{-}45$ օր/: Պանիրների արտադրության ժամանակ որոշվել են բոլոր տեխնոլոգիական գործողությունների տևողությունը, շիճուկի կազմը և հատկությունները:

Ինքնամամլումից հետո պանրի մեջ որոշվել են յուղի, խոնավության և ակտիվ թթվության ցուցանիշները:

Փորձնական և ստուգիչ պանիրների հասունացման ընթացքում որոշվել են ակտիվ թթվության, խոնավության, մանրէների ընդհանուր քանակի մեծության դինամիկան: Պանիրները հետազոտվել են $3, 15, 30, 45$ և 60 օրական հասակում:

Հասուն պանիրներում որոշվել են յուղի, խոնավության, ակտիվ թթվության, աղի քանակը և զգայորոշման ցուցանիշները:

Տեխնոլոգիական փորձերի երկրորդ տարբերակը ներառում էր պանրի արտադրության ժամանակ շիճկասերի համասեռացման ռեժիմների ձշտումը: Այստեղ փորձնական արտադրություններն իրականացվել են երեք տարբերակով՝

առաջին տարբերակ – համասեռացում $6\text{-}8$ ՄՊա ձնշման տակ;

երկրորդ տարբերակ – համասեռացում $9\text{-}10$ ՄՊա ձնշման տակ;

երրորդ տարբերակ – համասեռացում $11\text{-}12$ ՄՊա ձնշման տակ:

Որպես ստուգիչ էր հանդիսանում գործող տեխնոլոգիայով ստացված «Լոռի» պանիրը: Բոլոր երեք տարբերակներում շիճկասերը պաստերացվել է $85\text{-}90^{\circ}\text{C}$ -ում:

Այս պանիրների հասունացման ժամանակ որոշվել են յուղի, խոնավության, աղի քանակը, ակտիվ թթվությունը և զգայորոշման ցուցանիշները:

«Լոռի» պանրի բակտերիալ մակարդների կազմման նպատակով ուսումնասիրվել են կաթնաթթվային մանրէների 25 շտամների՝ *Str.lactis*, *Str. bovis*, *Str.cremoris*, *L.lactis*, *Leus. paramesenteroides*, *L.plantarum* և *L. helveticus*, ֆիզիկակենսաքիմիական հատկությունները: Հետազոտության համար նախատեսված շտամները վերցվել են ՀԱԱՀ Կենդանական ծագման հումքի և մթերքների պրոբլեմային լաբորատորիայի մանրէների գենոֆոննի լաբորատորիայից:

Ուսումնասիրվել են ընտրված շտամների թթվագոյացնող ունակությունը (6, 24 ժամ և 7 օր հետո), առաջացած մակարդի ամրությունը և նրա ունակությունը սիներեզիսի նկատմամբ, պրոտեոլիտիկ ակտիվությունը, կաթի մակարդման տևողությունը, դիմակայունությունը կերակրի աղի նկատմամբ: Որոշվել են միջավայրում կուտիվացման ժամանակ շտամների ունակությունը կուտակելու ազատ ամինաթթուներ, ցնդող ձարպաթթուներ և ցնդող բուրավետ նյութեր:

Հաշվի առնելով աղաջրային պանիրների արտադրության և հասունացման առանձնահատկությունները, շտամների հատկությունների ուսումնասիրությունից հետո կազմվել է փորձնական բակտերիալ մակարդ, նրա մեջ ընդգրկելով հատուկ ընդգրկված շտամներ (Str.lactis, Str. bovis, Str.cremoris, L.lactis, Leus. paramesenteroides, L.plantarum և L. helveticus) : Ստուգվել է մակարդի մեջ ընդգրկված շտամների անտագոնիզմը իրար նկատմամբ, ֆենոլի, ինդոլի ու աղի նկատմամբ դիմացկունությունը և այլն:

Մակարդի համար շտամների ընտրության պարտադիր պայման են հանդիսացել պրոտեոլիտիկ և թթվագոյացնող ունակությունը, կայունությունը աղի նկատմամբ, աղաջրային պանիրների համար բնորոշ ազատ ամինաթթուներ կուտակելու ունակությունը:

Շտամների ընտրությունից, փորձնական մակարդի կազմելուց և նրա ուսումնասիրումից հետո սկսել ենք փորձնական պանիրների արտադրության հետ կապված փորձերը՝

- կաթի յուղային ֆազի մասնակի փոխարինմամբ համասեռացված շիճկասերով և հատուկ ընտրված բակտերիալ մակարդի, կալցիումական աղի և պեպսինի կիրառմամբ;

- որպես ստուգիչ է ծառայել ավանդական տեխնոլոգիայով ստացված «Լոռի» պանիրը:

Այդ պանիրներում լրացուցիչ ուսումնասիրվել են լուծվող և լուծվող ոչ սպիտակուցային ազոտի ձևերը, ազատ ամինաթթուների, ցնդող ձարպաթթուների, բարձրամոլեկուլյար ձարպաթթուների, ցնդող բուրավետ նյութերի, ինչպես նաև

մանրէների ընդհանուր քանակի կուտակումը: Պանիրները հետազոտվել են հիմնականում 30, 45 և 60 օրական հասակում:

45-րդ և 60-րդ օրը պանիրները համտեսի են ենթարկվել և որոշվել են դրանց զգայորոշման ցուցանիշները:

Պանիրների արտադրության փորձնական ռեժիմը ստուգվել է արտադրական պայմաններում «Ելոլա» ՓԲԸ-ում և «Մարիլա» ՍՊԸ-ում:

Տնտեսական արդյունավետության հաշվարկը կատարվել է ըստ համապատասխան մեթոդիկաների և ցուցումների [3, 87]:

2.2. Հետազոտությունների մեթոդները

Ժիճկասեր: Յուղի պարունակության որոշումը կատարվել է ըստ ԳՕՍ 5867-69, սպիտակուցի պարունակության որոշումը՝ ըստ ԳՕՍ 23327-78, չոր նյութերի պարունակության որոշումը՝ ըստ ԳՕՍ 3626-73: Հանքային նյութերը որոշել ենք 400-450 °C-ում շիճուկի չորացված նմուշի շիկացմանք, կաթնաշաքարի պարունակությունը՝ Բերտրանի մեթոդով ֆելինգի լուծույթով եռացնելով ըստ վերականգնված օքսիդային պղնձի քանակի: Թթվությունը որոշվել է ըստ ԳՕՍ 3624-67:

Կաթնասեր: Օճառացման թիվը, որը բնութագրում է 1 գ ճարպի օճառացման համար ծախսվող կալիումի հիդրօքսիդի միլիգրամների քանակը, որոշվել է 0.5N աղաթթվի քանակով, որը ծախսվել է կալիումի հիդրօքսիդի սպիրտային լուծույթում գտնվող յուղի նմուշի տիտրման համար:

Քանի որ յողի թվի որոշումը հիմնված է կաթնայուղի օպտիկական հատկությունների հետ չհագեցած ճարպաթթուների աստիճանի փոխհարաբերությունների վրա [114], որոշվել է օպտիկական խտությունը ֆոտոէլեկտրոկալորիմետրի օգնությամբ: Օպտիկական խտության մեծությանը հաշվարկվել է յոդային թիվը [115]:

Ույխերտ-Մեսսլի թիվը որոշվել է 0,1N ալկալու քանակով, որը ծախսվում է ջրում լուծվող ցնդող ճարպաթթուների չեզոքացման համար, որոնք անջատվում են 5 գ յուղից վերջինիս օճառացումից հետո: Ստացված խառնուրդը քայքայվել է գոլորշու օգնությամբ:

Ցնդող, ջրում չլուծվող ցածր մոլեկուլյար ձարպաթուների քանակը բնութագրվում է Պոլենսկու թվով: Այս մեծությունը որոշվել է տիտրման վրա ծախսված ալկալու $0,1\text{N}$ լուծույթի քանակով:

Յուղի հալման և պնդացման ջերմաստիճանը որոշվել է հեղուկ կամ պինդ վիճակի նրա անցումով:

Ձարպաթուների կազմը յուղի մեջ որոշվել է գազահեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով «Քրոմ-4» քրոմատոգրաֆի օգնությամբ:

Մանրէների ընդհանուր քանակը կաթի, սերի մեջ որոշվել է թասիկային մեթոդով ազարով հիդրոլիզացված յուղագուրկ կաթի վրա [5, 99]: 37°C -ում թողնելով 2 օր [122]:

2.2.1 Կաթնաթթվային մանրէների շտամների

հատկությունների ուսումնասիրությունը

Տիտրվող թթվությունը որոշվել է ըստ Ա.Ս. Սկորոդումովայի մեթոդիկայի [99] կուլտիվացումից 6, 24 ժամ և 7 օր հետո:

Մակարդկածքի ամրությունը որոշվել է ՄԵՀԵՐՋԱԿՈՎԻ սարքի միջոցով Զ.Ք.Դիլանյանի գրառմանը՝ որոշակի չափսերի և քաշի կոնը ընկումելով մակարդկածքի մեջ:

Սիներետիկ հատկությունները որոշվել է անջատվող շիճուկի քանակով, որը ստացվում էր 100 մլ յուղագուրկ կաթի և 5 % մանրէների, պեսսինի օպտիմալ պայմաններում և ջերմաստիճանում, մակարդկածքի կտրատումից և 30 րոպե այն թերմոստատում թողնելուց հետո:

Շտամների կողմից ազատ ամինաթթուներ, ցնդող ձարպաթթուներ և ցնդող բուրավետ միացություններ կուտակելու ունակությունը որոշվել է պանիրների նմանատիպ հետազոտությունների համար օգտագործվող մեթոդներով:

2.2.2 «Լոռի» պանրի պատրաստման օպտիմալ պարամետրերի մշակում

Ընդհանուր ազոտի քանակը, լուծվող ազոտի և լուծվող ոչ սպիտակուցային ազոտի ընդհանուր քանակները որոշվել են ԲՀԱԱՄС-ի կողմից մոդիֆիկացված Կյելդալի մեթոդով [100]:

Յուղի, խոնավության և աղի պարունակությունը որոշվել են համապատասխան ԳՕՍ-երով:

Ազատ ամինաթթումերը որոշվել են AAA 339 մակնիշի ավտոմատ ամինաթթվային անալիզատորի օգնությամբ:

Ցնդող ճարպաթթումերի քանակը որոշվել է գազահեղուկային քրոմատոգրաֆիայի մեթոդով քրոմատոգրաֆի օգնությամբ ըստ նախօրոք կազմված կալիբրման կորերի [71]:

Պանրի որակի գնահատումը իրականացվել է ըստ <<ՀՍ 1352-83 «Պանիր Լոռի»-ի: Փորձեր կատարել ենք 3-5 անգամ կրկնությամբ:

Փորձերի արդյունքների վիճակագրական մշակումը իրականացվել է ըստ Ի.Պ.Աշմարինայի մեթոդիկայի [12]:

ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Շիճկասերի կազմի և հատկությունների ուսումնասիրումը պանրի արտադրությունում օգտագործման հետ կապված

Շիճկասերի կազմը և հատկությունները կախված են ելքային շիճուկի կազմից և հատկություններից: Աշխատանքի կատարման ժամանակ իմբնականում օգտագործել ենք աղաջրային պանիրների արտադրությունից ստացված շիճուկը:

Շիճուկի ցուցանիշները բավականին տատանվում էին՝ կախված տարվա եղանակից, կովերի կերակրման կերաբաժնից, մակարդվածքի և պանրահատիկի մշակման ռեժիմներից և այլ գործոններից:

Շիճուկի բնութագիրը, որը ստացվում էր աղաջրային պանիրների արտադրության ժամանակ և որից այնուհետև ստանում էին շիճկասեր, բերված է աղյուսակ 1-ում:

Պանրի թարմ շիճուկը միջին հաշվով պարունակում էր 0,49 % յուղ, 0,79 % սպիտակուց, 4,25 % կաթնաշաքար և 0,64 % հանքային նյութեր: Չոր նյութերի ընդհանուր պարունակությունը շիճուկի մեջ կազմում էր 6,17 %, խոնավությունը՝ 93,83%:

Աղյուսակ 1.

Աղաջրային պանիրների շիճուկի կազմը, %

Շիճուկի հիմնական բաղադրիչների անվանումը	Տատանումները	Միջինը
Յուղ	0,45-0,53	0,49
Սպիտակուց	0,67-0,91	0,79
Կաթնաշաքար	4,2-4,3	4,25
Հանքային նյութեր	0,56-0,73	0,64
Չոր նյութեր	5,91-6,43	6,17
Խոնավությունը	93,66-94	93,83

Ընդ որում շիճուկի առանձին բաղադրիչների պարունակության մեջ շեղումներ էին նկատվում: Հարաբերական մեծությամբ այդ փոփոխությունները տարբեր էին շիճուկի առանձին բաղադրիչ մասերի համար: Առավել մեծ տատանումներ էին

նկատվում շիճուկի յուղի պարունակության մեջ, որտեղ նրա առավելագույն և նվազագույն արժեքների միջև հարաբերությունը կազմում էր 1,18 ինչը ցույց է տալիս այդ ցուցանիշի մեջ տատանումները շիճուկի տարրեր նմուշներում:

Սպիտակուցի և հանքային նյութերի համար նրանց առավելագույն և նվազագույն արժեքների միջև հարաբերության մեծությունը կազմում էր 1,36 և 1,30: Սա ցույց է տալիս, որ շիճուկի այդ ցուցանիշները ևս ենթակա են փոփոխության, սակայն ավելի պակաս աստիճանի:

Շիճուկի մեջ առավել կայուն էր կաթնաշաքարի պարունակությունը, որի առավելագույն և նվազագույն արժեքների միջև հարաբերությունը կազմում էր 1.02:

Շիճուկի առանձին բաղադրիչների պարունակության փոփոխությունները բերում են չոր նյութերի պարունակության փոփոխությունների, որոնք կազմում էին 5,91 % -ից մինչև 6,83% , այսինքն նրանց հարաբերությունը կազմում էր 1,16:

Վերը նշված շիճուկից ստացված շիճկասերի կազմի և հատկությունների բնութագրերը բերված են աղյուսակ 2-ում:

Շիճուկի մեջ յուղի փոքր-ինչ ցածր պարունակությունը ընդունված ցուցանիշի համեմատ բացատրվում է նրա հետագա վերամշակմամբ:

Աղյուսակ 2.

Շիճկասերի կազմը և հատկությունները

Ցուցանիշները	Չափման միավորը	Տատանումները	Միջինը
Յուղ	%	18,2-23,4	20,8
Թթվություն	°Թ	17,0-18,5	17,7
Յուղագուրկ չոր կաթնային մնացորդ	%	3,3-3,8	3,5
Խտություն	կգ/մ ³	1000-1010	1005
Մածուցիկություն	պա·С·10 ³	2,58-2,64	2,61

Մեր հետազոտություններում գործնական և գիտական հետաքրքրություն է ներկայացնում շիճկասերի յուղային ֆազի առավել խորը ուսումնասիրումը:

Կաթնայուղի ֆիզիկա-քիմիական հատկությունների բնութագրման համար որոշել ենք յուղի հաստատունները: Այդ ցուցանիշները հիմնականում բնութագրում են եռալիցերիդների ձարպաթթվային կազմը և նրանց կազմի մեջ մտնող ձարպաթթուների հարաբերակցությունը:

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, շիճկասերի յուղի օճառացման թիվը ավելի մեծ է, քան կաթնասերի յուղինը, ինչը ցույց է տալիս, որ շիճկասերի յուղում ավելի բարձր է ցածրամոլեկուլյար ձարպաթթուների պարունակությունը:

Աղյուսակ 3.

Կաթնասերի և շիճկասերի յուղի հիմնական ֆիզիկա-քիմիական հատկությունները

Ցուցանիշները	Զակիման միավորը	Կաթնասերի	Շիճկասեր
Օճառացման թիվ	0.1N KOH /մգ/1գ	218,4±2,1	226,8±2,9
Յոդային թիվ	գ J ₂ /100գ	32,7±1,9	28,5±1,7
Ույխերտ-Մեյսլի թիվ	մգ / KOH 0.1N 5գ	21,4±2,1	25,5±1,5
Պոլենսկու թիվ	մգ /KOH/ 5գ	3,0±0,4	2,5±0,6
Պնդացման ջերմաստիճան	°C	14,5±0,4	15,7±0,8

Ույխերտ-Մեյսլի թիվը բարձր էր շիճկասերի յուղում: Հետևաբար նրանում պարունակվում է ավելի շատ ցածրամոլեկուլյար ձարպաթթուներ (կարագաթթու և կապրոնաթթու), որոնք ընդունակ են լուծվել ջրում և գոլորշիանալ տաքացման ժամանակ:

Ջրում չլուծվող այլ ցածրամոլեկուլյար ցնդող ձարպաթթուների (կապրիլաթթու, կապրինաթթու և մասամբ նաև լաուրինաթթու) քանակը բնութագրում է Պոլենսկու թիվը: Այս ցուցանիշը շիճկասերի յուղում ամենացածրն էր:

Կաթնայուղը համարվում է հալման տարբեր ջերմաստիճաններ ունեցող եռալիցերիդների խառնուրդ, այդ պատճառով նրա անցումը հեղուկ վիճակի ընթանում էր աստիճանաբար: Այն ավելի արագ էր ընթանում կաթնասերում (միջին հաշվով 24,2 °C-ում): Շիճկասերի յուղի համար այդ ցուցանիշը բարձր էր 1,6 °C-ով:

Ընդունված է համարել, որ յուղի կազմում որքան շատ են չհագեցած և բարձրամոլեկուլյար ճարպաթթուները, այնքան բարձր է բեկման ցուցանիշը, որը վերահաշվարկվում է այսպես կոչված ռեֆրակցիայի թվի:

Շիճկասերի յուղի առավել ցածր ռեֆրակցիայի թիվը բացատրվում է նրանում ավելի բարձր Ռեյխերտ-Մեյսի թվի և ցածր յոդային թվի առկայությամբ:

Շիճկասերի յուղի ֆիզիկաքիմիական հատկությունների բերված բնութագրերը ցույց են տալիս նրանց կազմի մեջ մտնող ճարպաթթուների քանակական հարաբերությունների որոշակի տարբերություններ:

Կաթնասերի և շիճկասերի ճարպաթթուների կոնկրետ կազմը բերված է աղյուսակ 4-ում:

Շիճկասերի յուղը պարունակում էր գումարային առումով ավելի շատ չհագեցած ճարպաթթուներ, որոնց ընդհանուր պարունակությունը կազմում էր 41,6%: Այդ թթուների գումարը կաթնասերի յուղում կազմում էր 34,7%: Այդ տարբերությունները հիմնականում պայմանավորված են օլեինաթթվի պարունակությամբ, որի բացարձակ մեծությունը շիճկասերում բարձր էր 6 %-ով:

Շիճկասերի յուղը բնութագրվում էր ցածրամոլեկուլյար ճարպաթթուների մեջ քանակությամբ: Կարագաթթվի քանակը նրանում ավել էր 0,6 %-ով, կապրոնաթթվինը՝ 0,76%-ով և կապրիլաթթվինը՝ 0,3 %-ով քան կաթնասերի մեջ: Սա կարելի է բացատրել շիճուկի ստացման ընթացքում այդ յուղի մշակման ավելի երկարատև տեխնոլոգիական փուլով և այդ գործընթացում տարբեր լիպոլիտիկ միկրոֆլորայի մասնակցությամբ, այն դեպքում, երբ կաթնասերի յուղը չէր ենթարկվում նախնական մշակումների և ստացվում էր թարմ կաթից:

Այս ամենի հետևանք է հանդիսանում նաև կաթնասերի յուղում բարձրամոլեկուլյար ճարպաթթուների մեջ քանակությունը: Այսպես, օրինակ, նրանում պարունակվում էր 31,8 % պալմիտինաթթու, այն դեպքում, երբ շիճկասերի յուղում նրա պարունակությունը կազմում էր ճարպաթթուների ընդհանուր քանակի 29,7 %-ը:

Ճարպաթուների պարունակությունը
կաթնասերի և շիճկասերի կաթնայուղում

Ճարպաթուներ	Կոդ	Ճարպաթուների պարունակությունը յուղում, % ընդհանուր քանակի նկատմամբ	
		Կաթնասեր	Շիճկասեր
Հագեցած			
Կարագաթու	C _{4:0}	1,3	1,9
Կապրոնաթու	C _{6:0}	1,04	1,8
Կապրիլաթու	C _{8:0}	0,5	0,8
Կապրինաթու	C _{10:0}	1,9	1,7
Լաուրինաթու	C _{12:0}	1,7	1,1
Միրիստինաթու	C _{14:0}	11,9	9,8
Պալմիտինաթու	C _{16:0}	31,8	29,7
Ստեարինաթու	C _{18:0}	10,9	8,1
Ընդամենը		61,04	54,9
Զհագեցած			
Կապրոլեինաթու	C _{10:1}	հետքեր	հետքեր
Լաուրոլեինաթու	C _{12:1}	հետքեր	հետքեր
Միրիստիլեինաթու	C _{14:1}	1,3	1,5
Պալմիտեինաթու	C _{16:1}	3,3	2,1
Օլեինաթու	C _{18:1}	27,9	33,9
Լինոլաթու	C _{18:2}	1,9	3,2
Լինոլենաթու	C _{18:3}	0,3	0,7
Արախիդոնաթու	C _{20:4}	հետքեր	0,2
Ընդամենը		34,7	41,6


Հայտնի է, որ կաթնայուղի ճարպաթթվային կազմը հաստատում չէ և առանձին ճարպաթթուների քանակության փոփոխությունը կախված է կենդանիների ցեղից, հասակից, տարիքից, առողջական վիճակից, կերաբաժնից, լակտացիայի շրջանից, սեզոնից, բնակլիմայական պայմաններից և այլ գործոններից:

Սակայն աշխատանքի ընթացքում կաթնասերի և շիճկասերի ճարպաթթվային կազմի տարբերությունների ստացված արդյունքները կապված են սերի ստացման առաջնային աղբյուրի՝ կաթի և շիճկասերի, առանձնահատկություններից: Ուստի կարելի է ենթադրել, որ կաթնասերի և շիճկասերի առանձին ճարպաթթուների հարաբերական պարունակության փոփոխությունները նրանց համար բնութագրիչ են համարվում:


Հաշվի առնելով, որ մեր հետազոտությունների օբյեկտ է հանդիսացել աղաջրային պանիրների արտադրությունից ստացված շիճուկը, այդ օրինաչափություններն առաջին հերթին վերաբերվում են շիճկասերին: Հնարավոր է, որ այլ տիպի պանիրների (ցածր 2-րդ տաքացման ջերմաստիճանով պանիրներ, բարձր 2-րդ տաքացման ջերմաստիճանով պանիրներ, փափուկ պանիրներ և այլն) արտադրությունից ստացված շիճկասերի համար ճարպաթթվային կազմի տարբերությունները կարող են կրել մի քիչ այլ բնույթ, սակայն հնարավոր է, որ մեր կողմից ստացված որակական տարբերությունների պահպանման ժամանակ նրանք հիմնականում արտահայտված կլինեն այլ քանակական հարաբերակցությամբ:

Արտադրական պայմաններում լուրջ խնդիր է՝ մինչև վերամշակումը շիճկասերի որակական ցուցանիշների պահպանումը: Շիճկասերի որակական ցուցանիշների փոփոխությունների կողմնակի ցուցանիշ կարելի է համարել տիտրվող թթվությունը:

Հաշվի առնելով այդ փաստը՝ ուսումնասիրել ենք շիճկասերի և կաթնասերի տիտրվող թթվության փոփոխությունը՝ կախված պահպանման ջերմաստիճանից և տևողությունից: Հետազոտությունների արդյունքները բերված են գծապատկեր 3-ում և 4-ում: Բնական է, որ բարձր ջերմաստիճանները և պահպանման տևողության ավելացումը բերում էին սերի տիտրվող թթվության աճին: Սակայն թթվության փոփոխությունների տեմպերը կախված էին շրջակա միջավայրի պայմաններից:



ԳՃ.3 Կաթնասերի տիտրվող թթվության փոփոխությունը տարբեր ջերմաստիճաններում պահպանելիս՝ 8°C -ում; 12°C -ում; 18°C -ում:



ԳՃ.4 Շիճկասերի տիտրվող թթվության փոփոխությունը տարբեր ջերմաստիճաններում պահպանելիս՝ 8°C -ում; 12°C -ում; 18°C -ում:

Ավելի քիչ փոփոխությունների էր Ենթարկվում 8°C -ում պահպանված սերը: Այդ ջերմաստիճանում մեկ օր պահպանումից հետո կաթնասերի թթվությունը ավելացել էր ընդամենը $0,7^{\circ}\text{թ-ով}$, իսկ շիճկասերինը՝ $0,1^{\circ}\text{թ-ով}$: 2 օր պահպանումից հետո սերի թթվության ավելացումը կազմում էր համապատասխանաբար $1,5$ և $0,7^{\circ}\text{թ}$: Այնուհետև սերի թթվությունը շարունակում էր աճել և 5 օր պահպանումից հետո այն ավելացել էր կաթնասերի մեջ $6,5^{\circ}\text{թ-ով}$, իսկ շիճկասերի մեջ՝ $5,2^{\circ}\text{թ-ով}$:

Մինչև 12°C ջերմաստիճանը արագացրեց սերի թթվության ավելացման գործընթացը: Արդեն 2 օր պահպանման ընթացքում այն աճեց ավանդական սերի մեջ $6,7^{\circ}\text{թ-ով}$, իսկ շիճկասերի մեջ՝ $4,8^{\circ}\text{թ-ով}$: Այդ ջերմաստիճանում սերի հետագա պահպանումը բերեց տիտրվող թթվության ավելի բուռն աճին, որի արդյունքում 5 օր հետո այն կազմում էր ավանդական սերի մոտ $51,5^{\circ}\text{թ}$ (աճ $35,9^{\circ}\text{թ-ով}$), իսկ շիճկասերի մոտ՝ $36,7^{\circ}\text{թ}$: Ավանդական սերի մեջ թթվության առավել արագ աճը կարելի է բացատրել նրանց մոտ սպիտակուցների բարձր պարունակությամբ:

Սերի թթվությունը էլ ավելի արագ էր աճում 18°C -ում պահպանելիս: Այս տարբերակում արդեն մեկ օր հետո այն ավելանում էր ավանդական սերի մեջ $8,3^{\circ}\text{թ-ով}$, իսկ շիճկասերի մեջ՝ $5,4^{\circ}\text{թ-ով}$: 2 օր պահպանման ընթացքում սերի թթվության տարբերությունը կազմում էր $19,6$ և $11,4^{\circ}\text{թ}$, իսկ 5 օր հետո՝ $69,8$ և $43,2^{\circ}\text{թ}$ համապատասխանաբար ավանդական սերի և շիճկասերի համար:

Ստացված արդյունքները վկայում են, որ պաստերիզացված շիճկասերը նախքան վերամշակումը կարելի է պահպանել պաղեցված վիճակում $8-10^{\circ}\text{C}$ -ում մեկ-երկու օրից ոչ ավել:

Պահպանումից առաջ սերի պաստերացիան դրական ազդեցություն ունեցավ տիտրվող թթվության փոփոխության վրա (այսուակ 5):

Պաստերացված կաթնասերի և շիճկասերի պահպանումը 8°C -ում փոփոխում էր տիտրվող թթվությունը ոչ մեծ սահմաններում: 5 օր պահպանումից հետո այն ավելանում էր կաթնասերում $3,8^{\circ}\text{թ-ով}$, իսկ շիճկասերում՝ $2,0^{\circ}\text{թ-ով}$: 12°C -ում նույն ժամանակահատվածում պահպանելիս թթվության ավելացումը ըստ սերի տարբերակների կազմում էր $14,2$ և $8,9^{\circ}\text{թ}$: Այդ ջերմաստիճանում պաստերացված սերը կարելի է պահպանել մինչև 3 օր, քանի որ այդ ժամանակահատվածում շիճկասերում

այն բարձրացել էր միայն $1,0^{\circ}\text{C}$ -ով: 18°C -ում սերի թթվությունը ավելի ակտիվորեն էր ավելանում: 2 օրվա ընթացքում շիճկասերում այն ավելացել էր $5,4^{\circ}\text{C}$ -ով, 3 օրվա ընթացքում՝ $11,7^{\circ}\text{C}$ -ով, իսկ 5 օրվա ընթացքում՝ $30,1^{\circ}\text{C}$ -ով:

Աղյուսակ 5.

**Պաստերացված սերի թթվության փոփոխությունը՝ կախված պահպանման
ջերմաստիճանից և տևողությունից**

Պահպանման տևողությունը, ժամ	Պահպանման ջերմաստիճանը, $^{\circ}\text{C}$, թթվությունը, $^{\circ}\text{C}$					
	Կաթնասեր			Շիճկասեր		
	8	12	18	8	12	18
0	15,6	15,6	15,6	17,1	17,1	17,1
24	15,9	16,6	17,6	16,7	16,9	17,0
48	16,1	17,3	19,9	16,8	17,5	20
72	16,8	20,5	25,1	17,8	18,1	24,8
96	17,6	24,7	31,9	18,5	23,2	29,9
120	19,8	29,8	38,3	19,1	26	40,2

Սերի մեջ թթվության բարձրացումը կապված է կաթի բակտերիալ ախտոտվածության և նրանում առկա սպիտակուցի քանակի հետ:

Մանրէների ընդհանուր քանակի փոփոխությունը սերի մեջ բերված է աղյուսակ 6-ում:

Շիճկասերի միկրոֆլորայի սկզբնական քանակը $2,1 \times 10^{10}$ անգամ ավելի էր, քան կաթնասերում: Կարելի է կարծել, որ շիճկասերում միկրոֆլորայի սկզբնական բարձր ծավալը նրանում կաթնաթթվային ստրեպտոսկոկային միկրոֆլորայի առկայությունն է, որը պանրի արտադրության ժամանակ ավելացվել է կաթին մակարդի տեսքով:

Նշենք, որ շիճկասերի յուրահատուկ համը և հոտը վերացնելու համար այն 2-3 անգամ նոսրացնում (լվանում) են պաստերացված պաղեցված ջրով կամ յուղազուրկ կաթով:

Մանրէների ընդհանուր քանակի փոփոխությունը՝ կաթնասերի և

շիճկասերի պահպանման ընթացքում

Պահպանման տևողությունը, ժամ	Կաթնասեր		Շիճկասեր	
	8 °C	12 °C	8 °C	12 °C
0	$2,9 \times 10^6$	$2,9 \times 10^6$	$6,2 \times 10^6$	$6,2 \times 10^6$
48	$6,9 \times 10^6$	$1,1 \times 10^7$	$1,3 \times 10^7$	$2,9 \times 10^7$
96	$8,7 \times 10^6$	$3,1 \times 10^7$	$2,1 \times 10^7$	$3,8 \times 10^7$

Կարելի է ենթադրել, որ կաթնասերում միկրոֆլորայի որակական կազմը ավելի բազմազան է և կապված է հում կաթի սկբնական միկրոֆլորայի հետ:

Պահպանման ընթացքում մանրէների ընդհանուր քանակը սերի մեջ աճում է: Շիճկասերի մեջ 8 °C-ում երկու օրվա ընթացքում այն ավելացել է 2,09 անգամ, իսկ 4 օրվա ընթացքում՝ 3,4 անգամ: 12 °C-ում միկրոֆլորայի ծավալը այդ նույն ժամանակահատվածում համապատասխանաբար աճել է 4,6 և 6,1 անգամ:

Կաթնասերի մեջ նույնականացնելու մեջ միկրոֆլորայի ծավալը աճ՝ կապված ջերմաստիճանի և պահպանման տևողության մեջացման հետ:

Պաստերացված շիճկասերի և կաթնասերի բակտերիալ ախտոտվածության փոփոխության տվյալները բերված են աղյուսակ 7-ում:

Պաստերացման արդյունքում սերի միկրոֆլորայի ընդհանուր քանակը նվազել է $2,1 \times 10^3$ միավորով և կազմել է շիճկասերի մեջ 4,1, իսկ կաթնասերի մեջ 2,5 հազար 1 մլ-ում:

Երկու օրվա ընթացքում այդպիսի սերի պահպանումը ավելացրել է միկրոֆլորայի քանակը շիճկասերի մեջ մինչև 24 հազար և կաթնասերի մեջ մինչև 8,8 հազար 1 մլ-ում:

Շիճկասերի պլազմայի փոխարինումը և նրա հետագա պաստերացիան ավելի շատ են նվազեցրել միկրոֆլորայի քանակը:

**12 $^{\circ}\text{C}$ -ում պահպանելիս սերի մշակման ռեժիմների ազդեցությունը նրանց
բակտերիալ ախտոտվածության վրա**

Սերի տեսակը և պահպանման ռեժիմը	Մանրէների ընդհանուր քանակը 1 մլ սերում 0, 48 և 96 ժամ պահպանելուց հետո		
	0	48	96
Շիճկասեր	$6,2 \times 10^6$	$2,9 \times 10^7$	$4,1 \times 10^7$
Պաստերացում 86 $^{\circ}\text{C}$ -ում	$4,1 \times 10^3$	$2,4 \times 10^4$	$7,9 \times 10^4$
Կաթնասեր	$2,8 \times 10^6$	$0,8 \times 10^7$	$2,7 \times 10^7$
Պաստերացում 86 $^{\circ}\text{C}$ -ում	$2,5 \times 10^3$	$8,8 \times 10^3$	$1,9 \times 10^4$

Շիճկասերի կազմի և հատկությունների, ինչպես նաև պահպանման ժամանակ նրանց փոփոխությունների վերաբերյալ այս բաժնում ստացված տեղեկությունները ենթադրում ենք օգտագործել յուղային ֆազի փոխարինմամբ աղաջրային պանիրների տեխնոլոգիայի մշակման, ինչպես նաև այդպիսի պանիրների արտադրության կազմակերպման վերաբերյալ գործնական հանձնարարականների մշակման ժամանակ:

3.2 Շիճկասերի օգտագործմամբ պանրի յուղային ֆազի կարգավորման

հնարավորության ուսումնասիրությունը

3.2.1 Տարբեր քանակությամբ շիճկասերի ազդեցությունը պանրի կազմության, որակի և արտադրության տեխնոլոգիական պրոցեսների վրա

Տեխնոլոգիական փորձերի անցկացման հաջորդ փուլում կատարել ենք յուղային ֆազի մասնակի փոխարինում՝ ավելացնելով անհրաժեշտ քանակի շիճկասեր:

Վերամշակման համար շիճկասերի նախապատրաստման եղանակը, ստանդարտ պանրի ստացման նպատակով, ըստ յուղի խառնուրդի նորմալացման, արտադրության տեխնոլոգիական պարամետրերը և փորձերի տարբերակները նկարագրված են «Հետազոտությունների անցկացման սխեման» բաժնում:

Արտադրվել են պանիրների երեք փորձնական և մեկ ստուգիչ տարբերակներ: Փորձնական պանիրների արտադրության ժամանակ 20%-ոց շիճկասերով է փոխարինվել յուղի 10 %-ը (1-ին տարբերակ), 20 %-ը (2-րդ տարբերակ) և 30 %-ը (3-րդ տարբերակ): Ստուգիչ պանիրները արտադրվել են ըստ ընդունված «Լոռի» պանրի ավանդական տեխնոլոգիայով:

Պանիրների արտադրության տարբերիչ տեխնոլոգիական պարամետրերը բերված են աղյուսակ 8-ում:

Արդեն մակարդվածքի ստացման և վաննայում նրա մշակման փուլում նկատվել են գործընթացի որոշ տարբերություններ:

Խառնուրդի մեջ շիճկասերի քանակության ավելացմանը զուգընթաց տեղի էր ունենում մակարդվածքի ամրության նվազում:

Կաթի մեջ ավելացվող շիճկասերի ազդեցությունը շրդանային մակարդվածքի ռեոլոգիական հատկությունների վրա բավականին մանրանասն ուսումնասիրված է Ա.Կ.Բոնդարենկոյի աշխատանքում [23]: Հաստատվել է, որ կաթի մեջ շիճկասերի քանակի ավելացման հետ մեկտեղ՝ նվազում է դինամիկ մածուցիկության մեծությունը՝ սպիտակուցային մասնիկների զանգվածային ագրեգացիայի շրջանում: Բնական կաթից ստացված մակարդվածքի դինամիկ մածուցիկության մեծությունը կազմում էր $1,491 \cdot 10^{-3}$ Պա/Վրկ, իսկ շիճկասերով յուղի 30 %-ի փոխարինմամբ ստացված մակարդվածքի համար՝ $1,419 \cdot 10^{-3}$ Պա/Վրկ:

Հիմնվելով այդ արդյունքների վրա, մեր աշխատանքում ձգտել ենք հարթեցնել շիճկասերի այդպիսի ազդեցությունը կաթի շրդանային մակարդման վրա մատչելի տեխնոլոգիական գործոնների օգնությամբ: Փորձնական պանիրների արտադրության տարբերակներում ստուգիչ տարբերակի հետ համեմատած ավելացվել է խառնուրդի մեջ լցվող կալցիումի քլորիդի լուծույթի քանակը և 1°C -ով բարձրացվել է խառնուրդի մակարդման ջերմաստիճանը: Օրինակ, ստուգիչ պանրի արտադրության ժամանակ ավելացվող կալցիումի քլորիդի քանակը ընդունվել էր 30 գ/100 կգ վերամշակվող կաթի հաշվով, բակտերիալ մակարդի քանակը կազմում էր 0,6 %, մակարդուն իրականացվում էր 34°C -ում, իսկ երրորդ տարբերակի պանիրների արտադրության

ժամանակ (յուղի 30% փոխարինումը շիճկասերով) կալցիումի քլորիդի քանակը հասել է մինչև 40 գ./100կգ, իսկ մակարդման ջերմաստիճանը բարձրացվել է մինչև 35 °C:

Աղյուսակ 8.

Պանիրների արտադրության տեխնոլոգիական ցուցանիշները

Հիմնական ցուցանիշները	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
Յուղի զանգվածային բաժինը խառնուրդում, %	3,4	3,4	3,4	3,4
Խառնուրդի թթվությունը, °Թ	21	20	20	21
Մակարդման ջերմաստիճանը, °C	35	35	35	34
Բակտերիալ մակարդի քանակը, %	0,6	0,6	0,6	0,6
Շրդանաֆերմենտի քանակը, գ/100 լ	2,5	2,5	2,5	2,5
Կալցիումի քլորիդի քանակը, գ/100 լ	35	35	40	30
Մակարդման տևողությունը, րոպե	30	32	35	30
Մակարդվածքի ամրությունը գ/սմ ³	0,6-0,7	0,6-0,7	0,6-0,7	0,7-0,9
Հատիկադրման տևողությունը, րոպե	17	17	20	15
Պանրի հատիկի չափսը, մմ	8-10	8-11	8-11	8-10
Հատիկի մշակման տևողությունը մինչև 2-րդ տաքացումը, րոպե	20	20	20	20
Երկրորդ տաքացման ջերմաստիճանը, °C	37	38	38	37
Երկրորդ տաքացման տևողությունը, րոպե	10-13	9-10	10-12	10-15
Հատիկի մշակման տևողությունը տաքացումից հետո, րոպե	19	21	22	18
Հատիկադրման և հատիկի մշակման ընդհանուր տևողությունը, րոպե	63	66	70	60
Շիճուկի թթվությունը մշակման վերջում, °Թ	14,5	15	16	14
Յուղի միջին զանգվածային բաժինը շիճուկում, %	0,47	0,41	0,44	0,53
Պանրի ինքնամամլման տևողությունը, ժամ	6	6	6	6

Պանիրների արտադրության այսպիսի պայմանների օգտագործման դեպքում փորձնական պանիրների մակարդվածքը՝ ավելացվող շիճկասերի քանակի աճին

գուգընթաց, դաշնում էր ոչ այնքան խիտ: Համապատասխանաբար փոփոխվում էր նաև խառնուրդի շրդանային մակարդման տևողությունը:

Շիճկասեր պարունակող մակարդվածքը կտրատում էին ավելի զգուշորեն, ձգտելով չխախտել պանրային հատիկների կառուցվածքը: Այդ պատճառով հատիկադրման գործընթացը փորձնական տարբերակներում ավելացվել էր 2-5 րոպեով:

Չնայած նրան, որ փորձնական պանիրների արտադրության ժամանակ 2-րդ տաքացման ջերմաստիճանը 1°C -ով բարձր էր, քան ստուգիչինը, պանրի հատիկի մշակման հետագա տեխնոլոգիական փուլերի տևողությունը փորձնական պանիրներում ավելանում էր:

Ըստ ավելացվող շիճկասերի քանակի՝ հատիկադրման և հատիկի մշակման ընդհանուր տևողությունը պանրավաննայում առաջին, երկրորդ և երրորդ տարբերակների համար ստուգիչ պանրի համեմատ ավելացել էր համապատասխանաբար 3, 6 և 10 րոպեով:

Յուղի զանգվածային բաժինը արտադրված պանիրներից ստացված շիճուկում տատանվում էր 0,41 մինչև 0,47 % սահմաններում, իսկ ստուգիչում՝ այդ ցուցանիշը կազմում էր 0,53%: Քանի որ երկրորդ տարբերակով մշակված պանրից ստացված շիճուկի յուղայնությունը ամենացածրն էր, ուստի շիճկասերի ավելացման օպտիմալ չափաբանակը կազմում է 20%:

Պանիրների կազմը ինքնամամլումից հետո բերված է աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9.

Պանիրների կազմը ինքնամամլումից հետո

Ցուցանիշները	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
Յուղի զանգվածային բաժինը չոր նյութերում, %	$51,1 \pm 0,2$	$50,4 \pm 0,2$	$50,0 \pm 0,1$	$51,9 \pm 0,1$
Խոնավության զանգվածային բաժինը, %	$46,4 \pm 0,2$	$46,9 \pm 0,2$	$47,5 \pm 0,2$	$46,1 \pm 0,2$
Ակտիվ թթվությունը, pH	$5,4 \pm 0,02$	$5,36 \pm 0,02$	$5,32 \pm 0,02$	$5,44 \pm 0,02$

Պանիրներում յուղի պարունակության առանձնակի տարբերություններ չեն նկատվել: Ստորգիշ պանրում յուղի զանգվածային բաժինը չոր նյութերում կազմում էր 51,9%, իսկ փորձնական պանիրներում այն տատանվում էր 50,0-ից մինչև 51,1% սահմաններում:

Ուսումնասիրությունների ընթացքում հաշվի ենք առել նաև խոնավության սկզբնական պարունակությունը ստորգիշ և փորձնական տարբերակներում: Խառնուրդի մեջ շիճկասերի ավելացումը հանգեցրեց այդ ցուցանիշի որոշակի բարձրացմանը: Ընդ որում ստորգիշ պանրի խոնավությունը ինքնամամլումից հետո կազմում էր միջին հաշվով 46,1%: Առաջին տարբերակի պանրում նրա արժեքը բարձրացել էր 0,3%-ով, երկրորդ տարբերակում՝ 0,8%-ով և երրորդում՝ 1,4%-ով, այսինքն շիճկասերով կաթնայուղի փոխարինման քանակի ավելացման հետ մեկտեղ պանիրների խոնավության զանգվածային բաժինը ավելանում էր:

Փորձնական պանիրները պարունակում էին ավելի շատ կաթնաշաքար, ինչը կարելի է բացատրել նրանցում խոնավության ավելի բարձր պարունակությամբ: Հնարավոր է, որ խոնավության պարունակության այդ փոփոխությունները ազդում էին փորձնական և ստորգիշ պանիրների ակտիվ թթվության մեծության վրա: Երկրորդ տարբերակի պանիրներում ակտիվ թթվության միջին մեծությունը կազմում էր 5,36, իսկ ստորգիշ պանրում՝ 5,44:

Հասունացման ընթացքում բոլոր պանիրներին բնորոշ էին ակտիվ թթվության մեծության ընդհանուր փոփոխություններ (աղյուսակ 10):

Այդ ցուցանիշի նվազագույն արժեքը պանիրներն ունեին 3 օրական հասակում, որից հետո ակտիվ թթվության մեծությունն անընդհատ աճում էր: Հասուն պանիրներում pH-ի մեծության սկզբունքային տարբերություններ չեն եղել: Ստորգիշ պանրում ակտիվ թթվության միջին արժեքը եղել է 5,32՝ 15օր աղաջրում պահելուց հետո, իսկ փորձնական պանիրներում այն տատանվում էր 5,2-ից մինչև 5,28 սահմաններում: Սակայն հասունացման առանձին փուլերում, հատկապես սկզբնական շրջանում, փորձնական պանիրների ակտիվ թթվությունը ցածր էր: Հետագա հասունացման ընթացքում այդ տարբերություններն աստիճանաբար գրեթե վերանում էին:

Աղյուսակ 10.

Ակտիվ թթվության մեջության փոփոխությունը պանիրների հասունացման
ժամանակ (pH)

Պանրի հասակը, օր	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
3	$5,4 \pm 0,02$	$5,36 \pm 0,02$	$5,32 \pm 0,02$	$5,44 \pm 0,02$
15	$5,28 \pm 0,02$	$5,24 \pm 0,02$	$5,2 \pm 0,02$	$5,32 \pm 0,02$
30	$5,32 \pm 0,02$	$5,28 \pm 0,02$	$5,24 \pm 0,02$	$5,36 \pm 0,02$
45	$5,35 \pm 0,02$	$5,31 \pm 0,02$	$5,28 \pm 0,02$	$5,39 \pm 0,02$
60	$5,39 \pm 0,02$	$5,35 \pm 0,02$	$5,31 \pm 0,02$	$5,41 \pm 0,02$

Աղյուսակ 11-ում ցույց է տրված խոնավության պարունակության փոփոխությունը
փորձնական և ստուգիչ պանիրների հասունացման ընթացքում:

Աղյուսակ 11.

Խոնավության փոփոխությունը պանիրների հասունացման
ժամանակ (pH)

Պանրի հասակը, օր	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
3	$46,4 \pm 0,2$	$46,9 \pm 0,2$	$47,5 \pm 0,2$	$46,1 \pm 0,2$
15	$45,7 \pm 0,2$	$46,1 \pm 0,2$	$46,5 \pm 0,2$	$44,1 \pm 0,2$
30	$44,9 \pm 0,2$	$45,6 \pm 0,2$	$45,6 \pm 0,2$	$43,6 \pm 0,2$
45	$44,2 \pm 0,2$	$44,7 \pm 0,2$	$44,7 \pm 0,2$	$42,6 \pm 0,2$
60	$43,5 \pm 0,2$	$43,7 \pm 0,2$	$43,9 \pm 0,2$	$42,0 \pm 0,2$

Հարկ է նշել, որ պանիրներում խոնավության պարունակության ստացված
տարբերությունները ինքնամամլումից հետո շարունակում էին մնալ նույնը ողջ

հասունացման ընթացքում: Նույնիսկ այնպիսի ակտիվ գործոնը, ինչպիսին է աղաջրային միջավայրում երկարատև հասունացումը, չկարողացավ հավասարեցնել նրանց մեջ խոնավության պարունակությունը: Տվյալ դեպքում փորձնական պանիրների խոնավության բարձրացման վրա ազդել է խառնուրդի մեջ ավելացվող շիճկասերի կազմում գտնվող շիճուկային սպիտակուցների լրացուցիչ քանակությունը, որոնք, անցնելով պանրազանգվածի մեջ, բարձրացրել են նրա ջրականման ունակությունը:

Ստացված փորձնական տվյալները հաստատել են մեր փորձնական հիպոթեզի ուղղություններից մեկը, որ աղաջրային պանիրների արտադրությունում շիճկասերի օգտագործումը պետք է բարձրացնի նրանց խոնավությունը, դրանով իսկ նպաստելով պատրաստի մթերքի ելքի ավելացմանը:

Ընդ որում փորձնական և ստուգիչ պանիրների քանակական փոփոխությունները ըստ խոնավության կախված էին ավելացվող շիճկասերի չափաքանակից:

Պանրի հասունացման ողջ ընթացքում առաջին տարբերակի փորձնական նմուշների խոնավությունը $0,3\text{-}1,5\%$ -ով ավելի էր համապատասխան ստուգիչ պանիրների համեմատությամբ: Երկրորդ տարբերակում այդ ցուցանիշը կազմում էր $0,8\text{-}1,7\%$, իսկ երրորդ տարբերակում պանիրների համար՝ $1,4\text{-}1,9\%$:

Պանիրների խոնավության և կաթնաշաքարի սկզբնական պարունակության տարբերությունները ազդեցություն ունեցան ստուգիչ և փորձնական պանիրներում միկրոֆլորայի զարգացման վրա (աղյուսակ 12):

Առաջին, երկրորդ և երրորդ տարբերակների թարմ պանիրների մեջ մանրէների ընդհանուր քանակը $1,28; 1,46$ և $1,52$ անգամ ավելի էր, քան ստուգիչ պանիրների մեջ: Միկրոֆլորայի առավելագույն զարգացման շրջանում այդ տարբերությունները կազմում էին համապատասխանաբար $1,02; 1,12$ և $1,20$ անգամ:

Հետազոտվող պանիրներում միկրոֆլորայի զարգացման ընդհանուր օրինաչափությունները համընկնում են Մ.Ա.Վոլկովայի, Զ.Թ.Մաղաքյանի և այլ հեղինակների ավելի վաղ կատարված հետազոտությունների հետ [31,83]:

Ինքնամամլումից հետո պանիրներում պարունակվում էր $1,41$ -ից մինչև $2,16$ միլիարդ մանրէներ՝ 1 գ-ում: Նրանց առավելագույն զարգացումը հասավ պանիրների 5 օրական հասակում և կազմեց $4,98$ -ից մինչև $5,98$ միլիարդ՝ 1 գ-ում: Այնուհետև սկսվեց

մանրէների ընդհանուր քանակի նվազում: 30-ից մինչև 60 օրական հասակում հասնում էր տասնյակ միլիոնների՝ 1 գ-ում:

Աղյուսակ 12.

Մանրէների ընդհանուր քանակի փոփոխությունը պանիրների հասունացման

ժամանակ, մլն/ 1 գ պանրում

Պանրի հասակը, օր	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
թարմ	1815,2	2070,5	2160,8	1415,5
5	5100,5	5620,6	5980,8	4985,2
15	1370,4	1415,3	1463,2	1315,9
30	466,4	535,9	610,7	393,7
45	288,4	358,6	455,3	215,8
60	119,5	133,8	149,5	97,6

Հասուն պանիրների կազմը բերված է աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13.

Հասուն պանիրների կազմը

Ցուցանիշներ	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
Յուղի գանգվածային բաժինը չոր նյութերում, %	49,9±0,1	49,7±0,1	49,5±0,1	50,7±0,1
Խոնավության գանգվածային բաժինը, %	43,5±0,2	43,7±0,2	43,9±0,2	42,0±0,2
Աղի գանգվածային բաժինը, %	3,9±0,1	3,7±0,1	3,5±0,1	4,1±0,1
Ավտիկ թթվությունը, pH	5,39±0,02	5,35±0,02	5,31±0,02	5,41±0,02

Յուղի պարունակությամբ փորձնական և ստուգիչ պանիրներն ունեին աննշան տարբերություններ (յուղի գանգվածային բաժինը չոր նյութերում համապատասխանաբար փորձնական՝ 49,9; 49,7; 49,5% և ստուգիչ՝ 50,7 %):

Խոնավության պարունակությունը, ինչպես արդեն նշվել է, ավելի շատ էր փորձնական պանիրներում: Ստուգիչ պանիրները պարունակում էին միջին հաշվով 42,0% խոնավություն, իսկ փորձնական պանիրները՝ 43,5%(1-ին տարբերակ), 43,7 %(2-րդ տարբերակ) և 43,9 % (3-րդ տարբերակ):

Կերակրի աղի պարունակությունը հասուն պանիրներում կազմում էր 3,5-ից մինչև 3,9%, իսկ ստուգիչում՝ 4,1՝ այսինքն, համապատասխանում էր «Լոռի» պանրի համար ներկայացվող պահանջներին:

Գործնական հետաքրքրություն են ներկայացնում պանիրների զգայորոշման գնահատման արդյունքները, որոնք բերված են աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14.

Հասուն պանիրների զգայորոշման գնահատականը, բար

Ցուցանիշներ	Փորձերի տարբերակները			
	I	II	III	Ստուգիչ
Համ և հոտ	38,8 ±0,2	38,5±0,2	38,3±0,2	39,2±0,2
Կոնսիստենցիա	22,9±0,1	23,6±0,1	24,2±0,1	23,2±0,1
Նկար	7,8±0,1	7,8±0,1	7,8±0,1	7,9±0,1
Խմորի գույնը	4,5±0,1	4,4±0,1	4,5±0,1	4,6±0,1
Արտաքին տեսքը	10±0,0	10±0,0	10±0,0	10±0,0
Փաթեթավորումը և մակնշումը	5,0±0,0	5,0±0,0	5,0±0,0	5,0±0,0
Ընդհանուր գնահատական	89±0,2	89,3±0,2	89,8±0,2	89,9±0,2

Կատարված փորձերը վկայում են, որ ստուգիչ և փորձնական պանիրներում համի և հոտի մեծ տարբերությունը էական չեն: Դրանք ունեին արտահայտված աղի համ և զերծ էին կողմնակի համից և հոտից: Փորձնական պանիրների երրորդ տարբերակի առանձին նմուշներ ձեռք էին բերել աննշան դաշնություն: Սակայն ըստ տեխնոլոգիական հրահանգի /հաստատված 05.08.1976թ./ «Լոռի» պանրում նման որակը թույլատրելի է: Այն կարող է լինել պանրի ավելի տևական աղադրման արդյունք, իսկ մեր փորձերում դրանք շիճուկային սպիտակուցների ոչ յուրահատուկ պրոտեոլիզի արդյունք էին: Բոլոր փորձնական պանիրներում գրանցվել էր կազմության

տարբերություն: Օգտագործվող շիճկասերի քանակության ավելացման հետ մեկտեղ տեղ բարելավում էր ունենում պանիրների կոնսիստենցիան:

Նույնիսկ ստանդարտով «Լոռի» պանրում նախատեսված է խիտ, թեթևակի փշրվող կոնսիստենցիա: Դա բացատրվում է պանրի արտադրության պայմաններով: Այդ պատճառով հետազոտողների և արդյունաբերողների ուշադրության կենտրոնում է աղաջրային պանիրների կոնսիստենցիայի լավացման եղանակների ուսումնասիրությունը:

Մեր փորձերում հաստատվել է փորձնական և ստուգիչ պանիրների կոնսիստենցիայի գնահատման հավաստի տարբերությունը: Ստուգիչ պանրի համեմատ առաջին, երկրորդ և երրորդ տարբերակների պանիրների միջին գնահատական համապատասխանաբար՝ 0,3 ; 0,4 և 1 բալով բարձր էր:

Ըստ մյուս ցուցանիշների պանիրների գնահատման ժամանակ սկզբունքային տարբերություններ գրեթե չեն գրանցվել: Ստացված արդյունքները հաստատեցին մեր աշխատանքային հիպոթեզի և երկու հիմնական դրույթները՝

- շիճկասերի օգտագործումը «Լոռի» պանրի արտադրության ժամանակ հնարավոր է նույնիսկ ելքային կաթի յուղի մասնակի փոխարինման ժամանակ;
- շիճկասերի օգտագործման ժամանակ տեղի է ունենում «Լոռի» պանրի կոնսիստենցիայի բարելավում:

Ըստ այդմ՝ հետագայում աշխատանքը շարունակվեց շիճկասերի օգտագործման եղանակի կատարելագործման և մթերքի համային ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

3.2.2 Շիճկասերի համասեռացման ազդեցությունը «Լոռի» պանրի պատրաստման կենսատեխնոլոգիական պրոցեսների և որակի վրա

Շրդանային պանիրների արտադրությունում համասեռացման կիրառումը վիճելի բնույթ է կրում: Այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ են կատարել պրոֆ. Վայտկուսը, Ռ.Ռամանառուսկասը [25,27]: Որոշ հետազոտություններում նշված է համասեռացման դրական դերը պանիրների արտադրության ժամանակ [115, 116, 117, 118]: Այն նվազեցնում է յուղի անցումը շիճուկի մեջ, ինչի հաշվին էլ ավելանում է պանրի ելքը, փաթեթավորման ժամանակ պակասում է յուղի անջատումը մակերևույթի վրա:

Համասեռացումը լավ արդյունքներ է տալիս փափուկ պանիրների, հատկապես ռոկֆորի և բորբոսով հասունացող այլ պանիրների, ինչպես նաև կիսապինդ պանիրների արտադրությունում [81,82]:

Այլ աշխատանքներում նշվում է պինդ պանիրների կոնսիստենցիայի վրա համասեռացման բացասական ազդեցության մասին [123,124]:

Պանրագործությունում համասեռացման կիրառումից ստացված արդյունքների որոշակի տարածայնությունները բացատրվում է կոնկրետ նպատակներով, որոնք իրենց առջև դնում էին հետազոտողները, արտադրվող պանիրների տարատեսակությամբ, համասեռացման բազմատեսակ ռեժիմներով և այլն:

Կաթի համասեռացման ուսումնասիրման և բնական պանիրների արտադրության ժամանակ այդ գործընթացի հնարավոր օգտագործման բազմաթիվ հետազոտություններ են կատարվել ԲНԻԱՄС-ի Լիտվական մասնաճյուղում Վ.Վ.Վայտկուսի ղեկավարությամբ [27,28,29,97]:

Հիմնվելով կաթի և սերի համասեռացման ուղղությամբ կատարված հետազոտությունների հետ կապված կուտակված մեծ փորձի վրա, մենք ձգտել ենք այն կիրառել մեր աշխատանքում՝ առավելագույն դրական արդյունք ստանալու նպատակով: Առավել ևս, որ մեր հետազոտությունների հիմնական օբյեկտներից մեկն է համարվում շիձկասերը, որի նախօրոք համասեռացումը կարող է բարելավել նրա տեխնոլոգիական հատկությունները և բարձրացնել վերամշակման արդյունավետությունը:

Կատարելով կաթի և սերի համասեռացման վերաբերվող աշխատանքների մանրամասն վերլուծության անալիզ, մենք ընտրել ենք շիձկասերի համասեռացման մեր կարծիքով առավել հեռանկարային ռեժիմները, որոնք ստուգվել են հետազա հետազոտությունների ժամանակ:

Փորձնական պանիրների արտադրության ժամանակ մոտ 20 % յուղայնությամբ շիձկասերը համասերել ենք ճնշման երեք ռեժիմների պայմաններում՝ 6-8 (առաջին տարբերակ), 9-10 (երկրորդ տարբերակ) և 11-12 ՄՊա (երրորդ տարբերակ): Բոլոր տարբերակներում շիձկասերը նախապես պատերացվել է 85-90 °C ջերմաստիճանում:

Հիճկասերի համասեռացումը կատարվել է 60-65 °C ջերմաստիճանում:

Այսուսակ 15-ում բերված է փորձնական պանիրների արտադրության տեխնոլոգիական գործընթացի ցուցանիշներ:

Այսուսակ 15.

Արտադրված պանիրների տեխնոլոգիական ցուցանիշները

Ցուցանիշներ	Փորձերի տարբերակները			
	I (6-8 ՄՊա)	II (9-10 ՄՊա)	III (11-12 ՄՊա)	Ստուգիչ
Յուղի զանգվածային բաժինը խառնուրդում, %	3,4	3,4	3,4	3,4
Խառնուրդի թթվությունը, °Թ	21	20	20	20
Մակարդման ջերմաստիճանը, °C	35	35	35	35
Մակարդման տևողությունը, րոպե	30	32	35	32
2-րդ տաքացման ջերմաստիճանը, °C	37	38	38	38
Հատիկադրման և հատիկի մշակման ընդհանուր տևողությունը, րոպե	69,3	72,6	77	66

Գործնական հետաքրքրություն են ներկայացնում՝ շիճկասերի համասեռացման արդյունքում, շիճուկի մեջ յուղի անցման հետ կապված հետազոտությունները (այսուսակ 16):

Այսուսակ 16.

Համասեռացված շիճկասերի օգտագործմամբ արտադրված պանիրներից ստացված շիճուկի կազմը և հատկությունները

Ցուցանիշներ	Փորձերի տարբերակները			
	I (6-8 ՄՊա)	II (9-10 ՄՊա)	III (11-12 ՄՊա)	Ստուգիչ
Չոր նյութերի զանգվածային բաժինը, %	5,7±0,2	5,7±0,2	5,6±0,2	6,42±0,3
Յուղի զանգվածային բաժինը, %	0,38	0,36	0,39	0,44
Թթվություն, °Թ	16,0	15,9	16,7	16,5

Հիմկասերի համասեռացումը զգալիորեն կրծատել է փորձնական պանիրներում յուղի անցումը շիճուկի մեջ, այսինքն պանրի արտադրության ժամանակ բարձրացել է յուղի օգտագործման արդյունավետությունը: Սա շատ կարևոր պահ է արտադրության համար, քանի որ այն հնարավորություն է տալիս մշակել «Լոռի» պանրի ստացման նոր սակավաթափոն տեխնոլոգիաներ:

Փորձերի ներկայացված խմբաքանակի ստուգիչ տարբերակում յուղի անցումը շիճուկի մեջ կազմում էր 0,44%: Համեմատած շիամասեռացված շիճկասերով արտադրված փորձնական պանիրների արտադրությունից ստացված շիճուկի յուղայնության հետ՝ շիճկասերի համասեռացումը բերեց շիճուկի յուղայնության նվազեցման՝ մինչև 0,36-0,39%՝: Հատկապես լավ արդյունքներ են ստացվել 9-ից մինչև 10 ՄՊա ճնշման տակ շիճկասերի համասեռման ժամանակ: Համապատասխանաբար փոփոխվել էր նաև պանիրների մեջ յուղի պարունակությունը (աղյուսակ 17):

Հասունացման բոլոր փուլերում փորձնական պանիրների չոր նյութերում յուղի պարունակությունը ավելի բարձր էր, քան ստուգիչում: Ինքնամամլումից հետո երկրորդ տարբերակի պանիրներում յուղի պարունակությունը 1,3 %-ով ավելի էր, իսկ հասուն պանրում՝ 1,6 %-ով (տես աղ.17):

Շիճկասերի համասեռացումով և առանց համասեռացման արտադրված պանիրների խոնավության ցուցանիշները գրեթե չեն տարբերվում (աղյուսակ 17):

Ինքնամամլումից հետո պանիրները պարունակում էին 44,8 % -ից մինչև 45,5% խոնավություն, իսկ հասուն պանիրները՝ 41,4%-ից մինչև 41,9 %:

Աղյուսակ 17-ում բերված են հետազոտվող պանիրների զգայորոշման գնահատման արդյունքները:

Սերի համասեռացման կիրառումը աննշան չափով ավելացրել էր փորձնական պանիրների ընդհանուր բալային գնահատականը, ինչը տեղի էր ունեցել ի հաշիվ փորձնական պանիրների կոնսիստենցիայի և դրանց համի ու հոտի բարելավման:

Այդ իսկ պատճառով հետազոյում մեր աշխատանքում կիրառվում էր շիճկասերի համասեռացումը:

Համասեռացված շիճկասերով արտադրված հասուն պանիրների ֆիզիկա-քիմիական ցուցանիշները և օգայորոշման
գնահատականը

Փորձերի տարբերակները	Յուղ, %		Խոնավություն, %		Օգայորոշման ցուցանիշները, բալ						Միջիկույղե մասնակից	
	սորպ ճիվալյուրություն	մկրտի դասոց	սորպ ճիվալյուրություն	մկրտի դասոց	Համար հող	ովճրվածություն	մոկա	Աժուղատ ովճրություն	մերժ վաստու	Կոմու այլապահություն	Քաշշիրություն	
I	52,8±0,1	51,3±0,1	45,2±0,1	41,4±0,1	38,7±0,2	23,5±0,2	7,6±0,1	10±0,0	4,6±0,0	5±0,0	89,5±0,2	
II	53,4±0,1	52,6±0,1	44,8±0,1	41,7±0,1	38,8±0,2	24,5±0,2	7,6±0,1	10±0,0	4,6±0,0	5±0,0	90,55±0,2	
III	53,1±0,1	51,6±0,1	45,5±0,1	41,9±0,1	38,8±0,2	23,9±0,2	7,7±0,1	10±0,0	4,6±0,0	5±0,0	90,0±0,2	
Սոուզիչ	52,1±0,1	50,4±0,1	46,1±0,1	42,0±0,1	39,8±0,2	23,25±0,2	7,8±0,1	10±0,0	4,8±0,0	5±0,0	90,65±0,2	

Կերակրի աղի փոփոխության դինամիկան բերված է աղյուսակ 17-ում:

Աղի դիֆուզիան փորձնական և ստուգիչ պանիրներում աղաջրում նրանց հասունացման ժամանակ էականորեն չէր տարբերվում:

Աղյուսակ 18.

Պանիրների աղման դինամիկան, %

Պանրի տարբերակը	Պանրի հասակը, օր		
	5	30	45
Փորձնական	$2,53 \pm 0,12$	$3,47 \pm 0,17$	$4,2 \pm 0,23$
Ստուգիչ	$2,45 \pm 0,10$	$3,35 \pm 0,16$	$4,1 \pm 0,22$

3.3 Բակտերիալ մակարդների ազդեցությունը Լոռի պանրի հասունացման գործընթացի ինտենսիվիկացման վրա

Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, շիճկասերի օգտագործումը աղաջրային պանիրների արտադրությունում ուներ մի շարք առավելություններ: Դրանցից հիմնականն են համարվում շիճկասերի յուղի առավել արդյունավետ օգտագործումը, պատրաստի մթերքի ելքի ավելացումը և պանիրների կոնսիստենցիայի լավացումը:

Այս հարցերի լուծումը հնարավոր է կենսաբանական եղանակով՝ շնորհիվ աղաջրային պանիրների համար օգտագործվող մակարդներում, կաթնաթթվային մանրէների շտամների գիտականորեն հիմնավորված ընտրության:

Տարբեր տեսակի բնական պանիրների արտադրության ինտենսիվացման և որակի բարելավման այսպիսի ուղղության հեռանկարը բազմաթիվ անգամ ապացուցվել է Զ.Ք.Շիլանյանի և նրա աշակերտների կողմից: Այդպիսի աշխատանքներից շատերը լայն կիրառություն գտան արտադրությունում: Այդ արդյունքները մանրամասն նկարագրվել են աշխատանքի գրականության ակնարկում [53, 54, 55, 56]:

Հիմնվելով այդ հետազոտությունների վրա, մենք ձգտում էինք կազմել բակտերիալ մակարդներ, որոնց միկրոֆլորան ավելի արագ և լավ էր հարմարվում աղաջրային պանիրներում, կրծատում է հասունացման գործընթացը և բարելավում էր մթերքի որակը: Մեր կարծիքով, այդպիսի մակարդները պետք է ունենան լավ

պրոտեոլիտիկ ակտիվություն, կուտակեն բավարար քանակով և ցանկալի հարաբերակցությամբ ճարպաթթուներ, բուրավետ նյութեր, ազատ ամինաթթուներ, լինեն աղակայուն:

3.3.1 Կաթնաթթվային մանրէների ֆիզիոլոգո-կենսաբանական հատկությունների ուսումնասիրումը՝ կապված պանիրների համար նախատեսված մակարդներում նրանց օգտագործման հետ

ՀԱԱՀ Կենդանական ծագման հումքի և մթերքների պրոբլեմային լաբորատորիայում առկա կաթնաթթվային մանրէների շտամների մեջ հավաքածուից ընտրվեցին յոթ տեսակի 25 շտամներ, որոնք անհրաժեշտ էին աղաջրային պանիրների փորձնական մակարդների կազմնան համար, այդ թվում 6 շտամ Str.bovis, 3 շտամ L.casei, 2 շտամ Str.lactis, 3 շտամ L.lactis, 5 շտամ Leuconostoc paramesenteroides, 3 շտամ L.plantarum և 3 շտամ L.helveticum: Շտամների հիմնական ֆիզիկա-քիմիական հատկություններն են՝ կաթի մակարդման տևողությունը, առաջացած մակարդվածքի ամրությունը, սիներեզիսը, պրոտեոլիտիկ ակտիվությունը, կայունությունը ֆենոլի և կերակրի աղի նկատմամբ:

Ուսումնասիրված բոլոր շտամները լավ էին մակարդում կաթը, առաջացնելով բավարար ամրության մակարդվածք: Ամենաշատ շիճուկի անջատում նկատվում էր Str.lactis (անջատվում էր 10-ից մինչև 12 % շիճուկ) և L.casei (անջատվում էր 8-ից մինչև 14 % շիճուկ) շտամների կողմից առաջացրած մակարդվածքներում (մակարդման տևողությունը 30 րոպե էր):

Մյուս տեսակների մեջ հանդիպում էին շտամներ, որոնք ցուցաբերում էին տարբեր ունակություն առաջացող մակարդվածքի սիներեզիսի նկատմամբ: Str.bovis-ի մոտ շտամ N1036-ը առաջացնում էր մակարդվածք, որից անջատվում էր 8 % շիճուկ, իսկ շտամ N850-ը՝ միայն 2 %: Ըստ այս հատկության նույն բնույթն ունեին նաև L.paramesenteroides-ի, L.plantarum-ի և L.helveticum-ի շտամները:

Բարձր սահմանային թթվությամբ (կուլտիվացումից 7օր հետո) էին օժտված կաթնաթթվային ցուպիկների շտամները (192-ից մինչև 312⁰թ): Հատկապես բարձր թթվություն էր տալիս L.plantarum-ի N2212 շտամը: Կաթնաթթվային ստրեպտակոկերից

ամենացածր սահմանային թթվությամբ էին օժտված *L.casei*-ի (82-ից մինչև 90⁰թ) և *Str.lactis*-ի (108-ից մինչև 112⁰թ) շտամները: *Str.bovis*-ի շտամների համար սահմանային թթվությունը տատանվում էր 106-ից մինչև 148⁰թ, իսկ *L.paramesenteroides*-ի շտամների համար՝ 56-ից մինչև 136⁰թ սահմաններում:

Սակայն թթվության աճի արագությունը ամենամեծն էր *Str.bovis*-ի շտամների մոտ, որոնք կուլտիվացումից արդեն վեց ժամ հետո բարձրացնում էին միջավայրի տիտրվող թթվությունը մինչև 54-82⁰թ, այն դեպքում, եթե *L.helveticum*-ի շտամները բարձրացնում էին միջավայրի թթվությունը մինչև 30⁰թ:

Դրուելիտիկ ակտիվությունն ավելի արտահայտված էր *L.lactis*-ի, *L.plantarum*-ի և *L.helveticum*-ի շտամների, քան *Str.bovis* և *L.casei* կաթնաթթվային ստրեպտոկոկերի մոտ:

Աղաջրային պանիրների համար պետք է հաշվի առնել կերակրի աղի բարձր կոնցենտրացիայի միջավայրում շտամների զարգացման ունակությունը: Կերակրի աղը կանխում էր կաթնաթթվային մանրէների բազմաթիվ շտամների աճը և զարգացումը: Նրա նկատմամբ առավել կայուն էին *Str.bovis*-ի և *L.plantarum*-ի շտամները, ավելի քիչ՝ *L.lactis*-ի շտամները: *Leuc.paramesenteroides*-ի շտամների մեջ կային աղի նկատմամբ ինչպես կայուն, այնպես էլ անկայուն ներկայացուցիչներ:

Աղի նկատմամբ առավել կայուն էին N1036 *Str.bovis*, N3685 *Str.lactis* և N3724 *Leuc.paramesenteroides* շտամները:

Կաթի մեջ կուլտիվացման ժամանակ առանձին շտամների կողմից ազատ ամինաթթուների կուտակումը բերված է աղյուսակներ 19, 20, 21, և 22-ում:

Կաթնաթթվային մանրէների տեսակների և շտամների միջև էական տարբերություններ կային ազատ ամինաթթուներ կուտակելու ուղղությամբ:

Ակտիվորեն ազատ ամինաթթուներ էին կուտակում *L.plantarum* և *L.helveticum* կաթնաթթվային ցուպիկների շտամները: *Str.bovis* ստրեպտոակոկերի շտամների մոտ ամենաքիչն էր ազատ ամինաթթուների ընդհանուր քանակը: Մյուս տեսակների շտամները միջանկյալ դիրք էին գրավում՝ *Str.lactis*-ը, *L.casei*-ը, *Leuc.paramesenteroides*-ը: Առանձին շտամներից առավել ակտիվորեն ազատ ամինաթթուներ էր կուտակում N2212 *L.plantarum* շտամը (18,41 մգ%): Այն կուտակում

Էր մեծ քանակությամբ գլուտամինաթթու, պրոլին, վալին, լեյցին և ֆենիլալանին, որոնց քանակը կազմում էր ազատ ամինաթթուների ընդհանուր քանակի 73,9%-ը, ավելի քիչ կուտակում էր հիստիդին, արգինին, ալանին, մեթիոնին և տիրոզին (6,6%):

Leuc.parame-senteroide-ի շտամներից ազատ ամինաթթուներ կուտակելու ունակությամբ առանձնանում էր N3724 շտամը, որի մեջ դրանց գումարը կազմում էր 6,53մգ%: Ամինաթթուներից գերակշռում էին գլուտամինաթթուն, լիզինը, վալինը, լեյցինը և ֆենիլալանինը, որոնց քանակը կազմում էր ազատ ամինաթթուների ընդհանուր քանակի 53,3%-ը: Հիստիդինը, ասպարագինաթթուն, տրեոնինը, վալինը և արգինինը գտնվում էին ավելի փոքր քանակներով (ազատ ամինաթթուների ընդհանուր քանակի 8,7%):

Str.lactis-ի N3685 շտամին բնորոշ է վալինի, իզոլեյցինի, լեյցինի, տիրոզինի և ֆենիլալանինի կուտակումը (72,4%), այն ավելի քիչ է կուտակում հիստիդին, արգինին, ասպարագինաթթու, սերին և ալանին (4,8%): *Str.bovis*-ի համար բնորոշ է համարվում N1036 շտամը: Այն լավ է կուտակում լեյցին, վալին, ֆենիլալանին և սերին (69,4%) և ավելի քիչ հիստիդին, արգինին, ասպարագինաթթու, ալանին և մեթիոնին (7,6%)

Աղյուսակ 19.

Կաթնաթթվային մանրէների շտամների ունակությունը կուտակել ազատ ամինաթթուներ, մգ%

Ամինաթթուներ	Կաթնաթթվային մանրէների տեսակը			
	<i>Str.bovis</i>			
	Շտամների համարները			
	775	850	1036	1061
Լիզին	0,072	հետքեր	0,117	0,22
Հիստիդին	0,031	-	հետքեր	-
Արգինին	0,030	-	0,010	-
Ասպարագինաթթու	0,015	0,043	0,032	0,06

այուսակ 19-ի շարունակությունը

Տրեռնին	0,023	0,029	0,049	0,11
Սերին	0,076	0,150	0,113	0,10
Գլուտամինաթթու	0,056	0,066	0,292	0,19
Գլիցին	0,013	0,063	0,036	0,03
Ալանին	0,072	0,062	0,022	0,025
Վալին	0,016	0,024	0,172	0,05
Մեթիոնին	հետքեր	հետքեր	0,022	0,12
Իզոլեյցին	հետքեր	0,011	0,082	0,02
Լեյցին	0,014	0,041	0,214	0,19
Տիրոզին	0,018	0,048	0,043	0,02
Ֆենիլալանին	հետքեր	0,092	0,152	0,08
Ընդամենը	0,684	0,737	1,674	1,367

Այուսակ 20.

Կաթնաթթվային մանրէների շտամների ունակությունը կուտակել ազատ ամինաթթուներ, մգ%

Ամինաթթուներ	Կաթնաթթվային մանրէների տեսակը			
	Str.lactis		L.casei	
	Շտամների համարները			
	3685	3684	3443	3728
Լիզին	0,133	0,017	0,012	0,024
Հիստիոին	հետքեր	-	-	-
Արգինին	0,018	-	-	-

աղյուսակ 20-ի շարունակությունը

Ասպարագինաթռու	0,039	0,011	0,164	0,012
Տրենին	0,110	0,010	0,225	0,019
Սերին	0,023	0,092	0,252	0,109
Գլուտամինաթռու	0,165	0,039	0,098	0,034
Պրոլին	0,120	0,060	0,759	0,204
Գլիցին	0,114	0,023	0,060	0,022
Ալանին	0,067	0,068	0,045	0,071
Վալին	0,468	0,118	0,435	0,024
Մեթիոնին	0,075	հետքեր	0,075	0,013
Իզոլեյցին	0,504	հետքեր	0,432	0,030
Լեյցին	0,698	հետքեր	0,234	-
Տիրոզին	0,235	0,175	0,018	-
Ֆենիլալանին	0,349	0,043	0,088	-
Ընդամենը	3,118	0,656	2,897	0,562

Աղյուսակ 21.

Կաթնաթթվային մանրէների շտամների ունակությունը կուտակել ազատ ամինաթթուներ, մգ%

Ամինաթթուներ	Կաթնաթթվային մանրէների տեսակը				
	Leuc.paramecenteroides				
	Շտամների համարները				
	3722	3724	3727	3740	3750
Լիզին	0,023	0,125	0,028	0,012	0,014

Այսուսակ 21-ի շարունակությունը

Հիստիդին	-	հետքեր	հետքեր	-	-
Արգինին	-	-	-	-	-
Ասպարագինաթթու	0,055	0,015	հետքեր	0,164	0,011
Տրեոնին	0,285	0,028	0,021	0,225	0,022
Սերին	0,359	0,109	0,084	0,252	0,086
Գլուտամինաթթու	0,457	1,277	հետքեր	0,098	0,026
Պրոլին	0,046	1,043	0,111	0,759	0,136
Գլիցին	0,052	0,079	0,074	0,060	0,073
Ալանին	0,049	0,014	0,061	0,040	0,053
Վալին	0,012	0,868	0,031	0,435	0,008
Մեթիոնին	-	0,132	-	0,075	հետքեր
Իզոլեյցին	0,012	0,766	հետքեր	0,432	հետքեր
Լեյցին	0,032	1,327	0,204	0,234	0,090
Տիրոզին	-	0,206	-	0,018	0,013
Ֆենիլալանին	-	0,541	-	0,088	-
Ընդամենը	1,382	6,530	0,614	2,892	0,482

Այսուսակ 23-ում ցույց է տրված կաթնաթթվային մանրէների (ըստ տեսակների) ձարպաթթուներ կուտակելու ունակությունը:

Կաթնաթթվային մանրէների շտամների ունակությունը կուտակել ազատ
ամինաթթուներ, մգ%

Ամինաթթուներ	Կաթնաթթվային մանրէների տեսակը				
	L.plantarum		L.helveticum		
	Շտամների համարները				
	2212	2213	3523	3528	3567
Լիզին	0,660	0,134	0,026	0,016	0,229
Հիստիոհին	0,070	0,056	0,004	-	0,019
Արգինին	0,120	0,137	0,036	-	0,079
Ասպարագինաթթու	0,413	0,053	0,064	-	0,087
Տրեոնին	0,570	0,116	0,140	0,023	0,250
Սերին	0,506	0,815	0,446	0,111	0,700
Գլուտամինաթթու	3,874	0,976	1,215	0,164	1,475
Պրոլին	1,793	2,831	1,318	1,260	0,921
Գլիցին	0,804	0,642	0,258	0,074	0,478
Ալանին	0,308	1,553	1,603	2,145	1,363
Վալին	3,350	1,681	1,363	0,173	2,854
Մեթիոնին	0,317	0,263	0,177	0,019	0,250
Իզոլեյցին	1,483	1,250	1,201	0,121	1,436
Լեյցին	2,643	1,206	1,860	0,246	2,043
Տիրոզին	0,386	0,503	0,486	0,057	0,487
Ֆենիլալանին	1,965	0,471	0,785	0,062	0,921
Ընդամենը	18,412	12,687	10,982	4,471	13,592

Կաթնաթթվային մանրէների շտամների ճարպաթթուներ կուտակելու
ունակությունը, մգ%

Ճարպաթթուներ	Կաթնաթթվային մանրէների տեսակները				
	Str.lactis	L.casei	Leuc.parame-senteroides	L.plantarum	Str.bovis
Մրջնաթթու	1,51±0,04	4,26±0,13	3,21±0,09	4,28±0,13	1,75±0,05
Քացախաթթու	8,,82±0,27	5,32±0,16	7,83±0,23	9,81±0,30	7,33±0,22
Պրոպիոնաթթու	հետքեր	0,18±0,05	հետքեր	0,03±0,0009	0,03±0,0009
Կարագաթթու	0,85±0,03	0,77±0,02	1,83±0,06	2,23±0,07	1,55±0,05
Ընդհանուր քանակը	11,18±0,33	10,53±0,31	12,87±0,38	16,35±0,81	10,66±0,32

Ըստ կուտակված ճարպաթթուների ընդհանուր քանակի կաթնաթթվային մանրէների տեսակները դասավորվել են հետևյալ հերթականությամբ՝ L.plantarum(16,35մգ%), Leuc.parame-senteroides(12,87մգ%), Str.lactis(11,18մգ%), Str.bovis (10,66մգ%) և L.casei (10,53 մգ%):

Առանձին ճարպաթթուներից բոլոր տեսակներում գերակշռում էր քացախաթթուն, որի քանակը L.plantarum-ի համար կազմում էր 60 %, Leus.parame-senteroides-ի համար՝ 60,8 %, Str.lactis-ի համար՝ 78,9 %, Str.bovis-ի համար՝ 68,8% և L.casei -ի համար՝ 50,5 % ճարպաթթուների ընդհանուր քանակի հաշվով:

Կաթնաթթվային մանրէների բոլոր տեսակները կուտակում էին նաև մրջնաթթու և կարագաթթու: Պրոպիոնաթթուն հիմնականում հայտնաբերվել է հետքերի տեսքով:

Այուսակ 24-ում բերված է տրված կաթնաթթվային մանրէների (ըստ տեսակների) ունակությունը կուտակելու ցնդող բուրավետ միացություններ:

Բոլոր տեսակներին բնորոշ է էթանոլի, դիացետիլի և ացետոինի առաջացումը: Առավել քիչ քանակներով առաջանում էին ացետալդեհիդը և պրոպանալը (հետքեր):

Հաշվի առնելով կաթնաթթվային մանրէների շտամների ֆիզիկա-քիմիական հատկությունները, ընտրվեցին առավել համապատասխան շտամները աղաջրային պանիրների մակարդներ կազմելու համար: Շտամների ընտրության ժամանակ ուշադրություն էր դարձվում թթվագոյացնող և պրոտեոլիտիկ ակտիվությանը,

անտագոնիզմին, շտամների ունակությանը կուտակելու ազատ ամինաթթուներ, կայունությանը աղի նկատմամբ և այլն:

Աղյուսակ 24.

Կաթնաթթվային մանրէների շտամների ցնդող բուրավետ նյութեր կուտակելու
ունակությունը, մգ%

Բուրավետ նյութեր	Կաթնաթթվային մանրէների տեսակները				
	Str.lactis	L.Casei	Leuc.parame-senteroides	L.plantarum	Str.bovis
Ացետալդեհիդ	0,24± 0,007	հետքեր	0,3± 0,009	0,074± 0,002	0,15± 0,04
Պրոպանալ	հետքեր	հետքեր	հետքեր	0,014± 0,0004	0,01± 0,0003
Ացետոն	0,21± 0,006	0,080± 0,002	0,19± 0,006	0,992± 0,03	0,23± 0,007
Էթանոլ	1,45± 0,04	1,392± 0,04	1,10± 0,033	1,920± 0,06	1,45± 0,04
Դիացետիլ	0,23± 0,007	հետքեր	0,51± 0,015	0,870± 0,03	0,38± 0,01
Ընդամենը	2,13± 0,07	1,472± 0,05	2,1± 0,06	3,87± 0,1	2,22± 0,06

Զ.Ք. Դիլանյանի, Ա.Ա. Մարտիրոսյանի, Մ.Ս. Ղարագույանի [48, 65, 82] և ուրիշների ավելի վաղ կատարված աշխատանքներն ապացուցում են, որ Լոռի և այլ աղաջրային պանիրների համար բնորոշ են հետևյալ ամինաթթուները՝ լիզին, վալին, գլուտամինաթթու, լեյցին, տիրոզին և ֆենիլալանին: Ելնելով դրանցից օգտագործվող մակարդի կազմի մեջ ընդգրկվեցին հետևյալ շտամները՝ Str.lactis, Str.bovis, Leuc.paramesenteroides և L.plantarum: Միջավայրում կուլտիվացման ժամանակ նրանք առաջացնում էին բնորոշ ազատ ամինաթթուներ:

Բակտերիալ մակարդի բնութագիրը բերված է աղյուսակ 25-ում:

Փորձնական մակարդն ուներ բավարար թթվագոյացնող ունակություն (135,5 °Թ 24 ժամվա ընթացքում) և պրոտեոլիտիկ ակտիվություն (24,8մգ%): Փորձնական մակարդի ազդեցությամբ կաթի մակարդումը տեղի էր ունենում 4,5 ժամվա ընթացքում, որի արդյունքում ստացվում էր բավականին լավ սիներետիկ հատկությամբ խիտ մակարդվածք: Ստացված մակարդն ուներ լավ համ և հոտ:

Բակտերիալ մակարդի բնութագիրը

Ցուցանիշները	Մակարդ լոռի պանրի համար
Թթվությունը 24 ժամ հետո, ⁰ թ	135,5±5,3
Պրոտեոլիզ, մգ%	24,8±1,6
Մակարդման տևողությունը, ժամ	4,5±0,2
Սիներեզիս, %	14,2±0,5
Մակարդվածքի ամրությունը, գ/սմ ²	1,1±0,07
Համ, բալ	5
Ազատ ամինաթթուների ընդհանուր քանակը, մգ%	15,2±0,6
Այդ թվում՝	
Վալին, %	12,53
Գլուտամինաթթու, %	13,48
Լեյցին, %	0,75
Սիրոզին, %	11,60
Ֆենիլալանին, %	15,27
Բնութագրիչ ամինաթթուների հարաբերական պարունակությունը, %	53,63

Մակարդի ազատ ամինաթթուների ընդհանուր քանակը կազմում էր 15,2մգ%, այդ թվում լոռի պանրի համար բնորոշ ազատ ամինաթթուների գումարը կազմում էր դրանց ընդհանուր քանակի 53,63 %-ը:

Ստացված մակարդն օգտագործվում էր շիճկասերի օգտագործմամբ լոռի պանրի հետագա արտադրությունում:

3.3.2 Համասեռացված շիճկասերով և հատուկ ընտրված բակտերիալ մակարդով արտադրված «Լոռի» պանրի հասունացման ուսումնասիրումը

Աշխատանքի նախորդ գլուխներում ապացուցված է աղաջրային պանիրների արտադրությունում շիճկասերի օգտագործման նպատակահարմարությունը, ընտրված են դրա համասեռացման ռեժիմները և կազմված է հատուկ բակտերիալ մակարդ:

Այնուհետև ուսումնասիրվել է բոլոր այդ գործոնների համատեղ ազդեցությունը լոռի պանրի հասունացման գործընթացի և որակի վրա:

Փորձնական պանիրներն արտադրվել են համասեռացված շիճկասերով՝ կաթնայուղի մասնակի փոխարինմամբ: Դրանց արտադրության ժամանակ օգտագործվել են կաթնաթթվային մանրէների հատուկ ընտրված բակտերիալ մակարդներ:

Ստուգիչ է ծառայել ավանդական տեխնոլոգիայով արտադրված «Լոռի» պանիրը:

Այսուսակ 26-ում բերված են փորձնական և ստուգիչ պանիրների արտադրության ժամանակ ընթացող տեխնոլոգիական գործընթացի հիմնական տարբերիչ առանձնահատկությունները:

Այսուսակ 26.

Համասեռացված շիճկասերով արտադրված փորձնական և ստուգիչ պանիրների արտադրության օպտիմալ պարամետրերը

Ցուցանիշներ	Փորձնական պանիր	Ստուգիչ պանիր
Յուղի զանգվածային բաժինը խառնուրդում, %	3,4	3,4
Խառնուրդի թթվությունը, °Թ	20	21
Մակարդման ջերմաստիճանը, °C	35	34
Կալցիումի քլորիդի քանակը, q/100 L	40	30
Պեպսին q/100 կգ	2,5	2,5
Մակարդի քանակը, %	0,6	0,6
Մակարդման տևողությունը, րոպե	32	30
Մակարդվածքի ամրությունը, q/սմ ³	0,6-0,7	0,7-0,9
Հատիկադրման և հատիկի մշակման ընդհանուր տևողությունը, րոպե	72,6	60
Յուղի զանգվածային բաժինը շիճուկում, %	0,36	0,53
Յուղի զանգվածային բաժինը պանրում՝ ինքնամամլումից հետո, %	53,4	52,1
Խոնավության զանգվածային բաժինը պանրում՝ ինքնամամլումից հետո, %	47,16	46,1

Չնայած շիճուկի մեջ յուղի անցման նվազեցման ուղղությամբ տարվող նախնական փորձերի արդյունքները, փորձնական պանիրների համար խառնուրդի յուղի զանգվածային բաժինը մակարդումից առաջ վերցրել ենք նույնը՝ 3,4%:

Նկատի ունենալով, որ շիճկասերի ավելացումը ավելի տևական է դարձնում կաթի շրդանային մակարդումը և վաննայում պանրահատիկի մշակումը՝ դրանց կարգավորման համարկիրառում էինք տարբեր տեխնոլոգիական հնարքներ, որոնք նպաստում էին այդ պրոցեսների արագացմանը:

Կաթի շրդանաթթվային մակարդման ջերմաստիճանը բարձրացվեց 1°C -ով, պանրավաննայի մեջ լցվեց ընդունված չափից ավելի կալցիումի քլորիդի լուծույթ և բակտերիալ մակարդ, երկարացվեց մակարդման տևողությունը: Նման պայմաններում փորձնական տարբերակում հաջողվեց ստանալ մակարդվածք, որն իր ցուցանիշներով մոտ էր ստուգիչ պանրի մակարդվածքին, սակայն ուներ փոքր-ինչ պակաս ամրություն:

Փորձնական պանրի արտադրության ընթացքում 10 րոպեով ավելացավ հատիկադրման և վաննայում պանրի հատիկի մշակման ընդհանուր տևողությունը:

Ստուգիչ տարբերակի պանրի հատիկի մշակման վերջում շիճուկի մեջ յուղի պարունակությունը կազմում էր 0,53 %: Զիամասեռացված շիճկասերով արտադրված պանիրների՝ փորձնականում պանրում այն նվազել էր մինչև 0,36 %, ինչը հաստատեց նախկինում ստացված արդյունքները: Ստուգիչ պանիրներում յուղի վերադասավորումը շիճուկի և մթերքի միջև թույլ տվեց ստանալ պանիրներ, որոնց չոր նյութերում յուղի պարունակությունը գրեթե հավասար է (53,4%՝ ստուգիչ, 52,1%՝ փորձնական պանիրներում):

Ինքնամամլումից հետո փորձնական պանիրների խոնավությունը $1,06\text{ \%}$ -ով ավելի բարձր էր: Պանիրների հասունացման ընթացքում անընդհատ վերահսկվում էին հիմնական մանրէաբանական և կենսաքիմիական պրոցեսները:

Այսուսակ 27-ում բերված է փորձնական և ստուգիչ պանիրներում միկրոֆլորայի ընդհանուր քանակի դինամիկան:

Հասունացման բոլոր փուլերում փորձնական պանիրը պարունակում էր ավելի շատ միկրոֆլորա, քան ստուգիչ պանիրը: Փորձնական պանրում 3 օր հետո միկրոֆլորայի քանակը ստուգիչ պանրի համեմատ ավել էր 1,5 անգամ, միկրոֆլորայի

առավելագույն զարգացման շրջանում (5 օրական) այդ տարբերությունը հավասար էր 1,19-ի: Նույնիսկ հասունացման վերջում փորձնական պանիրներում միկրոֆլորայի քանակն ավել էր 1,33 անգամ:

Աղյուսակ 27.

Միկրոֆլորայի զարգացման դինամիկան փորձնական և ստուգիչ պանիրներում,
մլն /1 գ պանրում

Պանրի հասակը, օր	Փորձնական պանիր	Ստուգիչ պանիր
3	2265,75	1510,5
5	5962,8	5010,8
15	1568,4	1425,8
30	710,7	473,8
45	535,3	245,9
60	176,3	132,6

Միկրոֆլորայի ավելի ակտիվ զարգացումը փորձնական պանիրներում բացատրվում է արտադրության ժամանակ օգտագործվող բակտերիալ մակարդների ուղղորդված ընտրությամբ, ինչպես նաև խոնավության և կաթնաշաքարի ավելի բարձր տոկոսով:

Միկրոֆլորայի առավելագույն զարգացման շրջանում (5 օրական պանիրներ) նրա քանակը հասնում էր 5,9 միլիարդ մանրէ՝ 1 գ պանրի մեջ: Հասունացման ժամանակ միկրոֆլորայի նվազումը փորձնական պանիրներում ընթանում էր ավելի դանդաղ, քան ստուգիչում:

Միկրոֆլորայի մեծ քանակության առկայությունը փորձնական պանրում բացատրվում էր նրանում խոնավության մեծ պարունակությամբ և մակարդի միկրոֆլորայի ակտիվ զարգացմամբ: Դրանցից ելնելով, փորձնական պանիրներում կարելի է սպասել հիմնական կենսաքիմիական գործընթացների ակտիվացում և պանրի հասունացման արագացում: Այդ նպատակով պանիրներում որոշել ենք ընդհանուր լուծելի և ոչ սպիտակուցային լուծելի ազոտի պարունակությունը (աղյուսակ 28):

Ընդհանուր լուծվող ազոտի և ոչ սպիտակուցային ազոտի պարունակությունը
փորձնական և ստուգիչ պանիրներում


Պանիրի հասակը, օր	Ընդհանուր լուծվող ազոտի պարունակությունը				Լուծվող ոչ սպիտակուցային ազոտի պարունակությունը			
	Փորձնական պանիր		Ստուգիչ պանիր		Փորձնական պանիր		Ստուգիչ պանիր	
	100 գ պանրուն՝ σ	ընդհանըն պատճենի %-ը	100 գ պանրուն՝ σ	ընդհանըն պատճենի %-ը	100 գ պանրուն՝ σ	ընդհանըն պատճենի %-ը	100 գ պանրուն՝ σ	ընդհանըն պատճենի %-ը
3	0,371± 0,012	10,76	0,302± 0,009	8,85	0,153± 0,005	4,45	0,126± 0,004	3,68
30	0,621± 0,018	18,27	0,552± 0,016	16,32	0,301± 0,009	8,85	0,255± 0,007	7,45
45	0,698± 0,020	20,85	0,602± 0,018	18,24	0,370± 0,011	11,05	0,322± 0,010	9,42
60	0,731± 0,021	22,15	0,690± 0,021	20,92	0,389± 0,011	11,78	0,352± 0,011	10,68

Թարմ փորձնական պանիրներում արդեն առկա էր լուծելի ազոտի ավելի շատ ֆրակցիաներ: Ընդհանուր լուծելի ազոտը նրանցում ավելի շատ էր 1,91 %-ով, իսկ ոչ սպիտակուցային լուծելի ազոտը՝ 0,77 %-ով: Այդ ֆրակցիաների քանակը փորձնական պանիրներում մեծ էր մնում հասունացման բոլոր փուլերում: Ընդհանուր լուծելի ազոտի հարաբերական քանակը՝ 2 ամսական փորձնական պանրում նմանատիպ ստուգիչ պանրի համեմատությամբ ավելացել էր 5,6 %-ով, իսկ ոչ սպիտակուցային լուծելի ազոտի քանակը՝ 9,5 %-ով:


Պետք է նշել, որ փորձնական պանիրները 45-օրական հասակում պարունակում էին համարյա նույն քանակի ազոտային ֆրակցիաներ, որքան առկա էին 60 օրական ստուգիչ պանիրներում: Ընդհանուր լուծելի ազոտի համար այդ թվերը կազմում էին 0,698 գ 100 գ պանրում կամ ընդհանուր ազոտի 20,85 %-ը և 0,690 գ 100 գ պանրում

կամ ընդհանուր ազոտի 20,92 %-ը: Ոչ լուծելի սպիտակուցային ազոտի համար նրանք ունեին հետևյալ արժեքները՝ 0,370 գ 100 գ պանրում կամ ընդհանուր ազոտի 11,05 %-ը (45 օրական փորձնական պանիր) և 0,352 գ 100 գ պանրում կամ ընդհանուր ազոտի 10,68 %-ը (60 օրական ստուգիչ պանիր):

Պանիրների հասունացման ժամանակ սպիտակուցների քայլայնան բերված վերլուծությունը ցույց է տալիս փորձնական պանիրներում գործընթացի արագացունը ստուգիչների համեմատ (գծ. 5 և 6):



Գծ.5 Լուծվող ազոտի դինամիկան պանիրների հասունացման ընթացքում (% ընդհանուր ազոտի նկատմամբ)



Գծ.6 Լուծվող ոչ սպիտակուցային ազոտի դինամիկան պանիրների հասունացման ընթացքում (% ընդհանուր ազոտի նկատմամբ)


Գծապատկեր 7, 8, 9-ում բերված են տարբեր հասակի (30, 45 և 60 օրական) պանիրներում ազատ ամինաթթուների պարունակությունը:

Փորձնական պանիրները 30 օրական հասակում պարունակում էին 45,84մգ%-ով ավել ազատ ամինաթթուներ ստուգիչ պանրի համեմատությամբ: Արդեն այդ հասակում նրանցում նկատվում էին առանձին ազատ ամինաթթուների պարունակության որոշ տարբերություններ: Տոկոսային հարաբերությամբ փորձնական պանիրներում ավելի շատ էին ֆենիլալանինը, լեյցինը, վալինը և այլն: Արգինինի, տրեոնինի, սերինի, պրոլինի և մեթիոնինի հարաբերական քանակությունը նվազել էր: Լուի պանրին բնորոշ ազատ ամինաթթուների պարունակությունը 30 օրական պանիրներում (լիզին, գլուտամինաթթու, վալին, լեյցին, տիրոզին, ֆենիլալանին) փորձնական տարբերակում կազմում էր ազատ ամինաթթուների ընդհանուր քանակի 51,20 %-ը, իսկ ստուգիչ տարբերակում՝ 42,25 %-ը:

45 օրական հասակում պանիրներում նկատվում էր ազատ ամինաթթուների քանակի ավելացում՝ փորձնական պանիրներում նրանց պարունակությունը ավել էր ստուգիչ պանիրների համեմատությամբ 80,72 մգ%-ով: Հասունացման այդ շրջանում բնորոշ ամինաթթուների քանակը փորձնական պանրում կազմում էր 64,84 մգ%, իսկ ստուգիչում՝ միայն 83,13 մգ%:


60 օրական պանիրներում ազատ ամինաթթուների ընդհանուր պարունակության տարբերությունը արդեն կազմում էր 63,98 մգ%: Զգալի տարբերություններ նկատվեցին ֆենիլալանինի և տիրոզինի կուտակման մեջ, որոնց քանակը փորձնական պանրում զգալիորեն ավելի շատ էր, քան ստուգիչում:

Բնորոշ ազատ ամինաթթուների ընդհանուր պարունակությունը փորձնական պանրում կազմում էր 63,94 %, իսկ ստուգիչում՝ 51,68 %: Գծապատկեր 8; 9 տվյալներից ակնհայտ է դաշնում, որ ազատ ամինաթթուների պարունակությունը պատրաստի մթերքում 45 օրական փորձնական և 60 օրական ստուգիչ պանրում (876,36 և 870,24 մգ%) գրեթե նույնն է:




1. Լիզին
2. Հիստիդին
3. Արգինին
4. Ասպարագինաթթու
5. Տրեոնին
6. Սերին
7. Գլուտամինաթթու
8. Պրոլին
9. Գլիցին
10. Ալանին
11. Վալին
12. Սեթիոնին
13. Իզոլեյցին
14. Լեյցին
15. Տիրոզին
16. Ֆենիլալանին

Գծ. 7 Ազատ ամինաթթուների պարունակությունը 30-օրական փորձնական և ստուգիչ պանիրներում:



- | | | | |
|-------------------|-------------------|--------------|-----------------|
| 1. Լիզին | 5. Տրեոնին | 9. Գլիցին | 13. Իզոլեյցին |
| 2. Հիստիդին | 6. Սերին | 10. Ալանին | 14. Լեյցին |
| 3. Արգինին | 7. Գլուտամինաթթու | 11. Վալին | 15. Տիրոզին |
| 4. Ասպարագինաթթու | 8. Պրոլին | 12. Մեթիոնին | 16. Ֆենիլալանին |

Գծ. 8 Ազատ ամինաթթուների պարունակությունը 60-օրական փորձնական և ստուգիչ պանիրներում:



1. Լիզին
2. Հիստիդին
3. Արգինին
4. Ասպարագինաթթու

5. Տրեոնին
6. Սերին
7. Գլուտամինաթթու
8. Պրոլին

9. Գլիցին
 10. Ալանին
 11. Վալին
 12. Մեթիոնին
13. Իզոլեցին
 14. Լեյցին
 15. Տիրոզին
 16. Ֆենիլալանին

Առանձին ամինաթթուներից փորձնական պանրում զգալիորեն բարձր էր վալինի(1,35 անգամ), տիրոզինի (2,15 անգամ) և ֆենիլալանինի (2,46 անգամ), ինչպես նաևգլուտամինաթթվի, լեցինի և ալանինի պարունակությունը: Նույն մակարդակի վրա էին նաև հիստիդինի, արգինինի և գլիցինի պարունակությունը:

Ելնելով պանիրների ամինաթթվային կազմից, 45 օրական փորձնական պանիրները չեն զիջում 60 օրական ստուգիչ պանիրներին, իսկ նրանցից մի քանիսի քանակով նույնիսկ գերազանցում էին:

Փորձնական պանիրներում ավելի ակտիվ էր ընթանում ցնդող ճարպաթթուների կուտակումը (աղյուսակ 29):

Աղյուսակ 29.

Ցնդող ճարպաթթուների պարունակությունը փորձնական և ստուգիչ պանիրներում,
մգ%

Ցնդող ճարպաթթուներ	Փորձնական պանիր		Ստուգիչ պանիր		
	30 օր	45 օր	30 օր	45 օր	60 օր
Մրջնաթթու	8,18±0,40	9,09±0,45	2,50±0,10	3,77±0,12	6,24±0,30
Քացախաթթու	56,08±2,7	79,63±4,20	26,20±1,2	37,40±1,4	67,90±3,8
Պրոպիոնաթթու	3,14±0,15	5,24±0,27	8,14±0,10	2,78±0,10	4,30±0,21
Կարագաթթու	4,70±0,19	4,84±0,23	2,08±0,10	3,20±0,12	5,90±0,30
Ընդամենը	72,10	98,80	38,92	46,45	84,34

45 օրականում նրանք պարունակում էին ավելի շատ ցնդող ճարպաթթուներ, քան 60 օրական ստուգիչ պանիրը: Առանձին ցնդող ճարպաթթուների պարունակության հարաբերությունը փորձնական և ստուգիչ պանիրներում կազմում էր՝ մրջնաթթվինը՝ 1,45 մգ/%, քացախաթթվինը՝ 1,17 մգ/%, պրոպիոնաթթվինը՝ 1,22 մգ/%, կարագաթթվինը՝ 0,82 մգ/%: Անգամ ցնդող ճարպաթթուների ընդհանուր քանակի համար այդ հարաբերությունը կազմում էր 1,17:

Ճարպաթթուների հարաբերական պարունակությունը պանիրներում բերված է աղյուսակ 30-ում:

Ճարպաթուների պարունակությունը պանիրներում, %-ով ընդհանուր քանակից

Բարձրամոլեկուլյար ճարպաթուներ	Փորձնական պանիր	Ստուգիչ պանիր
Հագեցած		
Կարագաթու	1,70	1,40
Կապրոնաթու	1,30	1,19
Կապրիլաթու	2,53	3,60
Կապրինաթու	3,16	5,27
Լաուրինաթու	3,51	3,43
Միրիստինաթու	10,31	12,26
Պալմիտինաթու	23,99	28,27
Ստեարինաթու	5,80	7,27
Ընդամենը	52,30	62,69
Չհագեցած		
Կապրոլեինաթու	հետքեր	հետքեր
Լաուրոլեինաթու	հետքեր	հետքեր
Միրիստիլեինաթու	4,31	3,61
Պալմիտոլեինաթու	1,53	1,77
Օլեինաթու	32,06	25,46
Լինոլաթու	6,76	4,40
Լինոլենաթու	3,04	2,07
Ընդամենը	47,70	37,3

Փորձնական պանիրների համար բնորոշ է չհագեցած ճարպաթուների պարունակության աճը (47,7 %՝ 37,3 %-ի համեմատությամբ), այդ թվում օլեինաթթվի (32,06 %՝ 25,45 %-ի համեմատությամբ), լինոլաթթվի (6,76 %՝ 4,40 %-ի համեմատությամբ) և լինոլենաթթվի (3,04 %՝ 2,07 %-ի համեմատությամբ): Միևնույն ժամանակ փորձնական պանիրներում ավելի քիչ էին հագեցած ճարպաթուները՝

Վիորձնականում՝ 52,30% , իսկ ստուգիչում 62,19% այդ թվում՝ պալմիտինաթթուն (23,99%՝ 28,27%-ի համեմատությամբ) և միրիստինաթթուն (10,31%՝ 12,26%-ի համեմատությամբ):

Փորձնական պանիրներում ավելի ակտիվորեն էր ընթանում ցնդող բուրավետ միացությունների կուտակումը (աղյուսակ 31): Օրինակ դրանցում պարունակվում էր ավելի շատ էթանոլ, ացետոհին և ացետալդեհիդ: Գումարային առումով այդ միացությունները 45 օրական վիորձնական պանիրներում ավել էին 39,1 %-ով, իսկ 60 օրական ստուգիչ պանիրներում՝ 22,6 %-ով:

Աղյուսակ 31.

Ցնդող բուրավետ նյութերի պարունակությունը պանիրներում, մգ%

Ցնդող բուրավետ նյութեր	Փորձնական պանիր		Ստուգիչ պանիր	
	45 օր	60 օր	45 օր	60 օր
Ացետալդեհիդ	0,81	0,93	0,61	0,68
Պրոպանալ	հետքեր	հետքեր	հետքեր	հետքեր
Ացետոհին	2,97	3,43	2,00	2,58
Էթանոլ	9,38	9,74	6,88	8,23
Դիացետիլ	0,29	0,27	0,25	0,30
Ընդամենը	13,45	14,37	9,74	11,79

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիորձնական պանիրները 45 օրական հասակում իրենց կենսաքիմիական ցուցանիշներով համապատասխանում են հասուն 60 օրական պանիրներին, զգայորոշման գնահատումը անցկացվել է երկու անգամ՝ 45 և 60 օրական հասակում (հավելվածներ 3,4):

Պանիրների որակի գնահատման արդյունքները բերված են աղյուսակ 32-ում և 33-ում:

Աղյուսակ 32.

Պանիրների զգայորոշման գնահատականը 45 օրական հասակում, բալ

Ցուցանիշներ	Փորձնական պանիր	Ստուգիչ պանիր
Համ և հոտ	41,9	39,6
Կոնսիստենցիա	24	23,2
Նկար	8	7,9
Խմորի գույնը	4,6	4,6
Արտաքին տեսքը	10	10
Փաթեթավորումը և մակնշումը	5	5
Ընդամենը	93,5	90,3

Աղյուսակ 33.

Պանիրների զգայորոշման գնահատականը 60 օրական հասակում, բալ

Ցուցանիշներ	Փորձնական պանիր	Ստուգիչ պանիր
Համ և հոտ	41,2	40,1±0,2
Կոնսիստենցիա	23,9	23,1±0,2
Նկար	7,9	7,7
Խմորի գույնը	4,6	4,6
Արտաքին տեսքը	10	10
Փաթեթավորումը և մակնշումը	5	5
Ընդամենը	92,6	90,5

45 օրական փորձնական պանիրները ստացան 3,2 բալով ավելի բարձր բալային գնահատական, քան նույն հասակի ստուգիչ պանիրները: Գնահատականի այդ

տարբերությունը առաջացավ համի և հոտի (2,7 բալով), կոնսիստենցիայի (0,8 բալով) և նկարի (0,1 բալով) ավելի բարձր գնահատականով:

45 օրական փորձնական պանիրները ունեին լավ արտահայտված համ և էլաստիկ կոնսիստենցիա: Ստուգիչ պանիրների համը և հոտը այդ հասակում բավարար արտահայտված չէին, իսկ կոնսիստենցիան փշրվող էր:

Հետագա հասունացումը փոքր-ինչ բարելավեց ստուգիչ պանիրների ցուցանիշները (ընդհանուր առմամբ 0,2 բալով): Բարձրացավ նրանց համի և հոտի արտահայտվածությունը (0,5 բալով), սակայն կոնսիստենցիան դարձավ ավելի խիս և նրա միջին գնահատականը նվազեց 0,1 բալով:

45 օրական փորձնական և 60 օրական ստուգիչ պանիրների համեմատությունը ցույց է տալիս փորձնական պանիրների առավելությունները. համի և հոտի համար՝ նրանց միջին գնահատականները, կազմում էին համապատասխանաբար 41,9 և 40,1 բալ կոնսիստենցիայի համար 24 և 23,1 բալ, նկարի համար 8 և 7,7 բալ:

Այսպիսով՝ հատուկ ընտրված տեղական, բարձր էկոլոգիական ներուժ ունեցող կաթնաթթվային մանրէներից կազմված բակտերիալ մակարդների հետ միասին համասեռացված շիճկասերի օգտագործումը թույլ տվեց ստանալ 45 օրվա ընթացքում հասունացած որակյալ «Լոռի» պանիր:

Լոռի պանիրի արտադրության առաջարկված նոր տեխնոլոգիան ունի հետևյալ առավելությունները՝

- նպաստում է երկրորդական հումքի (յուղագործական կաթ և շիճկասեր) արդյունավետ օգտագործմանը;
- նպաստում է բարձրարժեք կաթնայուղի օգտագործմանը այլ կաթնամթերքների արտադրությունում (թթվասեր, կարագ և այլն) ;
- իջեցնում է պատրաստի մթերքի ինքնարժեքը;
- կրծատում է լոռի աղաջրային պանիրի հասունացման տևողությունը՝ 25 %-ով;
- բարելավում է պանիրի զգայորոշման ցուցանիշները:

Փորձարարական եղանակով մշակված տվյալ տեխնոլոգիան երաշխավորվեց արտադրական պայմաններում փորձարկման:

3.4 Նոր տեխնոլոգիայով «Լոռի» պանրի արտադրությունը արտադրական պայմաններում

Նոր տեխնոլոգիայով «Լոռի» պանրի արտադրվել է «Էլոլա» ՓԲԸ-ում և «Մարիլա» ՍՊԸ-ում :

Պանրի արտադրությունը իրականացվել է հետևյալ հերթականությամբ՝ հումքի ընդունում և նախապատրաստում, կաթի տաքացում և սերզատում, շիճկասերի համասեռացում և պաստերացում, նորմալացված խառնուրդի կազմում, խառնուրդի նախապատրաստումը արտադրության, մակարդում և մակարդվածքի մշակում, պանրի ձևավորում և ինքնամամլում, պանրի աղում և հասունացում, պանրի պահպանում:

